2 20 ՌԵ. — Հոյ. և Հնոյ. պահք: — Յն. Ժ
Մարտիայ, Կոմի. Դոն է Սահպոյ-
նոյ: — Լր. Յիշարայ: հասօրէին
ննջեցէլոյ:

3 21 ՇԲ. — Հոյ. Սրբոց Աւետարանչացն
Մատթէոսի, Մարկոսի. Լու-
կասու և Յովհաննու եւս Հնոյ.
որոց և Ղուկիանոսի քահա-
նային. և սրբոց վկայիցն Տա-
րագոսի. Պրոքոսի. Անդրոնի-
կոսի և Պեղազեայ կուսին:

6⁰ Տար. Գահ. Եիօլա Բ. Կայսեր
Ռուսիոյ:

4 22 Ճ ԿՐԵ. — Հոյ և Հնոյ. Զ. զկնի
Խաչի: Գ. Կերտէ եօթն շաբ-
աթոյ: Հարանիտ:

5 23 ԲԵ. — Հոյ. և Հնոյ. Ղուկիանոսի
հարիւրապետին, և Յովսեփայ
Աստուածաճօրն, և Յովսեփայ
Արեմաթացւոյն, և բարեկա-
մին Քրիստոսի Ղազարու, և
քերց նորա Մարթայի և Մա-
րիամու:

6 24 ԳԵ. — Հոյ. և Հնոյ. Թէոդիտոսի
քահանային և Զենոնի զինա-

10 188

11 185

15 187

11 182

15 180

Լորին, և Մակարայ, Եւդոքս-
եայ և Ռամելայ:

7 25 ԳԵ. — Հոյ. պահք: — Հնոյ. պահք:
Եւ օր նահատակութեան Կո-
միտասայ վկային:

Ⓞ Լր. Լս ժ. 8, ր. 38.
Խառնակ օր:

8 26 ԵԵ. — Հոյ. Սրբոց Խարիթեանց,
Եւ վկայիցն Արտեմեայ և
Քրիստափորի, և երկուց կա-
նանցն Կարինիկեայ և Ակիւ-
լինեայ: — Հնոյ. Խարիթեանց
մարտիրոսաց և Արտեմեայ
վկային: — Յն. Գեօրգիայ Կո-
մի: — Տճ. Գառն. Գառն. քա-
նաւոր:

9 27 ՌԵ. — Հոյ. և Հնոյ. պահք:
10 28 ՇԲ. — Հոյ. Սրբոց Երկոտասան վար
դապետացն Ռեթէոսի, Գիոնէ-
սիոսի, Սեղբեստրոսի, Աթա-
նասի, Կիւրղի Երուսաղիմաց-
ւոյն, Եփրեմի Խուրին Ատուրոյ,
Բարսղի Կեսարացւոյն, Գրիգո-
րի Նիւսացւոյն, Գրիգորի Աս-
տուածաբանին, Եզրիփանու
Կիպրացւոյն, Յովհաննու Ռակե-
բերանին և Կիւրղի Աղեքսան-
դրացւոյն: — Հնոյ. Դեմետրեայ

10 187

17 1

17 5
18 5

վկային և Բասիլիսկոսի քահանային:

11 29 * ԿԻՐ. — Հո. և Հհո. Է. զկնի Խաչի, Գիւտ Խաչ, Ե իւրախ եօնն շաբաթոց: Հարստի:

12 30 ԲԵ. — Հո. և Հհո. Անաստասայ քահանային, և Վարոսի, և Թէոդորիտեայ և որդւոց նորա, և որոց ընդ նոսա կատարեցան:

13 31 ԳԵ. — Հո. Սրբոց Հիպերիբեանց մարտիրոսաց, որք ի Սամուսատ կատարեցան. և սրբոցն Սեւերիանոսի Սերաստացւոյն, և Բարեւլայ ձերոյն և ութսուն և չորից աշակերտաց նորին: — Հհո. Հիպերիբեանց մարտիրոսաց:



ՆՈՅՏԵՄԵՐ

ՈՐ 30

ՏՃ. Թըշրիկի սանկի

14 1 ԳԵ. — Հո և Հհո. պահք: Յն. Կալ Տոյի և Դաթանսի, Բարեբոսաց և նն Բիւլսիւսի տնայ ծնեաց:

© Վր. Բռ. Ժ. 16, ր. 11. Հողմ և անձրել

15 2 ԵՇ. — Հո. Սրբոյն Յովհաննու Ոսկերանին: — Հհո. Սեւերիանոսի Սերաստացւոյն, և Բարեւլայ ձերոյն և ութսուն և չորից աշակերտաց նորին:

37⁰ Տար. Գահ. Քրիսթիան Թ. Թագաւորին Տանինարբայի:

16 3 ՈՒՐ. — Հո. և Հհո. պահք:

17 4 ԵՐ. — Հո. Ամենայն սրբոց հնոց և նորոց, յայտից և անյայտից:

— Հնչ Բարադամու Անտիոքացւոյն, և եօթն մանկանցն Եփեսոսի:

18 5 * ԿԵՐ. — Հնչ. և Հնչ. Ը. զկնի Խաչի: Զ. Կէրալէ եօթն շաբաթոց: Հարանիւ:

19 6 ԲԵ — Հնչ. և Հնչ. Ստեփանոսի Հռովմայ հայրապետին, և քահանայից և սարկաւազաց և ժողովրդոց: Տօմ. Տրէ, օր 30. — Տճ Միբաճ Կէտի:

20 7 ԳԵ. — Հնչ. և Հնչ. Ակիփսիմեայ եպիսկոպոսին և Յովսեփայ քահանային, Այիաթալայ սարկաւազին և Պղատանի վկային:

21 8 ԳԵ. — Հնչ. և Հնչ. պահար. — Յնի Միտայելի հրեշտակապետին և Կիսայի երկնային զօրոց: — Լր. Ընչայոն Սբ. Առաքաւանքին:

22 9 ԵՇ. — Հնչ. և Հնչ. Սրբոց Հայրապետացն Մեսրոփանոսի Աղեքսանդրոսի և Պողոսի Խոստովանողին, և սրբոց նօտարացն Մարկիանոսի և Մարտիրոսի: Յայսմ, Տրէ, օր 30. — Լր. Զիւլիւայ Կաթին:

● Են. Լու. Ժ. 16, ր. 53:

Խառնակ օր

23 10 ԽԵ. — Հնչ. և Հնչ. պահար. — Տճ. Շապան, օր 30. — Հր. Քաղէ, օր 30.

○ յԱղեղնաւորն, Ժ. 3, ր. 35:
Տճ. Պարճի Գալս:

24 11 ԵՐ. — Հնչ. և Հնչ. Սրբոց Հրեշտակապետացն Գաբրիելի և Միքայելի, և ամենայն երկնային զօրաց:

25 12 * ԿԵՐ. — Հնչ. և Հնչ. Թ. զկնի Խաչի: Ե. Կէրալէ եօթն շաբաթոց: Հարանիւ: — Յն. Յովհաննէս աղբաբէն: Տօն է Կերթոց: — Լր. Կարաբէնեայ Կաթին:

26 13 ԲԵ. — Հնչ. և Հնչ. Սրբոցն Մեղիտոսի Անտիոքայ հայրապետին, և Մինասայ Եգիպտացւոյն, և յիւս Մեղիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային և Շինու սարկաւազին: — Յն. Յովհաննէս Ուլիբերանին:

27 14 ԳԵ. — Հնչ. Գեմետրեայ վկային, և Բասիլիսկոսի քահանային: — Հնչ. Յովհաննու Ոսկերերանին: Յն. Փիլիպպոսի առաքելոյն, և Բարեկէնդանի առաքելոյն: Կոհոց Ծննդեանն Քրիստոսի:

28 15 ԳԵ. — Հնչ. և Հնչ. պահար. — Յն.

Սկզբն Կարսանօրեայ պահոց
Ծննդեանն Քրիստոսի:

29 16

ԵՇ. — Հց. և Հհց. Գուրխասայ
Սամուելասայ, Աբիրայ սար-
կաւագին, Ռոմանոսի միայնա-
կեցին, Մանկանն խոստովանո-
ղի, և Հիւսիքոսի զինաւորին:
Ա. Համիրայ, օր 30: — Յն.
Մարթիսի Եւրաբանդին:

Կ 55

30 17

ՌԵ. — Հց. և Հհց. պահք: — Լր.
Անդրէի Կարսեցի:

Լ 55

Յ Առ. Բռ. ժ. 00, ր. 28:

Պարզ և ցուրտ

1 18

ՇԲ. — Հց. Սրբոց առաքելոցն
Անդրէի և Փիլիպոսի. — Հհց.
Փիլիպոսի առաքելոյն: —
Լր. Գեղարթի և Մարտիրոսի
խոսին:

Գ 55

2 19

✠ ԿԲ. — Հց. և Հհց ժ զկնի
Խաչի: Յիսնակաց բարեկեն-
դան. — Լր. Աստուծոյն Կարսի
Գալարեան. որ է սկզբն Կարսոց
պահոց Ծննդեանն Քրիստոսի:

Կ 50

54⁰ Տար. Գտն. Իրանն Եօզէմ Ա.
Կայսեր Աւստրոյ-Հունգարիոյ:

3 20

ԲՇ. — Հց. և Հհց. Ա. օր պահոց
Յիսնակաց:

Կ 57

4 21

ԳՇ. — Հցի և Հհցի Բ. օր պահոց
Յիսն. Եւ ընծ պղուծն Որ. Աս-
տուածածնի ի տաճարն:

Կ 57

5 22

ԳՇ. — Հց. և Հհց. Գ. օր պահոց
Յիսնակաց:

Կ 58

6 23

ԵՇ. — Հց. և Հհց. Ե. օր պահոց
Յիսն. Ըջբանդ. — Տճ. Եւրաբ-
արեօտի-ժ-Ֆարսանասու:

Կ 59

⊕ Լր. Լս. ժ. 20, ր. 12:

Յրտաբեր հողմունք

7 24

ՌԵ. — Հց. և Հհց. Զ. օր պահոց
Յիսն. — Լր. Սրբոյն Աստուծոսի:
— Տճ. Պերարի Կիսի-ժ:

Կ 50

8 25

ՇԲ. — Հց. Սրբոցն Գրիգորի և Նի-
կողայոսի սքանչելագործ Հայ-
րապետացն, և միւս Նիկողա-
յոսի Հայրապետին, և Միւսո-
նայ եպիսկոպոսին ևս Հհց. որոց
և Կղեմայ Հայրապետին և Բա-
զարատայ Տոռոմենայ եպիս-
կոպոսին և Գրիգորի Աղլա-
զանդացւոյն: — Յն. Նեոքա-
րեանայ խոսին: — Լր. Յղարթի-
սուրբ Աստուծոսի յԱնուշի:

Կ 51

59⁰ Տար. Ծննդեանն Օգոստափառ
ՍՈՒԼԹԱՆ ՉԱՄԻՏ Բ.

Կայսեր Թուրքիոյ:

9 26 ✠ ԿԻՐ. — Հց. և Հհց. Ա. Յիսն. 17 25
Հարանէի:

10 27 ԲԵ. — Հց. և Հհց. Սբբոց Կոլոսա- 18 25
նացն Յուլիանեայ և Վասի-
լուհայ:

35⁰ ՏԱՐ. Գահ. Լէորոլս Բ. Թագ. 19 25
Պելիզայի:

11 28 ԳԵ. — Հց. Սբբոցն Ղուկասեանոսի 19 25
քահանային, և Տարագրոսի.
Պրորոսի, Անդրոնիկոսի, Ռոնսե-
մայ, և այլոց աշակերտացն
սբբոցն Պողոսի: — Հհց. Սբբոց
առաքելոցն Յակոբայ և Շմա-
ւոնի:

12 29 ԳԵ. — Հց. և Հհց. Պահք: 20 20

13 30 ԵՇ. — Հց. Սբբոցն Կղեմայ հայ- 21 27
րապետին, և Բագարատայ Տո-
ւումենայ եպիսկոպոսին: — Հհց
Գենարիոսի եպիսկոպոսին, և
Մերկիւռիոսի զինաւորին, և
Յակովկայ և Իրաւափառայ,
Եւ Մինասայ, Երմոգինեայ և
Փրաբոսի, և կամաւոր աղ-
քատացն Յովհաննու և Ալեք-
սիանոսի: — Յն՛ Սնդրէի արա-
տելոյն: — Լր Լսուէյ Կոստան-
պոլստանէն ի ցաւոյ ալայ:



ԴԵԿՏԵՄԲԵՐ
ՈՐ 31

ՏՃ. Քեսանուանի կվվեղ

14 1 ՈՒՐ. — Հց. և Հհց. պահք: — Յն. 25 27
Նստաւայ Տարգարէին:

Ը Վր. Քն. Ժ. 10, ր. 26.
Խառնակ օղ

15 2 ԵՐ. — Հց՛ Սբբոց առաքելոցն և 25 28
առաջին լուսաւորչացն Թա-
ղէոսի և Բարդուղիմէոսի: —
Հհց. Անդրէի առաքելոյն: —
Յն. Այբալուսայ Տարգարէին:

16 3 ✠ ԿԻՐ. — Հց. և Հհց. Բ. Յիսն. 25 29
Հարանէի: — Յն. Սոսանէայ Տար-
գարէին:

17 4 ԲԵ. — Հց. Սբբոցն Գենարիոսի ե- 20 20
պիսկոպոսին, և Մերկերիոսի
զինաւորին, և Յակովկայ և

Իրաւ ամառայ. — Հնչ. Սրբոց
Հարցն Եգիպտացոց՝ Պօղոսի,
Պօղայ, Մակարայ, Եւագրի,
Յովհաննու Գրեցւոյն, Յով-
հաննու Կարճաճասակին, Նե-
ղոսի, Արսենի, Սիւրանու, Դա-
նիէի, Սրապիոնի, Մակարիոսի,
Պիմենի, և այլոց սրբոց հարցի:
Յն՛ի վաւարեայ, իստին, պաշ-
պանին ի վրանքե շաղին: — Հր.

18 5 ԳԵ. — Հչ. Նախազկայ և ի Գրիս 57 21
տոս հաւատացեալ անգրա-
նիկ թագաւորին սրբոյն Աբ-
գարու. — Հնչ. Սրբոց առա-
քելոցն Բարդուղիմէոսի և Յու-
դայի: — Յն՛ի Հօրն Սբառայ:

19 6 ԳԵ. — Հչ և Հնչ. Պահջբ: Տօմ. 57 25
Քաղցրի, օր 30. — Յն՛ի Նէի-
ղայոսի հայրապետին, պաշտպանին
նաւաւարայ:

Տօն անուան Նիփօլա Բ. կայսեր
Ռուսիայ:

20 7 ԵՇ. — Հչ. Սրբոց հարցն Եգիպ 58 25
տացոց Պօղոսի, Պօղայ, Մա-
կարայ, Եւագրի, Յովհաննու
Գրեցւոյն, Յովհաննու կար-
ճաճասակին, Նեղոսի, Արսենի,

Սիւրանու, Դանիէի, Սրապիո-
նի, Մակարիոսի, Պիմէնի և այ-
լոց սրբոց հարցի: — Հնչ. Նիկո-
ղայոսի Զմիւռնացւոյ սքանչե-
լագործ հայրապետին:

21 8 ՌԻՐ. — Հչ և Հնչ. Պահջբ. — Լր. 59 22
Թախտի արատելուն:

22 9 ԵՐ. — Հչի և Հնչի ՅղուԹիւն 50 20
Սբ. Աստուածածնի Սննայէ,
Յայսմ. Քաղոց, օր 30: —
Զմեռնամար և արեւարար յայ-
նեղէր. յերեկ իսկ երկարել և
գեղերը իարժանալ. — Տճ. Էլէկէ
երպան. արաջին օր Կարանօր-
եայ Ա. Ժանին յՅերան. որ ի Կար-
բը: Կիւն յէօնիօն ֆար-
լնանալ:

● Մն. Լս. Ժ. 1, ր. 27:

Յրտալին աւուրք

© յԱյծեղցիւրն, Ժ. 16, ր. 17:
Տճ. Պուրնի ձէտի:

23 10 * ԿԻՐ. — Հչ. և Հնչ. Գ. Յիւն: 1 27
Սբ. Յակարայ բարեկենդան: —
Տճ. Բաժպան, օր 29: — Հր. Թե-
բեթ. օր 29:

24 11 ԲԵ. — Հչ. Պահջբ. Սրբոց Մինասայ, 5 27
Երմոգինեայ, և Գրարոսի, և կա-

մաւոր աղքատացն Յովհաննու
և Ալեքսիանոսի — Հնչ. Պահչք:
Եւստաւատիոսի, Օգսենտիոսի,
Եւգինէոսի, Ուրեստեսի և Մար-
գարիոսի:

25 12 ԳԵ. — Հչ. Պահչք: Սրբոցն Կուռ-
նելիոսի հարիւրապետին, և
Շմաւոնի ազգականին քրիս-
տոսի, և վկայիցն՝ սրբ յարե-
ւելլս կատարեցան: — Հնչ. Իգ-
նատիոսի աստուածազգեսց
հայրապետին, Եւ Թէոպոմպայ
եպիսկոպոսին, և Թէոֆլայ վկա-
յին, և չորից զինուորացն՝ Բա-
ստոսի, Եւսեբի, Եւտիբի և Բա-
սիլիդեայ: — Լրդ Ծննդ
Տեառն Յիսուսի: — Յնդ Սպիտ-
րոնի եպիսկոպոսին:

26 13 ԳԵ. — Հչ. և Հնչ. Պահչք: — Լր.
Սրեպիանոսի նախաձային:

55⁰ Տար Ծննդ. Եօրկիոս Ա.
Թագ. Յունաստանի:

27 14 ԵՇ. — Հչ. Սրբոցն Եւստրատիո-
սի, Օգսենտիոսի, Ուրեստեսի և
Մարգարիոսի: — Հնչ. Ադդէի
հայրապետին և Աբգարու
Թագաւորին: — Լր. Յովհաննոս
Երեւոյսեանի:

28 15 ԵՇ. — Հչ. և Հնչ. Պահչք: — Լր.
Մանուէլն Բեթլէհէմի:

29 16 ԵՇ. — Հչ. և Հնչ. Սրբոցն Յակով-
բայ Մաքրոսի հայրապետին
(պաշտպանին ի մահտարածա-
մէ), և Մարուգէի ճգնաւորին,
և Մելիտոսի եպիսկոպոսին: Ա.
Արամ, օր 30:

Չ Առ, Բռ, Ժ, 10, ր. 41.
Ձիւնախառն անձրեւ

30 17 Խ ԿԵՐ. — Հչ, Գ. Յիսն, Հարսանի:
— Հնչ. Բարեկեդան Ծննդ-
եանն Քրիստոսի: — Յն. Գա-
նիէլէ Ժարգարէին:

31 18 ԵՇ. — Հչ Սրբոց հայրապետացն
Իգնատիոսի և Ադդէի, և Մա-
րու Թայի եպիսկոպոսին: — Հնչ.
Ա. օր պահոց Ծննդեան: — Լր.
Սեղէմարարսի Համփայ հայրա-
պետին:

1 19 ԳԵ. — Հչ. Սրբոցն Թէոպոմպայ
եպիսկոպոսին, և Թէոֆլայ վկա-
յին և չորից զինուորացն՝ Բա-
ստոսի, Եւսեբի, Եւտիբի և Բա-
սիլիդեայ: — Հնչ Բ. օր պահոց
Ծննդեան: — Լր. Յունաստան
արեւմտեան 1901 թաւախնին, և
ԵՇ. Կնորէնսեան Տեառն: —

Հր. Ծով, Լասն պաշարման Երս-
աստի Ի Նախագործարանսրայ:

2 20 ԴԵ. — Հց. Պահք: — Հհց. Գ. օր 11 07
պահոց Ծննդեան:

3 21 ԵՇ. — Հց. Սրբոց կուսանացն Ին- 15 08
դոսի և Գոմնայի, և Գղերիկոսի
քահանային. և երկուց բիւ-
րուցն: — Հհց. Գ. օր պահոց
Ծննդեան:

4 22 ԸԻՐ. — Հց. Պահք: — Հհց. Ե. օր 15 08
պահոց Ծննդեան:

5 23 ԵՐ. — Հց. Սրբոցի Գաթի մար- 15 09
գարեին և Յակոբայ առաքե-
լոյն. եւս Հհց. որոց և 2 օր
պահոց Ծննդեան:

⊕ Լր. Լս. Ժ. 9, ր. 14.
Հողմ և անձրև:

6 24 ✠ ԿԻՐ. — Հց. Ե. Յիսն: — Հհց. 10 70
Ե. օր պահոց Ծննդեան, և
ճրագարոց Ծննդեանն Գրիստո-
սի. եւս Յն: — Լր. Յայրնու-
թիւն Տեառն:

7 25 ԲԵ. — Հց Սրբոցն Ստեփանոսի 17 71
նախասարկաւազին և առաջին
մարտիրոսին. — Հհց. Ժ Ծնունդ
Տեառն Յիսուսի Գրիստոսի, ևս
Յն. Ժ: — Լր. Ժ: — Լր. Ժ: — Լր. Ժ:
— Լր. Ժ: — Լր. Ժ: — Լր. Ժ:

8 26 ԳԵ. — Հց. Սրբոց առաքելոցն 17 75
Պետրոսի և Պօղոսի. — Հհց. Բ.
օր Ծննդեան, և Ստեփանոսի
նախավային:

9 27 ԳԵ. — Հց. Պահք: Հհց. Գ. օր 18 75
Ծննդեան եւս Յն. Ժ. որոց և
Սրեթանայի նախավային:

22⁰ Տար. Գահ. Ուսպերօ Ա.
Թագ. Իսպիլոյ:

10 28 ԵՇ. — Հց. Սրբոց որդւոցն որոտ- 19 75
ման Յակոբայ առաքելոյն, և
Յովհաննու աւետարանչին,
Բարեկենդան պահոց Ծննդ: —
Հհց. Գ. օր Ծննդեան: Եւ գրէ
Խաւօր առաքելոցն Պետրոսի
և Պօղոսի:

11 29 ԸԻՐ. — Հց. Պահք: — Հհց. Ե. օր 50 70
Ծննդեան:


12 30 ԵՐ. — Հց. Ա. օր պահոց Ծննդ: 1
Եւս բոցն Բարսի Հայրապե-
տին, և եղբոր նորա Գրիգորի
Նիւսացւոյն, Սեղբատրոսի
Հոռովայ Հայրապետին և Աբ-
բայ Եփրեմի Խուրին Ատուրոյ:
— Հհց. 2. օր Ծննդեան. Եւ
որդւոցն որոտման Յակոբայ
առաքելոյն, և Յովհաննու ա-
ւետարանչին:

13 31

✠ ԿԻՐ. — ՀԳ. Զ. ՅԻՆԻ. Բ. ՕՐ ԿՂ ԴԴ
զահոց Ծննդեան. — ՀԿԳ. Է ՕՐ
Ծննդեան.

© Վր. Քո. Ժ. 5, ր. 17.

Ցրտաբեր և փոփոխական
աւուրք.



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԲ

ԵՐԵՒԵԼԻ ԱՆՑԻՑ ԻՆՉ ԱՇԽԱՐՀԻ

Ի ստեղծմանէ աշխարհի մինչեւ ցայժմ են աւր	7325
Ի ջրնեղեղէ	5063
Ի գիւտայ ապակոյ	3540
Ի շինութենէ Բիւզանդիոն քաղքի	3144
Ի ՇՄՆՆՂԵՆԷ ՔՐԻՍՏՈՍԻ	1900
Ի նահասակութենէ Թաղէոսի առաքելոյն եւ Սանդիսոյ կուսին	1852
Ի ծննդենէ Ս. Գրիգոր Լուսաւորչի	1643
Ի լուսաւորութենէ Հայոց Ի ձեռն Գրի- գորի Լուսաւորչի	1597
Ի շինութենէ Ս. Էջմիածնի, ուր հաստատ- եալ կայ Հայրապետութիւն ամենայն Հայոց	1596
Ի տեղեւանի ժողովոյն Նիկիոյ	1575
Ի գիւտայ Խաչին Քրիստոսի յերուսաղէմ ի Հեղինեայ թագուհոյ	1573
Ի շինութենէ Կ. Պոլսոյ	1571
Ի տեղեւանի ժողովոյն Կ. Պոլսոյ	1519
Ի գիւտայ Հայերէն այբուբենից Ի ձեռն Մեսրոպայ	1464
Ի տեղեւանի ժողովոյն Եփեսոսի	1469
Ի թարգմանութենէ Ասուածաւունչ գրոց ի Հայ	1467
Ի շինութենէ տմարին Հայոց	1349
Ի յայտնելոյ Ս. Խաչին Ի Վարազայ	1247

ՀԱՅՈՑ	ՀՈՒՎԱԼԱՅ.	ՏԱՃԿԱՅ	ԱԶԱՐԻԱՅԻ	ՀՈՒԻՑ
Տառաարդ 30	Յոնուար 31	Չամա 30	Քերի 30	
Հողի 30	Փետ. 28, 29	Ադամ 30	Խնու 29, 30	
Սահմի 30	Մարտ 31	Շքաք 30	Քառղել 29, 30	
Տէ 30	Ապրիլ 30	Տախայ 30	Քէրէք 29	
Քաղոց 30	Մայիս 31	Ղամառ 30	Աէքաք 30	
Արաց 30	Յունիս 30	Տաքար 30	Ադար 29, 30	
Մեհիկան 30	Յուլիս 31	Քիրայ 30	Վէ ադար 29	
Արեգ 30	Օգոստոս 31	Գամայ 30	Տիսան 30	
Այնկան 30	Սեպտեմ. 30	Համիրայ 30	Եառ 29	
Մարերի 30	Հոկտեմ. 31	Արամ 30	Սիլան 30	
Մարգաց 30	Նոյեմբեր 30	Ովդան 30	Քամուզ 29	
Հոտից 30	Դեկտեմբեր 31	Տիրն. 30, 31	Աբ 30	
Աւելեաց 5, 6		Աւելեաց 5	Իլուլ 29	

Ի սկզբնաւորութենէ հօր թագաւորութեանն Տանկաց յՕսմանայ Առաջնոյ	600
Ի գիւսոյ կողմնացուցին	598
Ի գիւսոյ վառօղին	574
Ի գիւսոյ թնդանօթին	520
Ի գիւսոյ սպագր. Ի Գերմանիա	460
Ի տիրելոյ Օսմանեանց Կ. Պոլսոյ Ի Սուլթան Մեհեմետէ Բ.է	447
Ի գիւսոյ Ամերիկայի	408
Ի գիւսոյ անուանոր ժամացուցի	399
Ի գիւսոյ շոգեաւրժ մեհենայից	210
Ի գիւսոյ օդապարիկ զնետն	118
Ի գիւսոյ նշանացի հեռագրին	108
Ի գիւսոյ շոգեմալին Ի Ֆրանսա	105
Ի գիւսոյ պատուասի մարմնոյ	100
Ի գիւսոյ վիմագրութեան	98
Ի հաստատութենէ Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցին Հայոց որ յԵթէի-Գուլէ Պէզնեան Յարութիւն Ամիրայէ	70
Ի մահուանէ Պէզնեան Յարութիւն Ամիրայի	66
Ի հաստատութենէ Բարանթինայի	62
Ի գիւսոյ լուսանկարի	61
Ի հաստատութենէ Օսմանեան օրէնսդրութեան Ի Կիւլիանէ	61
Ի գիւսոյ Ելեհրական հեռագրութեան	51
Ի բացմանէ պարանոցին Սիւէիքի	31
Ի բացմանէ Արեւելեան Որբանոցին Ի Պրուսա	25
Ի բացմանէ պարանոցին Կորնթոսի	7

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱՐԱՐԱՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՅԻ
ԱՐԵԻԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ

1900

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ



ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼԹԱՆՔ

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՐՍՈՒԹԵԱՆ

	Թւական Գահալ Հիշրէի՛ Բրտար.	
1. Օսման Ա. Ղազի	699	1299
2. Օրխան Ա. Ղազի	726	1327
3. Մուրաճ Ա. Ղազի	761	1360
4. Պայազիս Ա. Երլսրբո՛	791	1389
5. Մէհեմմէճ Ա. Չէլէպի	816	1313
6. Մուրաճ Բ. Ղազի	824	1421
7. Մէհեմմէճ Բ. Ֆաթիհ	855	1451
8. Պայազիս Բ. Ղազի	886	1481
9. Սէլիմ Ա. Եավուզ	918	1512
10. Սիւլէյման Ա. Գանունի	926	1520
11. Սէլիմ Բ. Ղազի	974	1566
12. Մուրաճ Գ. Ղազի	983	1574

13.	ՄԷՏԷՄԷՏ Գ. Ղազի	1003	1595
14.	ԱՏԷՏ Ա. Ղազի	1012	1603
15.	ՄՈՍԲԱՃԱ Ա.	1026	1617
16.	ՕՍՄԱՆ Բ. ԿԷՆՆ	1028	1618
17.	ՄՈՒՐԱՏ Գ. Ղազի	1032	1622
18.	ԻԱԳՐԱՏԻՄ Ա.	1049	1640
19.	ՄԷՏԷՄԷՏ Գ. Ղազի	1058	1648
20.	ՍԻՒԼԵՄԱՆ Բ.	1099	1687
21.	ԱՏԷՏ Բ.	1102	1691
22.	ՄՈՍԲԱՃԱ Բ.	1106	1695
23.	ԱՏԷՏ Գ. Ղազի	1115	1702
24.	ՄԱՏԻՄՈՍ Ա. Ղազի	1143	1730
25.	ՕՍՄԱՆ Գ.	1168	1754
26.	ՄՈՍԲԱՃԱ Գ. Ղազի	1171	1757
27.	ԱՎՏԻՒԼ ՀԱՄԻՏ Ա. Ղազի	1187	1773
28.	ՍԵԼԻՄ Գ. Ղազի	1203	1789
29.	ՄՈՍԲԱՃԱ Գ.	1222	1807
30.	ՄՈՍԲԱՃԱ Բ. ԱՏԻԼ	1223	1808
31.	ԱՎՏԻՒԼ ՄԷՏԻՏ Ա. Ղազի	1255	1839



Ս Ո Ւ Լ Թ Ա Ն
ԱՎՏԻՒԼ ՀԱՄԻՏ Բ.

ԽԱՆ ՂԱԶԻ

ԲԱՐԵՆՆԱՄ ԻՆՔՆԱԿԱԼ

34^{րդ} Կայսր Օսմանեան հարսու-
թեան եւ 28^{րդ} Կայսր յառմանէ Կոս-
տանդնուպոլսոյ, որդի Սուլթան
Աւսթիւլ Մէճիտ Խանի, ծնեալ ի 16
ապրիլ 1258 (10/22 սեպտեմբեր
1842), գահակալէ ի 11 ապրիլ
1293 (19/31 օգոստոս 1876) .

ԱՒԱԳԱՆԻ ԿԱՅՏԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

Մեծ հրամանատար (Միւսէյն Հիւմայուն միւլեթի)
— **ՂԱԶԻ ՕՍՄԱՆ ՓԱՇԱ:**

Մեծ ներքինապետ (Տար-իւս-սաասէթ իււ-շէրիձէ
աղապ) — **ՂԱՆԻ ԱՂԱ:**

Մասակարար կայսերական ընտանեաց (Հարէմի
Հիւմայուն մէսարիձաթ նազրըր եւլն.) — **ՀԱՅԻ
ԱՔԻՑ ԷՅԷՆՏԻ:**

Առաջին Սենեկապետ (Սեր գուրէնայր Հազրէթի
Շէհրիեարի) — **ՀԱՅԻ ԱԼԻ ՊԷՑ:**

Երկրորդ Սենեկապետ — **ՆՈՒՐԻ ՓԱՇԱ:**

Առաջին քարտուղար (Մապէյնը Հիւմայուն պաւ
հեաթիպի) — **ՀԱՍԱՆ ԹԱՆՍՆԵ ՊԷՑ:**

Նախարար կայսերական գանձուն (Խազինէի
Խասսաի Շահանէ նազրըր) — **ՍԱԳՂԶ ՅՈՎ-
ՀԱՆՆԷՍ ԷՅԷՆՏԻ:**

Առաջին Թիկնապահ (Տամաս վէ Սեր եսվէր
Հազրէթի Շէհրիեարի) — **ՄԷՀՄԷՏ ՓԱՇԱ:**

Առաջին Աղոթասաց (Իմամը եվվէ Հազրէթի Շէհ-
րիեարի) — **ՐԱՇԻՏ ԷՅԷՆՏԻ:**

Մեծ Արարողապետ եւ կայս. քարզման (Թէրի-
ձաթըր ումուլիյէ նազրըր վէ Տիվանը Հիւմայուն
թէրնէմանը) — **ՄԻՆՆԻՐ ՓԱՇԱ:**

Բժեկապետ կայսեր (Սեր քապիպը Հազրէթի Շէհ-
րիեարի) — **ՄԱՎՐՅԷՆԻ ՓԱՇԱ:**

Անձնական գրագիր (Քեաթիպի խուսուսի Հազրէթի
Շէհրիեարի) — **ՀԻՒՍԷՏԻՆ ՔԵԱԶԻՄ ՊԷՑ:**

Հրամանատար պալատականաց եւ նուազածուաց
պալատան (Խասէմէի խասսա վէ Միւլիգայի
Հիւմայուն ձէրիզի) — **ՍԻՆԷՏՄԱՆ ՓԱՇԱ:**

Բ. Թիկնապահ (Մայէթի Շահանէ էրհանի հար-
պիյէ միւլեթի) — **ՇԱՔԻՐ ՓԱՇԱ:**

Ախտապետ Արհունի (Սթապըր ամիւրէ միսիթի) —
ՅԱՆԳ ՓԱՇԱ:

— —

ՆԱԽԱՐԱՐՔ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԻԱՆ

Մեծ Եպարհոս (Սասրազամ) — **ԽԱԼԻԼ ՐԻՑԱՌ
ՓԱՇԱ:**

Կրօնապետ (Շէյխ-իւլ-խլամ) — **ՃԷՄԱԼԷՏՏԻՆ
ԷՅԷՆՏԻ:**

Նախարար Արդարութեան եւ Կրօնից (Ասիյէ վէ
Մէզանիպ նազրըր) — **ԱՊՏԻՈՒ ԲԱՀՄԱՆ ՓԱՇԱ:**

Սպարապետ (Սերասէր) — **ՐԻԶԱ ՓԱՇԱ:**

Նախարար Ծովային գործոց (Պահրիյէ նազրըր) —
ՀԱՍԱՆ ՀԻՒՍՆԻ ՓԱՇԱ:

Նախագահ Պետական Խորհրդոյ (Շուրայըր Տէվէթ
րէիսի) — **ՍԱՅԻՏ ՓԱՇԱ:**

Նախարար Արսաբին գործոց (Խարինիյէ նագրր) — ԹԷՎՅԻԳ ՓԱՇԱ:

Նախարար Ներին գործոց (Տախիլիյէ նագրր) — ՄԷՄՏՈՒՀ ՓԱՇԱ:

Վերաստույ Թնդանօթարանի (Թօփհանէ միւ-
չիրի) — ԶԷՔԻ ՓԱՇԱ:

Նախարար կրօնապատկան կալուածոց (Էվգաճր
Հիւմայուն նագրր) — ՂԱԼԻՊ ՓԱՇԱ:

Նախարար Հանրային կրթութան (Մէարիճ նա-
գրր) — ԶԻՆՃՏԻ ՓԱՇԱ:

Նախարար Առեւտրական եւ Հանրօրոյս շինու-
թեանց (Թինարէթ վէ Նաճա'ա նագրր) — ԶԷՂՆԻ ՓԱՇԱ:

Նախարար Ելեւմտական գործոց (Մալիյէ նագրր) — ԲԷՇԱՏ ՊԷՑ:

Խորհրդական Եպարհոսութան (Միւսթէար
Սասր Ալի) — ԹԷՎՅԻԳ ՓԱՇԱ:

ՄԵՄ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ

Քաղաքապետ Մայրաքաղաքիս (Շէհիր էմինի) — ԲԸՏՎԱՆ ՓԱՇԱ:

Նախարար Ոստիկանութան (Զապրիյէ նագրր) — ՇԷՅԻԳ ՊԷՑ:

Վերաստույ Նաւահանգսի (Լիման րէխի) — ՍԱՄԻ ՓԱՇԱ:

Վերաստույ Մաքսանց (Րուսումաթ էմինի) — ՆԱԶԻՅ ՓԱՇԱ:

Վերաստույ կալուածական տնտեսաց (Տէճքերի
Խազանի նագրր) — ԱԼԻ ԲԻԶԱ ՓԱՇԱ:

Վերաստույ Թղթարուքեան եւ Հեռագրու-
թեան (Քօթա վէ Թէլէրաճ նագրր) — ՀԻԻ-
ՍԷՅԻՆ ՀԱՍԻՊ ՊԷՑ:

Վերաստույ Անտառաց, Հանքաց եւ Երկրագործ.
(Օրման վէ Մաւէն վէ Զրաաթ նագրր) — ՍԷ-
ԼԻՄ ՄԷԼՀԱՄԷ ՓԱՇԱ:

Ոստիկանապետ Պէշիքաշի (Պէշիքաշ մուհաճրը
վէ փօլիս միւսիրի) — ՀԱԶԻ ՀԱՍՍՆ ՓԱՇԱ:

Ոստիկանապետ Կ. Պոլսոյ (Սթամպոլ փօլիս միւ-
սիրի) — ԷՏՀԷՄ ՓԱՇԱ:

Կառավարիչ Բերայի (Պէյոլլու միւքէարըր) — ԷՆՎԷՐ ՊԷՑ:

Կառավարիչ Իսկիւսարու (Իսկիւսար միւքէա-
րըր) — ՀԱՄՏԻ ՊԷՑ:

Հրամանատար Զրհանկրաց (Իքճայիէ ալայր գօ-
մանանըր) — ԶԷԶԷՆԵԻ ՓԱՇԱ:

—

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ԽՐԻՄԵԱՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱԶԵՄԻ

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԲ

ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ

Տ. ՄԱՂԱՔԻԱ

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԲ

ԵՒ

ՆԱԽԱԳԱՀ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գրիգորիս Արեպ.	Յովհաննէսեան	Ա. Ասենապետ
Մելիսեդեկ	Մուրաճեանց	
Վահրամ Եպիսկ.	Մանկունի	Բ. Ասենապետ
Գաբրիէլ Ծ. Վրգ.	Ճէվահիրեան	
Գէորգ	Իսիւնեան	
Եղիշէ	Գուրեան	Ա. Ասենապետ
Յովսէփ	Այվազեան	Բ. Ասենապետ
Գաբրիէլ Ա.	Քհնյ.	Խաննեան

Խաչատուր Ա. Քինյ. Տէր Գաբրիէլեան
 Կարապետ » Սեբեան
 Կարապետ » Սանսալեան
 Յովհաննէս » Շահպաղեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յարուքիւն Փառա Տասեան Ա. Ասեկնապետ
 Սեփան » Ասլանեան Բ. Ասեկնապետ
 Գաբրիէլ ԷՔէնի Նորասու նկեան
 Գրիգոր » Խոսրեան
 Էլիաս » Չայեան Ա, Ասեկնապիր
 Տիգրան » Եռսու ձեան
 Չարեհ » Տիլպեր
 Գրիգոր » Գարակոզեան
 Սենեֆերիմ » Մանուկեան
 Միհրան » Սեբեան Բ. Ասեկնապիր
 Կարապետ » Գափամանեան
 Մկրտիչ » Առասեան
 Սեպուհ » Տէմիրնիպաեան
 Տիգրան » Տէր-Ներսէսեան

ՀՈՂՎՄԵՍԿԱՆ ՀԱՅ ՀԱՍՍԱՐՍԿՈՒԹԻԻՆ

ԿԱՔՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐՔ
 ՏԱՆՆ ԿԻՂԻԿՈՅ

(Վախճանեալ)

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գահերեց

ԱՆԿԱՄՔ

Սահակ ԾՎ. Ճիզմէնեան
 Պողոս Գեր. Գազրիկեան
 Հ. Գրիգորիս ԾՎ. Մերճանեան
 Հ. Մեսրոպ » Ծաղիկեան
 Յովսէփ » Ռոֆոսեան
 Յովսէփ » Աբիկեան
 Սեփան » Աբիկեան
 Արսէն » Եռսու ձեան
 Հ. Եղիա Վրդ. Քիլնեան
 Բառնաբա » Սամանեան
 Կովիսա » Իսկէնէրեան Անդր.

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գաներկց

Ա Ն Դ Ա Մ Բ

- Բառնաբան ՆՎ. Սամաննեան
 Պօզոս Գեր. Գագրիկեան
 Էսպեր փառա թրնկր
 Գրիգոր Էժ. Սինապեան
 Կարապետ » Գարագառ
 Կոմիտաս » Բէկմէզեան
 Միքայէլ » Մրսըրլը
 Յովհաննէս » Գարսաբեան
 Յովհաննէս » Ալլանվէրսի
 Պետրոս » Շաբեան
 Սահակ » Զիլբօբեան
 Վիլչէն » Գասապեան
 Կոմիտաս Վրդ. Իսկէնսէրեան *Ասենաղպիր*

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԹՈՒՐԲԻՈՑ

ՎՍԵՄ. Ա. ՅԱԿՈՐ ԷՖ. ՊՕՅԱՃԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՊԵՏ ԲՈՂՈՔԱԿԱՆՑ ԹՈՒՐԲԻՈՑ

- Կարապետ Էժ. Սենեբերիմեան
Բարսուղար թղթակցութեանց
 Գաբրիէլ Էժ. Մինասեան
Բարսուղար արձանագրութեանց
 Առաքել Էժ. Կէօզիլպէօյի փեան
Գործակալատար

ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- Պատ. Աւետիս Ասատրեան
 Բրոժ. Յակոբոս Էժ. Ճէնիգեան
 Պատ. Սեփան Զորիկեան
 Արեակ Էժ. Շմառնեան
 Յովհաննէս Էժ. Մինասեան
 Պետրոս Էժ. Տօննեան
 Կարապետ Էժ. Սենեբերիմեան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԲԻԻԹԱՆԻՈՅ

Վ. Եր. Ա. Կ. Ասատուրեան, Նախագահ
» Ա. Պետիկեան, Քարսուղար

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Վ. Եր. Ք. Եղուպեան, Նախագահ
» Ս. Պապասինեան, Քարսուղար

ԽԱՐԲԵՐԴԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Վ. Եր. Ա. Անդրէասեան, Նախագահ
» Ա. Թօփալեան, Քարսուղար

ԿԻԼԻԿԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆ

Վ. Եր. Ս. Թէրզիեան, Նախագահ
Պրն. Հ. Ասնըեան, Քարսուղար



ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԱՐՈՆՈՎԱՆ ՀԱՅՈՅ

Ի Յ Ո Ւ Ր Ք Ի Ա



Մեր նամակներուն եւ Աւետարանի մէջ եղած հրատարակութեան ի պատասխան, մի քանի տեղերէ միայն կրցանք ստանալ վիճակագրական տեղեկագրեր: Յուսամք զալ տարի ամբողջութիւնն ունենալ եւ հրատարակել:



ՎԻՃԱԿԱԿՐՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑ Ի ՔՈՒՐԲԻԱ

1896 — 97

ԱՐԱՔԵԼՈՒԹԻՒՆ

	Սկիզբ	Կայանք	Միսիտարք		Միսիտարք իւ Միսիտար- րուիքիք
			Այր	Կին	
Ներպղն. թուրքիա	1859	50	11	14	25
Արեւմտ. »	1819	111	20	52	72
Կեդրնկն. »	1847	46	6	18	24
Արեւելեան »	1836	124	14	28	42
Գումար		331	51	112	163


ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲՆԻԿ ԵՅԵՂԵՅԻ

	Արտա- րանք	Քարոզիչ	Օգնականք Ռուսացիքիք	Մասկերիք Ասակերիք	Ճառ- վուրդ
Ներպղն. թուրքիա	56	27	49	2423	1864
Արեւմտ. »	157	80	19	10336	8709
Կեդրնկն. »	95	43	32	1430	10824
Արեւելեան »	153	39	38	11639	6302
Գումար	461	219	108	25828	27699

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑ

	Վարձարանք	Երկու սեռի համար		Ռուսացիչք	Ռուսանոցք
		Բրն. վրն.	Գոլքն		
Ներպղն. թուրքիա	17	2	0	34	514
Արեւմտ. »	132	18	4	210	7099
Կեդրնկն. »	100	9	1	127	6462
Արեւելեան »	130	49	1	188	6833
Գումար	379	48	3	559	20908

Միանայ տուրք բնիկ Աւետարանականաց 1,515,264 արծար դանդկան.



Արեւելեան որբանոց Ի Պրուսա

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ

ՅՈՐԵԼԵԱՆԸ

1/14 Յուլիս 1900

Յամին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1875 ու Յուլիսի 1/13ին, վարձու բռնուած խարխուղ անակի մը մէջ, անձայն եւ անշջուկ, առանց շուքի եւ հանդէսի, սերմն ցանուեցաւ սոյն հաստատութեան, « ԼՈՒՍԻԿ » անուն մի որբ մանկան ընդունելութեամբ :

Շնորհիւ եւ ողորմութեամբ Տեառն եւ ընդ հովանեաւ Օգոստոսփառ Վեհապետին մերոյ եւ մօաէն ու հետուէն եկող օգնութեան կաթիլներու միջոցաւ, սոյն հասն մանանէսի ծլաւ, աճեցաւ,

մեծցաւ , զօրացաւ , ծառ եղաւ , որոյ
թաւ ոստերուն մէջ « երկնից թռչուն-
ներ » իրենց բոյներ շինեցին :

Քառորդ մի դար սոյն « Տուն գը-
թութեան » ոչ թէ մնաց հաստատ եւ
անսասան , հակառակ կատաղի փոթո-
րիկներու ու անոր գոյութեան դէմ
սպառնացող որոտումներու , այլ օր քան
զօր զարգացաւ եւ քայլ առ քայլ յա-
ռաջգրմեց , այնպէս որ այսօր Ողիմպո-
սի ստորոտը եւ քաղաքին է՛ն առողջա-
րար , օգասուն եւ բարձր մասին վրայ
ընդարձակ ու փառաւոր շէնք մ՛ունի ,
որոյ մէջ ամէն ինչ՝ որ սոյն տեսակ հաս-
տատութիւն մը կարօտի , կը գտնուի ու
ինքնին առանձին գիւղ մը կը կազմէ :

« Լուսիկ » եղաւ մի պայծառ « Լոյս »
որ իր կենսատու ճառագայթներ արձա-
կեց հեռուն ու մօտ , եւ բնավայրին
գրեթէ ամէն կողմերէն հարիւրաւ որ որք
ու անոք մանկտիք , առանց ազգի ու
կրօնի խարութեան , սոյն գթութեան
հարկին տակ ՉՅ տարիէ ի վեր անընդ-
հատ կը պատսպարուին , կը խնամուին ,
կը դաստիարակուին ու մարդկութեան ,

ազգիս ու տէրութեան օգտակար ան-
դամներ կ'ըլլան :

Որբանոցին ՉՅ տարուան պատմու-
թիւնը չէ որ հոս կ'ուզենք ընել , նը-
պատակնիս է մի քանի խօսք ուղղել
հանրութեան խրափանչիւր ողջամիտ
անհասի :

Ահա՛ Գործ մը որ ծնած է ինքնօգ-
նութեամբ , ու անձանցիւր յարատեւու-
թեամբ , ամէն փոթորիկի կուրծք տա-
լով , հասած է երիտասարդական ՉՅ ամ-
եայ առոյգ ու կայտառ հասակին : Որ-
բանոցն համազգային է եղած միշտ ,
սա՛ կամ նա՛ ժողովուրդին համար չէ
բացուած բնաւ , յանուն սա՛ կամ նա՛
հասարակութեան դրամ չէ ընդունուած
երբէք , որք եւ ակոխ մանկան հաւնար
է բացուած սոյն հաստատութիւն ու
յանուն որք ու ակոխ մանկան տրուած
են օգնութիւնք : Յարգ չէ ունեցած
ո՛ եւ է հաստատ եկամուտ ու դրամա-
գլուխ , չունի ո՛ եւ է նպաստ ո՛ եւ է
ընկերութենէ . անկախ , անձնական բա-
րեգործութիւն մ'է սա , մի միայն յօ-
ժարակամ նուէրներէ խնամեալ :

Արդ հաստատութիւն մը 25 տարուան գործնական, աշխոյժ եւ արդիւնաւոր կեանքի շրջան մը բոլորելէ ետեւ արժանի չէ՞ հանրութեան ջերմ աջակցութեան. չէ՞ հասած ժամը, երբ, իւրաքանչիւր, դադարելով անտարբերութեամբ հանդիսատես լինելէ, օգնութեան, քաջալերութեան եւ խրախուսանաց ձեռք կառկառէ անոր յոգնած եւ վաստակեալ Հիմնադրին, որ ուխտած է նուիրել զանձն սոյն հաստատութեան ցվերջին վայրկեանն իւր յաշխարհի: Դրամ շահագործելու ապահովագոյն կերպն է բարեգործել. չկորսուիր ո՛չ դրամ, ո՛չ տոկոս. այո՛, տուկոսին տոկոսն իսկ հաշիւի առնուելով մի օր պիտի ստանայ իւրաքանչիւր բարեգործող հարիւրապատիկ Տեառն մերոյ Յիսուսի ձեռքերէն, որ ըսած է: Զորինչ ընէք այս փոքրներէն մէկուն Ինձ ըրած պիտի համարուիք:

Դրամը՝ տրուած նպատակին համար գործածել. այս է եղած Հիմնադրին որդեգրած ու ճշդիւ հետեւած քաղաքականութիւն, ինչպէս ցոյց կուտան 25

տարուան ելից ու մտից արձանագրութիւններն: Եւ թէեւ գործը զուտ անձնական է եւ այսպէս ալ վաւերացեալ Կայսերական արտօնագրով, սակայն հիմնադիրն անցեալ 25 տարուան մէջ շարունակ ունեցած է խուճաբ մը հաւատարիմ անձեր, որք իբր « խնամակալ » կը հսկեն հաստատութեան ելեւմուտքին վրայ քառամսեայ հաշիւներն քննելով: Սոյն կարգադրութիւն ըրած է հիմնադիրն նախ իր անձնական ապահովութեան համար, որ կասկածանաց տեղի չտրուի եւ ապա հանրութեան վստահութիւն ներշնչելու համար:

Այս ծանօթութիւններն տալէ ետեւ կը մնայ ընել երկու առաջարկ:

Նախ. Կամաւոր նուէրներն՝ Կանոնաւոր նուէրներու վերածել: Կ'առաջարկենք որ իւրաքանչիւր ինքզինք պարտաւոր համարի տարեկան որոշ գումար մը յսկացունել Սրեւեշեան Որբակոցին ի նպաստ:

Երկրորդ. Հաստատութեանս Քսանեւ հինգ ամեակին առթիւ կ'առաջարկենք որ իւրաքանչիւր « Յորեշեան Նուէր »

մը յատկացունէ Հաստատութեանս ,
որոյ միջոցով հասոյթ բերող ստացուած-
քի մը տէր ըլլայ Որբանոցն :

Ստորեւ գրուած նուիրատուսը հա-
ճէ ստորագրել , Յորէլեան նուէրդ նը-
շանակելէ ետեւ , եւ խրկել նուէրովդ
մէկտեղ առ

ՀԻՄՆԱԳԻՐ—ՏԵՕՐԷՆ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵՍԱՆ

ՊՐՈՒՍԱ



Ընդունեցիք ի նպաստ Արեւելեան Որբանոցին

ՅՈՒՐՆԱՆ ՆՈՒՐԱ :



Ասորագրութիւն

Բնակատեղի

Ի ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄԱԴԱՐՁ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ
Ի ՊՐՈՒՍԱ

ՀԱՏԻԿ ԿԱՏԻԿ

- 1 Բնութիւն ողջոյն շնորհագուրկ .
Մահուան դալուկն ունի Աշուն .
Կիզիչ արեւն ա՛լ չունի հուրք ,
Զունի հրապոյր կապոյտն անհուն .
Վերէն կախուած՝ խոժոռ , մթի՛ն ,
Խիտ ամպերէն կը կաթկըթին
Շիթեր զովիկ
Հատիկ հատիկ . . . :

- 2 Սե՛ւ է գիշերը ձմրան խիստ ,
Հո՛ւս՝ յափրացած՝ ջերմոցին քով
Ոմանք՝ թուղթ , նարտ խաղան հան-
գի՛ստ .
Հո՛ն՝ այլք զօփան՝ սառ արցունքով...
Եւ զըւարթնոց՝ ըսպիտակ , գիրկ

Փետուրք կ'իյնան երկրիս գորշ գերկ
Լուռ , հանդարտիկ
Հատիկ հատիկ

3 Վարդափրթիթ խանձարուրքէն
Զարթնու Աւօտն հուր վարսերով .
Ալեակն ու շող զիրար գրկեն
Ու պագտըւին անմեղ սիրով .
Մէն մի ծաղիկ , ծիլ ու ցօղուն
Ունի ցօղիկ մը պսպղուն ,
Ձինջ մարգրրտիկ
Հատիկ հատիկ

4 Անրի՛ծ յակինթ միակըտուր՝
Կը ծիծաղի երկնակամար .
Զմրուխտ դաշտեր՝ գեղեցկաթոյր
Ծաղկօք պճնեալ են՝ անհամար .
Թարմ , կաթնալից , ատօք հասկեր
Ծանր ու ծրփուն՝ վար են հակեր
— Ոսկեգրնտիկ
Հատիկ հատիկ

5 Ա՛հ , ո՛րքան շատ կը գտնուին
Գունատ դէմքեր , աչքեր անքուն
Հացէ , յոյսէ , զուրկ գլխովին

Այրա՛ծ սրտեր , հոգիք նըկո՛ւն ,
Ո՞վ արգեօք , ո՞վ փութայ պիտի
Անկեղծ սիրոյ , աննենգ ժպտի
Ցանել շողիկ
Հատիկ հատիկ

6 Քրսան եւ հինգ դարուններու
Գիրգ կոկոնները կը փրթթին —
Բընավայրէ՛ տարբեր , հեռու —
Սուրբ յարկին տակ այդ դըրախտին՝
Որ լուռ՝ սակայն պերճ կը խօսի՝
Ոտքին տակ վեհ Ողիմպոսի —
Շեշտով գողարիկ
Հատիկ հատիկ

7 Թո՛ղ այս ծաղկունք բարոյական
Բուրեն անոյշ , թարմ , անխամուր .
Պարծանք ազգին եւ Տէրութեան ,
Անհատաբար , միահամուռ .
Զի ամենէն՝ վաղ , անազան ,
Կ'ակնկալէ միշտ ապագան
Շահ ու բարիք
Հատիկ հատիկ

8 Արդ , սիրելի՛դ իմ ընթերցո՛ղ ,

Պիտի չըլլա՞ս արդեօք դո՛ւն ալ ,
 Նըչո՛յ մը շող , կաթի՛լ մը ցօղ ,
 Սիրոյ ծովուն մէջ աւելնալ :
 — Ո՞ր անտարբերն , ո՞ր շատ կըծծին
 Զպիտի դպնայ քսակին , գանձին —
 — Դիզուած ոսկիք
 Հատիկ հատիկ . . . :

9 Զպիկ անձրեւ ու բիւրեղ ձիւն ,
 Ոսկի շիթեր , ջինջ մարգարիտ ,
 Մեծ Արարչին են օրհնութիւն ,
 Սէր , գութ անհուն եւ ճշմարիտ .
 Ո՞վ — անըսպառ Բարութեան այդ
 Շաղն ու ցովմունքը սիրացայտ
 Ըլլայ պիտ՛ ինք
 Գէ՛թ մէկ հատիկ . . . :

Ա. Կ. ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ

ԱՌՈՂԶԱՊԱՀԱԿԱՆ

ՄԱՔՈՒՐ ՕԴԻՆ ԱՐԺԷՔԸ

Ընդունուած է թէ շատ մը հիւանս-
 դութիւններու եւ մահաւանդ հիւժախտի
 ժամանակ անէն դուրս անցուած կեանքն
 օգտակար է . ուստի ասկէ կ'ելլէ սա
 եզրակացութիւնը թէ վեասակար է տան
 մէջ անցուած կեանքը որ հիմա ընդհա-
 նուր է քաղաքակիրթ ժողովուրդներու
 մէջ : Զարմանալի եւ ուշադրաւ բան է
 որ հիւանդ մը լոկ բաց օդի մէջ փո-
 խադրուելով տենդը կ'իջնայ , գիշերուան
 քրտինքը կը դադրի , հիւժախտային
 կարմրութիւնը կ'անցնի : Եւ յժուար է
 չհանել սա եզրակացութիւնը թէ , եթէ
 այս ախտանիշները կ'երթան դուրսի օդին
 մաքրութեան միջոցաւ , պէտք է մեծ
 մասամբ յառաջ եկած ըլլան տան ներսի

օղին անմաքրութենէն : Չունինք իրա-
ւունք ըսելու թէ միայն հիւժախտաւորն
է որ կը վնասուի օղին անմաքրութենէն :
Անտարակոյս առողջը կը մաքառի կազ-
մութեան վրայ յորի սպիւնացութիւններու
դէմ եւ կը յազթէ ալ , որոնց առջեւ
հիւժախտաւորը կ'ընկճի . բայց այս ըսել
չէ թէ պայքարին մէջ չենք վնասուիր :
Եւ յիրաւի մօտերս յառաջ բերուած իրօ-
ղութիւնները բաւական են ցուցնելու
թէ տաքուկ եւ հանգստաւէտ կեանքը
զոր քաղաքակիրթը «կը վայելէ» հիմա ,
դէշ է մինչեւ անգամ ամենէն քաջա-
ռողջին համար : Մենք մեր պատահան-
ները ազուոր մը կը գոցենք , դռները
զգուշութեամբ կը փակենք , կը դողանք
հովի մը առջեւ , կը փաթթուինք բրդե-
ղէններով , բրդեղէն վարագոյրներ կը
կախենք , փոշոս կապերաներ կը փռենք ,
ազուամազոտ եւ շքեղ օթօցներ կը գոր-
ծածենք , միեւնոյն օրը կը շնչենք կրկին
եւ կրկին , եւ յետոյ կը դարմանանք թէ
ինչո՞ւ գօրաւոր եւ ուժեղ չենք : Իրօ-
ղութիւնը սա է որ մենք արհեստական
պայմաններու դէմ մաքառելու միջոցին

ամէն օր կը սպառենք այն ճոխ կեանքը
զոր Բնութիւնը շնորհած է մեզի . թէ
այս պայմաններն ի՞նչպէս գօրաւոր են
չարիք գործելու համար , եւ ի՞նչպէս
աւերիչ են , կը ցուցուի այն իրողու-
թեամբ թէ անոնց լոկ բացակայութիւնը
հիւժախտաւորին եւ կը դարձնէ այն
կեանքը որ կը կարողացնէ զանի յաղթել
իր մէջ գտնուած հիւանդութեան սեր-
մերուն : Մաքուր օղը այնպիսի բան մը
չէ որ բաւական ըլլայ օրը անգամ մը
առնել մանր չափով , այլ այնպիսի բան
մը՝ որով պէտք է ապրիլ :

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՔԱՆԻ՝ ԺԱՄ ՔՆԱՆԱԼՈՒ ԵՆ

Մանուկներու հիւանդութեան ամե-
նէն մեծ պատճառներէն մին է ծնողնե-
րուն անոնց զիջերները ուշ անկողին
երթալու թոյլատուութիւնը : Մեծագոյն
սխալներէն մին է խնամակալներունը
որոնք թոյլ կու տան որ քիչ քնանան
ազաքը : Իրաւ որ պէտք է խոստովանիլ
թէ միշտ դժուար բան է պզտիկներն
անկողին զրկել այն ժամուն հրը պէտք

է երթան : Անոնք կ'աղաչեն հարկաւ քիչ մը աւելի նստիլ : Բայց եթէ ծնողները գիտնան միայն՝ շատ հանգստանալու անհրաժեշտ պէտքը , անդրդուելի պիտի մնան բոլոր այսպիսի աղաչանքներու դէմ : Պէտք չէ մոռնալ թէ մանուկներ քնապէս կանուխ կ'արթննան առտուանց , եւ որպէս զի ժամանակին դպրոց երթան , շատ անգամ կը կանչուին ելլել իրենց քունը տակաւին չառած : Մանուկներն , առ հասարակ պէտք է տասը տասնըմէկ ժամ քնանան . եւ ուստի պարտին իրիկունները բաւական կանուխ անկողին երթալ , որպէս զի անընդհատ քնանան այսքան ժամեր :

Եթէ մանուկները իրենց պէտքին չափ հանգիստ չառնեն , զարմանալի չէ որ ջղալին , ցասկոտ եւ անսանձ ըլլան : Անոնց ջիղերը , որոնք յաճախ կը ժառանգուին դժուարամարտութեան ենթակայ ծնողներէ , շատ զգայուն կ'ըլլան ամէն ձայնի , եւ տղաք կը բարկանան անկողնէն ելլելու կանչուած ժամանակ երբ մեծ միտում ունին քնանալու : Մանկութեան կանխագոյն տարիներուն մէջ

պէտք է որ անոնք երկար եւ անվրդով քնանան : Նիւ Եորքի նման քաղաքի մը մէջ զարմնալի է տեսնել մատղաշ տղաքներ որ փողոցը կը գոնուին ժամ Գէն (Ը. Ե.) շատ ետքը , երբեմն մինչեւ կէս գիշերուան մօտ , եւ կ'ընկերանան իրենց սօղին անդին պաշտող մայրերուն կամ սպասաւորներուն հետ որ կը թուի թէ զուրկ են ուղիղ դատողութենէ : Մանուկներու համար պէտք է որ այսօրինակ զեղծումներու դէմ օրէնք մը հաստատուի , եւ բռնի պահել տրուի Ո եւ է քաղաքակիրթ անձ գիտնալու է թէ մանուկներ պէտք է անկողին երթան իրիկուան ժամ ութին եւ շատ շատ լինին (Ը. Ե.) :

—

ՅՐՏԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԵՐԸ

Քաջառողջ անձ մը որ աննպաստ վիճակներու չենթարկուիր , կ'ըսէ Լէնուէ , զիւրաւ կը զիմադրէ ցուրտին : Բայց երբ առողջութիւնը քիչ մը կը խանգարի , եւ ստամոքսը կամ ջղային գրութիւնը կը վեասուի , զիւրաւ պաղ կ'առնուի , եւ

անհատին տկարացած կողմին համեմատ հետեւեալքը կ'ըլլայ հարուստ, կամ թուքատապ կամ գուցէ դալուկ : Հարբուսի բոլոր պատճառներուն մէջ ամենէն ազդեցիկներէն մին հաւանականապէս յոգնութիւնն է : Յոգնած պարտասած մէկը որ գիշերը տուն կուգայ իր ցերեկուան գործէն, չափահասութեան մօտեցող պատանի մը եթէ շաքաթն երկու երեք անգամ երկու ժամ քուն կը կորսնցնէ երեկոյեան ակումբներու մէջ, մատաղատի մանուկներ որ չափազանց կ'ուտեն եւ քիչ կը քնանան, ցուրտ առնելու ենթակայ եղողներու հասարակ օրինակներ են : Զեղիութիւնը ենթակայ կ'ընէ ցուրտ առնելու, չափազանց տաք սենեակները, փետրալից անկողինները, կակուղ աթոռները, կը ստեղծեն զգայնութիւններ ու սաստիկ հարբուսի կը տանին : Վերջապէս ցուրտը չէ վախնալու բանը այնչափ՝ որչափ անոր նախընթաց պայմանները որոնք վնասելու առիթ կուտան ցուրտին : Ամէնէն աւելի անոնք ենթակայ են պաղ առնելու՝ որոնք իրենց սուռներէն կամ մինչեւ անգամ իրենց

անկողիններէն դուրս չեն ելլեր :
 Եւ ամենէն աւելի ցուրտէ չազդուողները շատ անգամ անոնք են՝ որոնք ամենէն աւելի նշաւակ են ջերմութեան ատիճանի փոփոխումներու, եւ որոնք լաւ քնով, ցուրտ լողանքով եւ կանոնաւոր ունակութիւններով կը պահեն իրենց ջղային դրութեան եւ արեան շրջաբերութեան ներդաշնակութիւնը : Հաւանականապէս շատ ցրտառութիւններ կը պատահին գիշերը կամ իրիկուան զէմ, երբ յոգնած պարտասած անձանց արեան շրջանին հաւասարակչութիւնը կը խանգարի կամ շատ տաք սենեակներու եւ կամ պաղ ննջարաններու մէջ մնալով : Ատիկամասնաւորապէս կը պատահի տարւոք անձանց : Այսօրինակ պարագաներու մէջ չարիքը անմիջապէս չգար մէկ գիշերուան միջոցին : Յաճախ կը պատահի ծածկաբար կամ գողունի կերպով եւ կը տեւէ օրեր եւ շաքաթներ :



Հ Ի Ի Ծ Ա Խ Տ Ա Ի Ո Ր Ք

Նախ՝ հիւժախաւորները պէտք է որ

քիչ մը ջուր պարունակող եւ կափարիչ ունեցող ամանի մը մէջ թփնեն :

Երկրորդ՝ յետոյ ամանի մէջ հաւաքուած այս թուքերը ական ունեցող եւ վրան գոցուած արտաքնոցի մը եւ կամ վրան լաւ մը գոցուած փոսի մը մէջ թափել , եւ կամ թփնուած նիւթերը անյայտացնող տաքութեան այսինքն եռացման ատտիճան ջերմութեան ենթարկել պէտք է :

Երրորդ՝ թքամանը եփ ջուրով մաքրել անհրաժեշտ հարկաւոր է : Եթէ հիւծախտաւորին թքամանին մէջ զրուելու ջուրին հետ քիչ մըն ալ «սի» ֆէնիէ խառնուի , աւելի աղէկ կ'ըլլայ զգուշութեան համար . վասն զի «սի» ֆէնիէով խառն ջուրին չեն կրնար մօտենալ ճանճերը : Դարձեալ կը կրկնենք թէ թքամանը անշուշտ պէտք է գոց պահել , վասն զի բաց ամանի մէջ խուխը թէպէտ չչորնայ ալ , ճանճերուն միջոցաւ կը տարածուի :

Խղճամիտ ծիւծախտաւորը հանրային հրապարակներու մէջ ճեմած ժամանակը մեծապէս կը զգուշանայ ասղին անդին

թփնելէ : Երբ թփնելու պէտք կը զգայ պարտի թաշկինակին մէջ թփնել , եւ երբ տուն կը դառնայ , այն թաշկինակը կա՛մ պէտք է այրել եւ կա՛մ եռացող ջրով լուալ : Հիւծախտաւորը երբեք պէտք չէ կլլէ իր խուխը , վասն զի այն ատեն հիւծախտին՝ աղիքներուն եւ ուրիշ ներքին գործարաններու հաղորդուելուն պատճառ կ'ըլլայ : Պէտք է զգուշանալ հիւծախտաւորները համբուրելէ , գրկելէ , անոնց հրեսին քսուելէ : Վնաս մը չունի ճակատներէն համբուրել եթէ հարկն ստիպէ : Բոլոր հիւծախտաւորները պէտք է որ զատ անկողնի մէջ պառկին , եւ անոնց սենեակները ըստ կարի պարագայ , արեգդէմ եւ օդաւէտ ըլլան :

Պէտք է հիւծախտաւորին կերակուրի ամանները զատել , եւ հանդերձները եւ ուրիշ գործածած բաները եփ ջուրի մէջ եռացնել : Եթէ հիւծախտաւորին սենեակին մէջ ուրիշ մէկը պիտի բնակի , նախ պէտք է այդ սենեակը լաւ մը բռել (պատանա ընել) :

Եթէ կարեւորութիւն արուի այս թե-

լադրութիւնններուն , հիւժախաաւորնե-
րուն այժմու թիւը մէկ չորրորդին կ'իջնայ :

Լ ՈՒՅԻԱ ԿԵՐԷ՛Ք

Մեկնելով սա սկզբնակէտէն թէ բո-
լոր թեփաւոր ընթեղէններէն լուբիան
է որ կրնայ ամէնէն աւելի ծծմբաջրա-
կան թթու մատակարարել , Տքդ. Էվալտ
ազդուապէս կը յանձնարարէ իր թոքախ-
տաւորներուն՝ կուչտ ու կուռ ուտել
օրհնեալ լուբիան : Անոնց աղիքներն եւ
թոքերու ցնցուղները (արծն) ծծմբաւոր
ջրածինով յափրացնելու է՛ն դիւրին եւ
է՛ն խնայողական եղանակը չէ՞ միթէ
այս . Ծծմբաւոր ջրածինն , որուն բու-
ժական յատկութիւններն անուրանալի
են այլ եւս , այն ատեն միայն վտան-
գաւոր է երբ կը շնչուի : Պէտք է ու-
րեմն , անկէ օգտուելու համար , սր-
ճոտի ճաճով մտցնել զայն արեան շրջա-
նին մէջ : Ծծմբաւոր ջրածինը կազ մ'է
որ ո՛չ կ'ուտուի եւ ոչ կը խմուի , բայց
ալքալինական ծծումբներու շնորհիւ
կրնայ մանեկ ստամոքսի մէջ : Ասոնք

մարտողական հիւթերու ազդեցութեան
ներքեւ կը տարբադադրուին եւ դուրս
կը թափեն իրենց ծծմբաջրական թթուն :
Սեւֆիւրու անոնց ամէնէն գործածա-
կան , ամէնէն ազահով եւ կատարեալ
Բէքն է : Տքդ. Սալիվաս , որ վերջերս
լուրջ ուսումնասիրութիւն մ'ըրաւ , ձեզ
պիտի ըսէ որ «Եւֆիւրու» տեսակ մը
համայնարոյժ դեղ է ընդդէմ գրեթէ բո-
լոր հիւանդութեանց . բայց մասնաւո-
րաբար կոկորդի եւ թոքերու տարափո-
խիկ ախտերու դէմ , ինչպէս նաեւ շա-
ռատենդի (զըզըլ հիւմմա) , ինֆլուէն-
ցայի , օձացաւի , ժանտաանդի եւ մոր-
թային բոլոր հիւանդութեանց դէմ :
Մէկ խօսքով սքանչելի դարման մը ,
որուն գործածութիւնն ալ դիւրին է նոյն
խիկ ճամբորդութեան մէջ : Արդ , ինչ
որ օգտակար կերպով կը գործէ «Եւ-
ֆիւրու» մէջ , նոյն ինքն է ծծմբաւոր
ջրածինը զոր կ'դատէինք ու կ'դատապար-
տէինք ա՛յնքան խստութեամբ , կարծե-
լով որ անիկայ չարիք գործելէ զատ
ուրիշ բանի չի գար : Կը տեսնէք որ
պէտք չէ բանէ մը յուսահատիլ , ո՛չ ալ

վերջնական կերպով դատապարտել զայն. զի ամէնէն զօրաւոր թոյններն իսկ երբեմն մեզ կը ներկայացնեն ասանկ մխիթարիչ անակնկալներ : Բացարձակ բան չկայ աշխարհիս վրայ :

ՏԱՔ ՋՐՈՎ, ԵՒ ԲՈՅՈՎ, ԱՅՐԱԾՆԵՐ

Ընդհանրապէս տաք ջրով այրածները աւելի քիչ սաստկութիւն կ'ուեննան քան բոցով այրածները, վասն զի ջուրին տաքութիւնը, մինչեւ անգամ եռացման ատեն, բոցին տաքութենէն քիչ սաստիկ կ'ըլլայ : Եթէ տաք ջրով այրածը թեթեւ է, լոկ մորթին կարմրութիւն տուած է եւ բշտած չէ, ըստ կարի շուտով ծածկեցէք զայն չոր ալիւրով կամ, որ աւելի աղէկ է, ալիւրի մէջ թաթխուած բամբակի դրէք վրան : Ասոր գլխաւոր նպատակն է միասուած մասը պաշտպանել օղէն. այն ատեն քիչ ցաւ զգացուի եւ քիչ միաս կը հետեւի : Շուտով կ'աղէկնայ, եւ մորթը կեղեւի ձեւով կ'իւլէ, թերեւս չեւեր ալ :

Սակայն եթէ մորթը բշտէ, մեծ ըզ-

գուշութիւն պէտք է ընել որ չպատրի բուշար. եւ եթէ վրան փակած լաթերը մէկ կողմ առնել պէտք ըլլայ՝ աւելի աղէկ է լաթերը կտրել քան բուշտերը պատուել : Այս աւելի սաստիկ պարագային համար պէտք է հաւասարաչափ կրի ջուր եւ կտաւատի իւղ իրար խառնելով սպեղանի մը շինել եւ վրան դնել, Դեղագործը կըրնայ պառչած չափերով պատրաստել խառնուրդը : Թափեցէք ասիկա հին ճերմակեղէնի կտորի մը վրայ : Եթէ սպեղանին առաջին անգամ այրածին վրայ դնելէ ետքը նորէն պիտի դնէք, վրան թափեցէք զայն առանց առջի դրուածը այրածին վրայէն վերցնելու, նայելով որ բոլորովին թրջի տոգորուի : Երբէք պէտք չէ թողուլ որ բոլորովին ցամքի չորնայ սպեղանին նորէն դրուելէ առաջ : Եթէ այրածը արմուկին ներսի կողմն է, հոգ տարէք որ բազուկը ուղիղ բռնուի կապուելէ առաջ, եթէ ոչ՝ մորթը կը քաշուի եւ արմուկը ծուռ կը մնայ :

Եթէ այրածները շատ սաստիկ կ'ըլլան մարմնին վրայ, ինչպէս նաեւ ձեռու ըններուն վրայ, անյապազ բժիշկ կան-

չեցէք, որպէս զի մի գուցէ ուրիշ չարիք մըն ալ պատահի այրածէն զատ :

Պ Տ Ո Ւ Ղ

Ամենէն զուտ եւ անոյշ ջուրի ազբիւրը պտուղներն են : Ըստ բժշկական արուեստին, անձրեւի ջուրը, թորեալ ջուրը, քամոցէ անցած ջուրը եւ եռացուած ջուրը մաքուր են . ուստի ասոնք միայն պէտք է խմել ծարաւ անցնելու համար : Եւ ասոնցմէ զատ ուրիշ ջուրեր աղտոտ համարելով խմելու հրաման չտար բժշկականութիւնը : Իսկ Պարթէրիաբանութիւնը յիշեալ ջուրերն ալ աղտոտ եւ միքրոպայից կը համարի եւ միայն պտուղներուն մէջի ջուրը զուտ եւ ոեւէ ազդեցութենէ զերծ կը համարի : Մասնաւորապէս պտուղներուն զուրսի կեղեւը ֆրէշի տեսակէ զեղով մը պատեալ է, եւ ուստի փոշիին եւ հովին հետ եկող միքրոպները կը սպաննուին : Ըսել է թէ ամենէն մաքուր ջուրը պտուղներուն մէջ Բնութեան պատրաստածն է : Նաեւ, որովհետեւ պտուղներուն մեծ

մասը ջուր է, մարդ անոնք ուտելով թէ՛ մաքուր ջուր կը խմէ եւ թէ՛ ծարաւութիւնը կ'անցընէ :

Չմտք յաճախ պտուղ ուտող մէկը երբէք ջուր չխմեր : Եթէ կերակուրին հետ քիչ մը պտուղ ուտուի, ջուրի շատ պէտք չզգացուիր : Լեմոնին, նարնջին եւ թուրնջին պարգեւած հաճոյքը ո՞վ կրնայ ուրանալ : Ասոնք, մասնաւոր չոր երկիրներու մէջ, մարդոց ի՛նչ ծառայութիւններ կը մատուցանեն : Մինչ Աստուած Բնութեան մէջ մարդուս անմիջական պէտքը լեցնելու համար ա՛յսօքան միջոցներ ստեղծած է, մարդս անտեղեակ ըլլալով ասոր, ուր որ ձիւնախառն եւ սառնալից պաղ ջուրեր կը գտնուին, անոնցմով փորը լեցնել կ'ուզէ, եւ չգիտեր թէ ո՞րչափ արմարութիւն կը գործէ :

ԶԳՈՒՇԱՅԷՔ ՀԱԶԱԼԷ

Բժիշկ մը որ կապակցութիւն ունի հաստատութեան մը հետ ուր շատ մը տղաք կը գտնուին, կ'ըսէ . « Հազը ա-

ւելի գրգռող բան չկայ քան նոյն իսկ
 հազը : Ժամանակ մը ա՛յնքան համոզ-
 ուած էի ասոր՝ որ որոշեցի գէթ վայր-
 կեսան մը պակսեցնել հաստատութեան
 մէկ հիւանդանոցին սրահին մէջ լսուած
 հազերուն թիւը : Վարձատրութեան խոս-
 տումով եւ պատիժներու սպառնալիքով
 յաջողեցայ համոզել տղաքը լոկ բռնել
 իրենց շունչը երբ հազալու կը փորձուին,
 եւ քիչ յետոյ ես ալ զարմացայ տեսնե-
 լով որ տղոցմէն ումանք բուժուեցան
 ախտէն : Շարունակ հազալը ճիշդ նման
 է մարմնին զուրսի երեսը գանուած վէրք
 մը քերելուն : Յորչափ քերելը շարու-
 նակուել, վէրքը չբուժուիր : Թող մարդ,
 երբ կը փորձուի հազալ, երկար շունչ
 մը ներս քաշէ եւ բռնէ զայն մինչեւ որ
 տաքնայ եւ կակուղնայ ամէն մէկ օդի
 խոռոչ, եւ շուտով պիտի տեսնուի օ-
 գուտը : Բորակածինը որ այսպէս կը
 բանտուի, իբրեւ դեղթափ կը ներգոր-
 ծէ լորձնաթաղանթին վրայ եւ կը մեղ-
 մէ հազալու փափաքը եւ կոկորդին ու
 թոքերուն առիթ կու տայ բուժուելու : »

ԳԱՐԵԱԿ ԱԶՔԻՆ ՄԷՋ

Գարեակները (կէօլ արբճըլը) մանր
 ուռոյցներ են որ կը գոյանան թարթիչ-
 ներուն արմատներուն մէջտեղերը եւ
 հազիւ փոքրիկ սուպէ մը աւելի մեծ կ'ը-
 լան, բայց յաճախ ցաւագին եւ նեղիչ :
 Յաճախ լուացէք զանոնք տաք ջուրով
 կամ տաք խաչխաչի ջուրով եթէ շատ
 կը ցաւին : Այս նոյառակին համար
 դուխ մը խաչխաչ պէտք է դնել դեղա-
 գործէն . կտոր կտոր բրէք զայն եւ ե-
 փեցէք 150 տրամ ջուրի մէջ մինչեւ որ
 կիսուն չափ մնայ ջուրը : Այս ջրով
 լուացէք աչքը, բայց պէտք է ազէկ հոգ
 տանիլ այս ջրով լուալէն ետքը, եթէ
 ոչ՝ օգուտէն աւելի մլասս կը տեսնուի :
 Զայն գործածող անձը պէտք չէ որ տնէն
 դուրս ելլէ առանց աչքը ծածկելու,
 որպէս զի պազ չառնէ : Երբ գարեակը
 կը պատտի, քիչ մը մաքուր վաղըն
 կրնայ գործածուիլ :

ԿՈՇՏԵՐՈՒ ԴԱՐՄԱՆ

Մարմնի վրայ ձևապարզ կոշտերը (նոս-
 «լք») յաճախ շատ նեղութիւն կու տան
 եթէ յերեւան գալէ շուտ հոգ չտարուի :
 Ամենէն պարզ եւ ազդեցիկ դարմաննե-
 րէն մին է կտոր մը հասարակ սոս-
 թրջել եւ անով շփել կոշտը օրը երկու
 երեք անգամ : Ինչ որ այս պարզ դար-
 մաններէն շատին մէջ կը փնտռուի ,
 պատշաճապէս եւ առանց զանցառու-
 թեան գործադրութիւնն է . այն ատեն
 ապաքինութեան կէսը ձեռք բերուած
 կ'ըլլայ : Աղէկ է որ կտոր մը սոս-
 թրագարանին քով եւ կամ ուրիշ
 յարմար տեղ մը , եւ գիշերը պառկելէ
 անմիջապէս առաջ եւ առաւօտուն ելլե-
 լէն անմիջապէս ետքը շփուի կոշտը :

Ուրիշ դարման մըն է հրանուէկի (շէյ-
 Բէն այսղը) կամ ճարճրուկի (հարս հիւրի-
 պա օճոս) ճերմակ հիւթը : Այս բոյսերէն
 մէկուն ցօղունը կտարէ ծաղիկին ամե-
 նէն մօտ գտնուած տեղէն , եւ կ'ելլէ
 թանձր , սերի նման , հիւթ մը : Դիր
 զայս կոշտին վրայ , շփելով զայն ցօ-

ղունին ծայրովը մինչեւ որ կոշտը բու-
 լորովին թրջուի : Այս հին գեղջկային
 դարմանը երկու երեք անգամ գործած-
 ուելով բաւական կ'ըլլայ կոշտերը բու-
 ժելու եթէ կանուխ գործածուի :

ՄԱՐՄՆԻ ՃՄԼՈՒՄ

Մարմնի ճմլումին պարզ դարմանն
 է պազ ջուրը : Բազկի կամ սրունքի
 սաստիկ ճմլում պատահած ատեն կտոր
 մը ճերմակեղէն թրջեցէք , ծալեցէք
 քանի մը անգամ մինչեւ իջնէ այնպիսի
 տարածութեան մը որ լոկ ծածկէ ճրմ-
 լուած տեղը . եւ մէկ երկու անգամ
 դարձուցէք փաթթեցէք վրան լաթ մը
 ոչ այնքան պիրկ , ասոր վրայ դարձու-
 ցէք ֆաշէլայի շերտ մը կամ երիզ մը :
 Եթէ ճմլումը ծունկին վրայ է , զգու-
 շութեամբ ծունկին վերի եւ վարի կող-
 մերը փաթթելու է երիզը , որպէս զի
 քալելը չարցիլուի : Թաց եւ չոր երիզը
 գիշեր ցերեկ կրնայ ճմլուածին վրայ
 պահուիլ , որ շուտով կ'աղէկնայ :

ԿՏՐՈՒԱԾՆԵՐ

Կտրուածները պղպեղէն աւելի շուտ աղէկցնող դարման չկայ : Պղպեղին տուփը աղէկ մը թօթուեցէք կտրածին վըրայ , այնպէս որ լաւ մը ծածկուի , յետոյ կապեցէք զայն հին լաթի կտորով մը , եւ եթէ կարելի է , ժամանակ մը մի խախտէք զայն իր տեղէն : Եթէ նորէն սկսի արիւնիլ , կրկնեցէք պղպեղին հեղուով . արիւնը պէտք չէ մաքրել նորէն վրան պղպեղ թափելէ առաջ , վասն զի հոսող արիւնին հետ խառնուած պղպեղն է կտրուածը արագ բուժողը :

ԱՌՈՂՋԱՐԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

30 Հրահանգ առողջ , երջանիկ եւ երկար կեանք անցունելու համար :

1. Մաքրութիւն առաջին պայման առողջութեան . մարմին , հանդերձ , բնականաբար միշտ մաքուր պէտք է պահել :

2. Հող չէ որ հանդերձ հին ու աղքատիկ ըլլայ , բայց կարկտած եւ մաքուր պէտք է ըլլայ :

3. Բնակարանիդ բոլորտիքը միշտ մաքուր պահէ , աղտեղութիւն , ապականութիւն ինքզինք կը յայտնէ գէշ հոտ տարածելով : Մանաւանդ արտաքնոցները պէտք է մաքուր պահել եթէ ոչ կ'ապականի օդ եւ զանազան հիւանդութիւններ կը ծագին :

4. Տանը աղտեղութիւնը հեռու տեղ թափելու է , աղտոտ հանդերձներ բնակարանէն դուրս , բացօդեայ տեղ մը դիր , մինչեւ որ լուայուին . քօլէրա , թիֆօ եւ ուրիշ հիւանդութիւններ այս աղտեղութիւններուն մէջ կը սնանին եւ իրենց աւերում կը կատարեն :

5. Շատերուն շունչը կը հոտի , այս նշան է աւերեալ ստամոքսի . ածուխը լաւ մը ձեռքէ ու մաղէ , ապա շուտուպի հետ խառնելով օրը երեք անգամ փոքր դգալ մը կեր . պարզ բայց լաւ կեղ է այս :

6. Յաճախ լուս մարմինդ , մարմին-
նը լեցուն է ծակափքներով որ շարու-
նակ վնասակար հիւթը դուրս կը հանէ .
երբ այս ծակափքներ գոցուին , այս աղ-
տեղի հիւթ մարմնոյն մէջ մնալով հի-
նանդութիւն կը ծագի :

7. Մայրերն իրենց ու զաւակներուն
կանոն թող ընեն ամէն օր սանտրուելու
եւ երեսնին ու ձեռքերնին լուսլ , ա-
ռանց այս կատարած ըլլալու նախաձաշ
ընելու չեն , ոջիլ , լու եւլն . աղտեղու-
թեան ազդարարներն են . ինչպէս հո-
տած միս կ'որդնոտի , անանկ ալ աղ-
տեղի անձ կ'ոջլոտի :

8. Միշտ մաքուր օդ շնչելու է որ
մարդս առողջ մնայ : Շատ մը հոգի մէկ
սենեակի մէջ , գոցուած դռներով ու
պատուհաններով , եթէ նստին կամ
պառկին , մէկգմէկու արտաշնչած օդն
կը շնչեն :

9. Արտաշնչուած շունչը ապակա-
նած է . եւ ինչպէս կը զգուինք ուրի-

չին ծամած կերակուր ուտել , այնպէս
պէտք է զգուինք այլոց արտաշնչած
օդը շնչել :

10. Ուստի պատուհաններդ բաց , նա
որ կը բանայ պատուհան մաքուր օդին ,
կը գոցէ դռներն բժիշկին ու դեղագոր-
ծին . իսկ նա որ մաքուր օդին կը գոցէ
պատուհաններ , պէտք է բժիշկին բաց
ձգէ իւր դռներ :

19. Մանաւանդ քանի մը հոգի ի միա-
սին մէկ սենեակի մէջ պառկած ատեն-
նին , դեռ չպառկած բոլոր պատուհան-
ներն եւ դռնն բանալով մաքուր օդ
ներս ընդունելու ու ապա պառկելու է :

12. Բայց որովհետեւ այս ընդունուած
օդ բոլոր գիշերուան չբաւէր , պէտք է
հատ մը պատուհան բոլոր գիշեր բաց
թողուլ , կամ լուս եւս է պատուհան-
ներէն վեր ծակ մը բանալ պատին մէջ ,
որ օդը փոխուի առանց ո'րեւէ մէկու մը
զլխուն վրայէն անցնելու :

14. Սովորաբար ցերեկ հագած հան-
դերձները գիշերը պառկած սենեակնիս
կը դնենք , այս լաւ չէ . սենեակէն դուրս
օդասուն անդ մը դիր որ մաքրուին :

15. Օդ , մաքուր օդ առնել խորհե-
լով չըլլար որ քրտնած ու յոգնած ա-
տենդ օդին հոսանքին առջեւ նստիս
կամ քնանառ , յանկարծական մահ իսկ
կրնայ պատահիլ այսպէս ընողին :

16. Եթէ օդին հոսանքին մէջ նստե-
լով պող ես առած , շուտով քրտնցնող
թէյ մը խմէ . բայց քրտնելէդ ետեւ
պաղ առնելու չես : Գաւաթ մը սուրճ ,
երկու ապուրի զգալ ձէթ ալ լաւ դեղ
մ'է ցրտառութեան :

17. Ճերմակեղէններիդ բնաւ խոնաւ
չհաղնիս , հիւանդութեան եւ մահուան
պատճառ կ'ըլլայ այս . ստոյգ գիտցիր
որ լաւ չորցած են անոնք հազնելէդ
առաջ :

18. Մեր առողջութիւնը մահաւանդ

ստամոքսէն է կախեալ . հոգ տար կեր
ու խումիդ : Մի ուտեր արագ , մի ու-
տեր սոռչպ , մի ուտեր փնասակար բա-
ներ : Ստամոքս շուտով ցոյց կուտայ
իրեն հետ չարաչար վարուելնիս , դուրս
կուտայ ու կը մերժէ :

19. Զգուշութեամբ վարուէ ստամոք-
սիդ հետ . երբ այս ինչ կերակուր ցաւ
կը պատճառէ ստամոքսիդ , բնաւ մի ու-
տեր անկէ . որքան հաճելի ալ թուի
քեզ , Գլխու ցաւը նշան է ստամոքսի
աւերման , ուստի կառավարէ ախորժակդ :

20. Ուտենք որ ապրինք , ոչ թէ ապ-
րինք որ ուտենք . զուարճանալու հա-
մար ուտելն ու խմելն ստամոքսին հետ
լուրջալ է , գիտցիր որ ուշ կամ կանուխ
կը տուժես :

21. Չափաւորութիւնն ոչ թէ միայն
կերութեամբ մէջ այլ ամէն մարմնական
հաճոյից նկատմամբ մարդս առողջ , եր-
ջանիկ ու երկայնակեաց կ'ընէ :

22. Կանոնաւոր ժամանակ ուտելու , ինչ որ ձեռքն հասնի բերանը չնետել , լաւ ծամել , չծամած կուլ չտալ , ասոնց անհոգ եղողը սաամոքսը կը տկարացունէ ու ախտերու ենթակայ կ'ըլլայ :

23. Իւղոտ կերակուրն արեան վրայ լաւ ազդեցութիւն չունի , ինչպէս նաեւ շատ համեմտալն , մարմնոյ վէրքեր ու մորթի հիւանդութիւնք ասկէ յառաջ կուգան : Տհաս պտուղներ մի ուտեր :

24. Չափահասք պէտք է 7-8 ժամ քնանան , աղայք 9-10 ժամ . կերակուրէն ետեւ անմիջապէս քնանալը վնասակար է :

25. Աջ կողմից վրայ պառկիլն սովորութիւն եւ կանոն ըրէ . ձախ կողմի ու մանաւանդ կրնակի վրայ պառկիլը վնասակար է ու անհանգիստ կ'ընէ քեզ երազներով :

26. Սորվեցուր աղայոցդ կանուխ պառկիլ . ի՛նչ վնասակար սովորութիւն է

աղաքներն հետերնին հոս ու հոն երթալ եւ մինչև կէս զիշեր պարտաւորել փոքրներն իրենց խօսակցութեան մաիկ ընել : Կեանք կը կարճնայ քնոյ յատկացեալ զիշերային ժամերը զուարճութեանց նուիրել :

27. Ամփոփելով ըսուածները կ'ըսենք թէ առողջ , երջանիկ ու երկայնակեաց ըլլալու համար պէտք է մաքուր օդ , մաքուր մարմին , մաքուր հանգերձ , մաքուր բնակարան :

28. Յրտառութենէ զգուշանալ , տրուած կանոններուն ճշղիւ հետեւելով :

29. Սաամոքս միշտ առողջ եւ լաւ դործող վիճակի մէջ պահել , չխանդարելով անոր պաշտօն :

30. Յարմար եւ քնոյ որոշեալ ժամերուն չափաւոր քուն , փոքրերուն 2-3 ժամ աւելի քան մեծերուն :

Ընդհանրութիւն չունի ժամանակ

առողջաբանական մեծ հատորներ կարողալ, եթէ կարողայ ալ չհասկնար. սակայն վերոյիշեալներն ամէն աղայ կը հասկնայ, ու զայն գործադրելով իւրաքանչիւր կրնայ մնալ առողջ, երջանիկ եւ եթէ Աստուած ուզէ, նաեւ երկայնակեաց :

30 ՀՐԱՀԱՆԴ ԵՐԱԽԱՅԻՑ ՀԱՄԱՐ

Երախային յուշատեւրէն քաղուած

Առաջին օր. — Հիանալի՛, սքանչելի՛, վերջապէս աշխարհ եկայ. ո՛վ կը հաւատար թէ ազատ շունչ պիտի առնէի, թէ ուղածիս չափ պիտի պօռայի. տեսնենք, երազածիս չափ պիտի ըլլայ : Սա արեւին լոյս ո՛րքան կ'ուրախացունէ զիս : Կապոյտ երկինք, մաքուր, զովարար օդ. ո՛հ, տաք, մարմինս այժմ պիտի զովանայ : Տեսնենք սակայն թէ այս փառաւոր բաները պիտի վայելե՞մ :

Երկրորդ օր. — Ա՛խ, այս սարսափելի տաքութիւնը. բոլորովին յուսախափ եմ. օդը, ջուրը, ո՛րքան տարբեր կ'երեւակայէի : Բայց համբերութիւն, կամաց կամաց ամէն բան հարկաւ կարգի պիտի դուրի : Զիս խնամող պառաւը կ'երեւի թէ զիս բնաւ չհասկընար :

Հինգերորդ օր. — Բաներն դեռ չի փոխուեցան եթէ այսպէս շարունակէ, իրաւ է որ չեմ կրնար դիմանալ : Այս ի՛նչ փորձանք. բոլոր օրը փետուրէ տաք անկողնոյ մէջ թաղուած պէտք է մնամ, հազիւ կրնամ քիչ մը շունչ առնել. երկու հատ կտաւէ, հատ մ'ալ բուրդէ խանձարուր, շապիկ, բուրդէ բաճկոն, փետուրով լցուած անկողին, գլխէս մինչեւ օտքիս մատերը լաւ մը փաթթուած, վրաս ալ բուրդէ հաստ վերմակ մը, որոննիս վարագոյրներն գոցուած, սենեակըս կրկին վարագոյրներով մթնցած, պատուհաններ գոցուած, օրը 24 ժամ այնպէս պարտիմ բանտարկեալ մնալ : Մարմինիս ջերմութիւնը քովի վառա-

բանինը կը զերազանցէ , գոնէ ասիկա իր
 ջերմութիւնը գուրս կրնայ տալ , մինչ
 ես ստիպեալ եմ մէջս պահել : Ա՛խ ,
 հնա՞ր է ասոր դիմանալ . կը պօռամ ու
 պառաւը շուտ մը տաք կաթ կը հաս-
 ցունէ , եւ ինծի կը խմցունէ , որով
 ջերմութիւնս ու տաքնապս կ'աւելնայ :
 Ո՛հ , խեղճ ուղեղս ու մորթս տաքէն
 բորբոքած ըլլալով ձեռքերս կը ստօին .
 սնկութ պառաւը զայս զգացածին պէս
 բուրդէ ծածկոցներով կը ծածկէ զիս ,
 ա՛լ պիտի մարիմ տաքնապէս , նուազ-
 եալ անքերս չորս կողմ դարձունեմ , օգ-
 նութիւն կը փնտռեմ , բայց իմ չարչա-
 րիչս կ'ըսէ . վա՛խ , չօճուխը կը մօտ կոր
 աւելի տաքցունելու է , եւ կը վազէ
 մանկալը կը խառնէ ու հաստ կօրկան
 մալ վրաս կը ծածկէ : Ա՛խ , չկա՞յ
 մէկը որ զիս հասկնայ ու ինձ օգնու-
 թեան հասնի :

Տասներորդ օր . — Նորէն աճուելի
 զիչեր մ'անցուցի , օղը զիս խեղդելու
 սասիճանի է հասած . կը պօռամ , ո՞ր
 է հասկցողը , հազիւ թէ ձայնս լսեն ,

չուտով կաթը կը հասցունեն . պէտք է
 խմեմ , նորէն խմեմ , զարձեալ խմեմ ,
 մինչեւ որ ստամոքսս բոլորը դուրս
 ապ : Անձկանօք սպասէի որ այս առա-
 ւօտ լոգանք տան ինձ , կը խորհէի թէ
 ջուրը ուրիշ ասեմներէ աւելի գաղջ
 պիտի ըլլայ . բայց հազիւ թէ զիս հան-
 ուեցուցին , ահա իսկոյն զիս նորէն ծը-
 րարեցին . ինչո՞ւ , քանզի պառաւը ծը-
 րարիս մէջ կանանչ բան մ'է տեսեր .
 բժիշկին վազեցին . սա եկաւ ու զիս
 իմ ծրարէ գերեզմանիս մէջ քննեց , բան
 մ'ալ չհասկցաւ , պառաւէն վար չմնար
 աս ալ . բան մը չկրցաւ ընել թէեւ
 դառն արտասուէնք յայտնեցի անոր իմ
 չարչարանքս ու ցաւերս : Կէս ժամէն
 ետեւ զգալ մը գարշահոտ ու քիչ մ'ա-
 նուշահամ բան մը թափեցին կոկորդս
 ի վար , ասիկա իմ զժբազդ ստամոքսս
 պիտի բուժէ եղե՛ր . . . օ՞ղ , օ՞ղ , զով ,
 մաքուր օ՞ղ , լո՞յս , ջո՞ւր . . . : Արդ-
 եօք այս աշխարհիս անթիւ օրհնութիւն-
 ներն ինձ համար չե՞ն . . . :

Երկուսասներորդ օր . — Հասկցայ

բանս բուսած է, երէկ մեծ ժողով մը կար. մօրաքոյր, հօրաքոյր, ազգականք ու դրացիք խորհուրդ ըրին, իւրաքանչիւր դեղ մը, դարման մը կ'առաջարկէր իմ հիւանդութեանս համար, բոլորն ալ սա գաղափարն ունէին թէ պաղառութեան դո՛հ եմ եղած. նախ ուրոշեցին զիս աւելի տաք պահել, յետոյ նորահնար ալիւրէ կերակուր մը կերցուցին ինձ, քիչ մ'ալ զինի, զօրութիւնս պահելու համար. վախ, ասի ուղեղս կարծես բռնկցուց. այլեւս պաղարեցայ ձայն հանելէ, կիսամուռ մնացի լաթէ գերեզմանիս մէջ, Ծանելաներ բերին, զիս լաւ մը փաթթեցին անոնցմով, դգալ դգալ կոկորդս ի վար կերակուր կը լեցունէին անդադար, թէեւ ամէն անգամ ստամոքսս նորէն դուրս կուտար ընդունածը, ոտքերս ալ երկնցուցին լաւ մը փաթթեցին, անանկ որ անհրոնար էր զանոնք քիչ մը վեր քաշել ու մեղմացնել որովայնիս ցաւերն. օդին անցքերն լաւ մը խցեր են, քանզի պաղ եմ առած. աս ի'նչ փորձանք էր որ գլուխս եկաւ, Աստուած իմ, զգացմուն-

քըս կամաց կամաց կը փթանան երանի թէ ժամ մ'առաջ ամէն բան իր վախճանին հասնէր :

Երեքտասներորդ օր. — Բարեաւ մնաս, աշխարհդ գեղեցիկ, քու պատուական օրդ եւ լոյսդ ինձմէ զլացան. չկրցայ վայելել զքեզ. օ՛ն, հոն կ'երթամ, ուր չկան կապեր ու կապանքներ, մնաս բարեաւ սիրուն աշխարհ :

ՏՕԲԹ. ԿԵՐՍՅԸՐ

(Մանկատածութեան բոլորովին անծանօթ մայրեր, այսպիսի հրահանգներ կարդալով, մեծ օգուտներ պիտի քաղեն, որով անմեղ մանկանց կեանք պիտի փրկուի : Սիրով պատրաստ ենք հրատարակել, յաջորդ օրացոյցիս մէջ, այսպիսի ոճով գրուած հրահանգներ, եթէ մեր ազնիւ բժիշկներն բարեհաճին խրկել մեզ) :

Ջերմիւ կը յանձնարարենք « Մայրիկին Առաջնորդը » Հայ մայրերու . Գին 2 զրշ. Յ. Մատթէոսեան գրատուն :

« Եօթն ամսու երախայ մ'եմ . ան-
գութ ծնողքս զիս տարածամ « կաթէն
կարեցին » . միտքս զրի բան չուտել ,
բայց չի պիտի կրնամ համբերել անօթի .
ինձ վիճակակից երախաներ ի'նչ անունդ
պէտք է ստանան որ ստամոքսի խան-
գարում չունենան » :

ԱՇՈՏԻԿ

« Քանի որ , զժբախտ երախա' , ծը-
նողքդ հարկաւ ստիպման մը հարկին
տակ , զրկեցին զքեզ կենսատու անուն-
դէդ , եւ անոր անզը բռնող անունդ մը
զիանալ կ'ուզես , պիտի գոհացունեմ
զքեզ պէտք եղած հրահանգն « Հանրա-
գրտակի » միջոցով ծնողացդ հաղորդելով » :

ԱՐԱՔՍ

Ֆրանսայի նոր մի օրէնք բանտար-
կութեան եւ զրամական տուգանքի կը
գատապարտէ այն ծնողք , որ , առանց
բժիշկի արտօնութեան իրենց զաւակը
մէկ տարեկանէն առաջ կաթէն կը կըտ-
րեն :

Տարածամ կաթնահարութենէ յառաջ
կուգան շատ մը հիւանդութիւններ ու
ախտեր , որոնք դառն հեանեանքներ կը
ձգեն ապագայ մարդուն կազմութեան
վրայ :

Ծնողք ժամանակէն առաջ երախա-
ները կաթէն կը կտրեն , քանզի մայ-
րեր կը կարծեն թէ բնական կաթը կուշտ
չպահեր երախան , եւ ուստի արարօթ ,
թապեօքա եւլն . կուտան երախանե-
րուն : Այս շատ սխալ կարծիք մ'է :

Ստիպողական պարագաներէ դուրս—
այսինքն մօր հիւանդութիւն , յլութիւն
եւլն — երախան 12—18 ամսու չեղած
պէտք չէ կտրել կաթէն , քանզի եթէ
այս տարիքէն առաջ կտրուին կաթէն ,
մարմնոյ աճում կը դադարի ու ծանր
վտանգներու կ'ենթարկուին :

Այս վտանգներն են . անմարտողու-
թիւն , դժուարամարտութիւն , անհանգըս-
տութիւն , անքնութիւն , աղէլուծու-
թիւն , աղէպնդութիւն : Մանաւանդ

ակուայ հանելու ժամանակ , երախանե-
րուն վտանգաւոր վիճակն ըլլալով ,
պէտք է շարունակել կաթ տալ , մին-
չեւ որ ակոաները , գոնէ մեծաւ մա-
սամբ , բուսած ըլլան :

Շատ երկար կաթնատութիւնն ալ
լաւ հեանեանք չունենար , ոչ թէ մեծ
դժուարութեամբ կաթէն կտրուելով , այլ
իրենց տարիքին յարկար անուղի ան-
վարժ գանուելով հետզհետէ կը տկա-
րանան :

Կաթնահարութեան , կաթնատու կնոջ
եւ արուեստական կաթնատութեան նը-
կատմամբ լի ու լի հրահանգներ արուած
են « Մայրիկին Առաջնորդը » տետրին
մէջ : Գին 40 փարա : Կը յանձնարա-
րենք զայն իւրաքանչիւր մօր :

Ինչպէս կարելի է կնոջ կաթին ըն-
տիր յատկութիւններն ունեցող կաթ մը
գտնել , կը հարցունէ Արաքս « Հան-
րապետակ »-ին մէջ . եւ կը յաւելու . Պի-
տի ուզէի որ , մօր մը պակասութեան

կամ կաթի չգոյութեան ատեն ամէն
ջանք ի գործ դրուի կնոջական կաթէն
չգրկելու այդ դժբաղդ փոքրիկները , գո-
նէ օրը 2-3 անգամ կաթնատու կնոջ մը
տարուի ու մնացեալ կաթնատութիւնը
արուեստական ըլլայ :

Արուեստական կաթնատութեան մէջ
ամենէն յարմարը կովու կաթն է . երա-
նի թէ տան մէջ կաթնատու կով մը զըտ-
նուի , քանզի ոչ թէ խարդախեալ կա-
թեր շատ կան , այլ նաեւ ընտիր , ա-
նարատ կաթն իսկ տեղափոխուելով
կ'աւրուի ու երախային մեծ վնասներ
կը պատճառէ :

Ահա կովու կաթը պատրաստելու
կանոնը . Առաջին օր , այն է երախային
ծնած օրն , 2 ապուրի դգալ կաթ , 3 դը-
գալ շաքար ջուր եփելով խառնէ եւ
վրայի սերուցը հեռացուր եւ 20 աստի-
ճան գաղջ վիճակի մէջ տուր երախա-
յին . 2½ ժամու համար այս քանակու-
թիւն կը բաւէ : Երկրորդ օր 6 դգալ
կաթ , 4 դգալ շաքար ջուր , նոյն կերպով

պատրաստուած միշտ սերուցը առնուած :
 Երրորդ օր 20 դգալ կաթ , 12 դգալ շա-
 քար ջուր , որ 24 ժամուան մէջ 10 ան-
 դամէն տալու է , իբր 2 ժամը մէկ ան-
 դամ . քնացած երախան պէտք չէ ար-
 թընցունել կերակրելու համար : Գիշերն
 ալ կաթ տալու վարժեցունելու չէ , գո-
 նէ 5-6 ժամ . քուն սնունդի նման կա-
 րելոր է :

Չորրորդ օր 25 դգալ կաթ 15 դգալ
 շաքար ջուր . այսպէս մինչեւ առաջին
 ամսուն վերջ ամէն օր քիչ քիչ աւել-
 ցունելով կաթին եւ շաքարջուրի քա-
 նակութիւն կէս քաչի բարձրացած ըլ-
 լալու է , որ 24 ժամուան մէջ 9-10
 անգամէն պէտք է տրուի երախային :

Երկրորդ ամիս 225 տրամ կերակուր ,
 այսինքն 125 տրամ կաթ եւ 100 տրամ
 շաքար ջուր . երրորդ ամիս 250 տրամ
 կերակուր , որոյ միայն 80 տրամը շա-
 քար ջուր ու մնացեալը կաթ . չորրորդ
 ամիս 250 տրամ կաթ 75 տրամ շաքար
 ջուր . հինգերորդ ամիս 300 տրամ կաթ

50 տրամ շաքար ջուր . վեցերորդ ամիս 350 տրամ կաթ ու 50 տրամ շաքար ջուր :

Եօթներրորդ եւ ութերորդ ամիս քիչ քիչ բարձրացուր սնունդը՝ մինչեւ 350 տրամ զուտ կաթ , քիչ մը շաքարով առանց ջրոյ . իններրորդ եւ տասներրորդ ամիսները մինչեւ քաչ մը զուտ կաթ շաքարով առանց ջուրի , միշտ սերուց հեռացունելով : Տասներրորդ ամիսն անցնելուն երախան կրնայ ուրիշ սնունդ ալ ստանալ :

Ի սկզբան յարմարագոյնն է փոշիացած կալէթան որ շաքարախառն կաթի հետ խառնելով եփելու ու դաղջ վիճակի մէջ կերցունելու է : Այս սնունդ ճրդ ամիսէն ալ կրնայ սկսուիլ եթէ երախան առողջ է :

Այս կերակուրէն ալ տրուիլ սկսուած առնն օրը 2-3 թէյի դգալ , առաջին օրը , պէտք է տրուիլ , ցերեկը միայն , երկրորդ օրը 3-4 թէյի դգալ . աւելցա-

ծը պահելով ու տաքցնելով երբէք տրուելու չէ . միշտ թարմ , ամէն անգամուն համար նոր պատրաստել , լաւ եփել . այս է կանոն :

Իններորդ կամ տասներորդ ամիսէն օրը 3 ճաշ կրնայ տրուիլ երախաներուն սա կերպով . վարսակի ալիւր 2 թէյի դգալ՝ թէյի գաւաթ մը կաթով : կաթը եռացուր հետը քիչ մը շաքար ու խիստ քիչ աղ դնելով . ալիւրը նախ քիչ մը պաղ ջուրի մէջ յարէ եւ լից եռացող կաթին մէջ , շարունակ խառնելով , երկու վայրկեանէն բէլթէ կ'ըլլայ , վար առ կրակէն կամ սրիթօյի կանթեղին վրայէն ու գաղջ վիճակի մէջ կերցուր :

Վարսակի ալիւրը կաթէն կտրուելէ ետեւ ալ լաւ սնունդ մ'է երախային համար . տղուն կուտայ առուգութիւն , կը կազդուրէ զանի ու տկարակազմը կը զօրացունէ :

Գարիի ալիւր աղեպնդութիւն ունե-

ցող երախային համար օգտակար է . խոզկաղնիի — փալամուտ — ալիւրը աղելու ծութիւն ունեցող ազուն օգտակար է . կաթնալիւր — Փարին լաքթէ — , թապեօքա , արարօտ , բրինձի ալիւր եւն . բայց խարդախեալներէն զգոյշ պէտք է ըլլալ : Տորենի եւ վարսակի ալիւր ու պաքսիմատ — քալէթա — ամենէն ապահովն է :

Աղեպնդութեան համար գարին այսպէս կը ստորաստուի . մէկուկէս թէյի դրգալ գարին սրճաղացի — տէյիրմէն — մէջ աղացէք : — Սրճաղացը մաքրելու համար նախ մէկ քանի դգալ գարի աղացէք , մինչեւ որ սուրճի հետք չմնայ :

Գարիի ալիւրը 50 արամ ջուրի մէջ լեցուցէք , քիչիկ մ'ալ աղ աւելցուցէք վրան . քառորդ ժամ եռացուցէք , յետոյ մաքուր լաթէ մը սլարգեցէք — սիւզմէք — , կէսին չափ կոլի կաթ աւելցուցէք վրան , քիչ մ'ալ շաքար . երբ գաղջ վիճակի մէջ է լեցուցէք սրուակին — պիպէոն — մէջ ու աղեպնդութիւն ունեցող երախային տուէք :


Խոզկաղինի ալիւր զեղագործները կը ծախեն , բայց տունէն ալ կրնանք շինել խոզկաղինի վրայի կեղեւն հանելով , միջուկը սուրճի նման խարկելով — գաւլուրմագ — ու գարիին նման սրճալացով ազալով :

Փաւաթ մը ջուրի մէջ դիր թէյի դրգալ մը խոզկաղինի ալիւր , նոյնչափ ալ շաքար . եփէ քառորդ ժամ , լաթէ անցուր ու խմցուր աղելու ծուծիւն ունեցող մանկիկին :

Այս կանոններուն հետեւելով ոչ թէ միայն երախաներն առողջ ու կայտառ կը մեծնան , այլ նաեւ մայրեր շատ հանգիստ կ'ընեն , քանզի երախաներուն հիււանդանալուն գլխաւոր պատճառն — ստամոքսի խանգարում — վերնալով մայրերն ալ մաշեցուցիչ յուզումներէ ազատուած կ'ըլլան :

« Հանրագիտակ » ի ընթերցումն այս առթիւ շեշտելով կը յանձնարարենք ամէն կարգի ազգայնոց , ուր իւրաքան-

չիւր կրնայ գտնել հարկ եղած հրահանգ , առօրեայ կենաց զանազան կարեւոր խնդրոց նկատմամբ : Վերոյիշեալը նմոյշ մ'է միայն , զոր փոփոխութեան ենթարկած ենք օրացոյցիս յարմարցունելու համար :



Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

28 Հրահանգ ծնողաց ու զաւակաց հաւեստ

1. Հօր մը սրբազան պարտականութիւնն է ոչ թէ իր զաւակաց պէտքերն ամենայնիւ հոգալ, այլ նաեւ կրթել, դաստիարակել եւ բանաւոր վիճակի տէր ընել զանոնք :

2. Այս մասին պէտք է զաւակաց մէջ խտրութիւն ու զանազանութիւն չընել . ինչպէս սովորութիւն է, անդրանիկն յառաջ քշելով մնացեալներն իրենց բախտին ձգել : Սիրէ զաւակներդ բոլորն ալ միեւնոյն սիրով եւ միեւնոյն աստիճան խնամ տար անոնց :

3. Բնական է երբեմն մեր Բենիամիւններուն — զաւակաց կրտսերագոյն-

ներուն — փոքր ինչ աւելի գորով ցոյց տալ, բայց անիրաւութիւն ու զրկանք է բոլոր սէր անոր վրայ կեդրոնացունել եւ զայն քու բոլոր խնամոցդ առարկայ ընես ի վնաս միւսներուն :

4. Բարեսիրտ եղիր զաւակացդ բայց չափաւորութեամբ . անոնց կամքին մի զիջանիր . աչք մի գոցեր անոնց մոլութեանց ու չար վարուց : զսպէ անոնց անկարգութիւն, եթէ խօսք, յորդոր օգուտ չընէ, խիստ ու զօրաւոր միջոցներու դիմէ, սակայն մի մոռնար անոնց համար ազօթել :

5. Հայր մը իր զաւակը քահանային բերաւ . ալ ճար չմտաց վրաս, Տէր Հայր ըսաւ . ամէն բան ըրի որ այս ազան ուղղութեան բերեմ, բայց ի զուր . ուստի դայս քեզ կը յանձնեմ, ինչ որ կ'ուզէք ըրէք : Ամէն բան ըրի՞ք իրաւ, հարցուց քահանան : Այո՛, ամէն բան, Տէր Հայր : Տղուդ հետ եւ աղուդ համար ազօթք ըրի՞ր, հարցուց բարի եւ կեղեցականը : Հայրը շուարելով պա-

տասխանեց . ոչ Տէր Հայր , ատիկա ը-
րած չեմ բնաւ : Գնա՛ , ուրեմն , օրհնած ,
ըսաւ քահանան ու գործածէ այս վեր-
ջին միջոց ամենայն աշխոյժիւ ու եթէ
չյաջողիս ան ատեն տղադ ինձ բեր :
Յետոյ տղուն ալ քանի մը ազդու յոր-
դորներ ընկելով ճանբեց զանոնք : Շատ
չանցած հայրը քահանային դալով ու-
րախութեամբ պատմեց թէ տղան բոլո-
րովին բարեփոխեց իր բարք ու վարք :

6. Հա՛յր , հաստատ պահէ հեղինա-
կութիւնդ , քանի որ կ'ապրիս , կ'ըսէ
իմաստունը , մի տար իշխանութիւնդ
մէկու մը , ոչ կնոջդ , ոչ որդւոյդ , ոչ
եղբորդ եւ ոչ բարեկամիդ , մի չնորհեր
մէկուն ստացուածքդ որ չըլլայ թէ վեր-
ջը զգջաս : Աւելի լաւ է որ ուրիշները
քեզ աղաչեն , քան թէ դու անոնց ա-
ղաչել ստիպուիս ու անոնց ապերախ-
տութեան զոհ երթաս :

7. Նա որ ծառայ ունի պէտք է
ինքզինք անոնց հայր նկատէ . պարտի
հայրաբար վարուի անոնց հետ , սնու-

ցանէ , կրթէ ու աշխատցունէ զանոնք ,
եւ ժամանակին արգար հատուցում ընէ
անոնց , եթէ ոչ կամ գողութիւն պիտի
ընեն եւ կամ տունէդ մեկնին :

8. Միշտ գործով զբաղեցուր զա-
նոնք , քանզի անգործը չարութիւն գոր-
ծել կը սորվի , ծուլութիւնն է մայր
ծնող չարեաց . ծոյլ ծառայ ունենալ
ըսել է տան մէջ թշնամի , մասնիչ
սնուցանել : Հսկէ որ անոնք կրօնական
պարսաւորութիւնք կատարելու ժամա-
նակ ունենան եւ ջանա՛ որ զայնս ի գործ
դնել տաս :

9. Հնար եղածին չափ քիչ ծառայ
ուսնեմալ ջանա . որքան բաղձաթիւ ըլ-
լան ծառաներդ , այնքան անհանգստու-
թիւնդ կ'աւելնայ : Եպիսկոպոս մը որ
չատ ծառաներ ունէր , այցելեց երեւելի
նկարչի մը . երբ եպիսկոպոսը պիտի
մեկնէր , նկարիչը ճրագն առաւ եւ ա-
ռաջնորդեց մինչեւ դուռը : Շատ կը ցա-
ւիմ որ ծառայ չունիս , ըսաւ եպիսկո-
պոսը : Եւ ես աւելի շատ կը ցաւիմ որ

դու այնքան շատ ծառաներ ունիս :

10. Ծառայ փոխելը տան պատիւը կը վտանգէ . եւ ոչ ոք կ'ուզէ հոն մտնել , ուստի կամ գէշը պիտի գայ կամ անվարժը եւ քու կրթածդ ուրիշը պիտի ուրախացնէ : Նոյնը նաեւ վարժարանաց համար ճշմարտութիւն մ'է . դասատու փոխելը շատ վնասակար է :

11. Ծառաներդ չարաչար մի գործածէր , անոնք ալ քեզ նման մարդ են , քեզ նման զգացում եւ արժանապատուութիւն ունին : Վնասելու սպառնալիք մի ընէր , այլ քաղցրութեամբ արձակէ եթէ գոհ չես : Ներողամիտ եղիր անոնց թերութեանց : Իր ծառայէն դժգոհ մէկը օր մը հարցուց ծառային թէ կ'որք մտադիր է թողուլ իր թերութիւնք : Քանի որ Աստուած մեր օգտին համար ձեզ կեանք կը պարգևէ , ըսաւ ծառան , մենք յանցանք պիտի գործենք եւ դուք նորողամիտ պիտի ըլլաք :

12. Ծառայիդ հետ շատ մի խօսիր , ոչ ալ շատ ընտանութիւն ըրէ անոր հետ , որ ակնածին քեզմէ եւ իբր աէր սիրեն քեզ : Սակայն ցաւակից եղիր անոնց երբ տկար են , եւ երբ առողջանան աւելի սիրով կը ծառայեն . խնամէ անոնց գործերն եւ անոնք ալ քու բարեսրտութեանդ փոխարէն աւելի փոյթ պիտի ունենան քու շահերուդ :

13. Պատուէ քու հայրդ ու մայրդ . սա որդւոց նուիրական պարտքն է . ուստի պարտինք ծնողաց ցոյց տալ սէր , ակնածութիւն , հնազանդութիւն եւ ծառայութիւն , պատուաւոր կերպով զանոնք ողջունել , հեղութեամբ խօսիլ հետերնին , այցելել զանոնք : Չկարծուի թէ այս պատուէր փոքր տղայոց համար է . այլ որքան մեր կացութիւն անոնց վիճակէն բարձր ըլլայ , այս պարտաւորութիւնք անհրաժեշտ են :

14. Ծնողաց դէմ ունեցած պարտականութիւնք , փոխանակ հրահանգներով՝ օրինակներով բացատրենք .

Անբաններէ օրինակ մը . — Այս առաւօտ երբ անկողինս նստած կը կարդայի , կ'ըսէ Գերմանացի զօրապետ մը , յանկարծ մկան ձայն մ'եկաւ ականջիս , եւ տեսայ որ ծակէն մուկ մը դուրս ելաւ , շուրջը նայեցաւ ու նորէն ծակը մտաւ : Քիչ յետոյ նորէն ետ դարձաւ իրմէ մեծ մուկ մը հետն առած , ծերացած ու խռճած , եւ ականջէն քաշելով ծակէն դուրս հանեց . ուրիշ մուկ մ'ալ եկաւ ասոնց ընկերացաւ . երկուքը սենեակին մէջ հացի փշրանք ժողուելով ծեր մկան տարին : Քննեցի եւ տեսայ որ ծեր մուկը կոյր էր . եւ ստոյգ եւ որ զայն խնամող մուկերն իր ձագերն էին : Յանկարծ դուռս զարնուեցաւ եւ երկու ձագերը ճիչ մ'արձակեցին եւ մինչեւ որ ծերուկը ծակ չմտաւ , իրենք ինքզինքնին աղատել չխորհեցան : Արարիչ սնրան անասնոց ներշնչեւ եւ գութ , կարեկցութիւն առ ծնողս , իսկ մեզի , բանական էակներնուս՝ պատիրեւ ե :

15. Այլ առակ լուարուք : Տղայ մը Գաղղիոյ զինուորական դպրոցն ընդունուե-

լով կերակրոց մասին այնքան չափաւոր էր որ անօրէնը յանդիմանեց զինքը . բայց ի զուր . խնամակալը կանչեց տղան ու հրամայեց որ իր ընկերաց նման ուտէ ու խմէ . երբ տեսաւ որ ականջ չկախէր , սպառնացաւ վնասել դպրոցէն : Ան ատեն տղան սապէս պատասխանեց . « Հօրս տունը սեւ հաց կ'ուտէինք , ան ալ խիստ քիչ , եւ շատ անգամ առանց կերակուրի , հոս առատ կերակուր ու սպիտակ հաց կայ թէեւ , բայց երբ ծնողացս խեղճ վիճակ աչացս առջին կուգայ , ախորժակս կը գոցուի » : Տնօրէնը այնքան գոհ եղաւ այս ծնողասէր աղէն որ երեք օսկի նուիրեց եւ հօրն ալ 100 Քրանք թոշակ կապել տուաւ , քանզի հին զինուոր մ'էր նա :

16. Ուրիշ օրինակ մ'ալ ծնողասիրութեան : Շուէտի թագաւորը ծպտեալ գիւղէ մը անցած ատեն , ազրիւրի մը քով աղջիկէ մը ջուր խնդրեց . սա շնորհալի կերպով իսկոյն խնդիրքը կատարեց : Եթէ հետոս Սթոքհօլմ գաս , վիճակդ կը բարեւաւեւմ ըսաւ թագաւորը օրիորդին :

Աղջիկը շնորհակալութիւն յայտնեց, սակայն յարեց թէ խեղճ մայրն իրեն պէտք ունի : Թագաւորն ուղեց տեսնել մայրը եւ խրճիթ մը առաջնորդուելով տեսաւ հիւանդ , թշուառ ձեր կին մը : Խեղճ կին , ըսաւ թագաւորը , կը դթամ վիճակիդ : Ա՛հ , տէր իմ , աւելի թշուառ պիտի ըլլայի եթէ այս աղջիկը չունենայի , որ օրերս երկարել ջանաց բուռն աշխատանքով , Թագաւորը քսակ մը ոսկի տուաւ աղջկան ըսելով . յարատեւէ այս խնամք եւ ես շուտով ձեր վիճակ պիտի բարւոքեմ . մնաս բարով , օրիորդ , ես թագաւորդ եմ : Թագաւորն յետոյ ցկեանս թոշակ կապեց մօրը սա կարգադրութեամբ որ նորա մահէն ետեւ աղջիկը ստանայ նոյնը :

17. Որդեա՛կ , գոչէ Տովրիթ , ինամէ մայրդ բոլոր կենացդ մէջ , յիշելով թէ քանի՛ ցաւեր կրեր է նա եւ քեզ համար ի՛նչ վտանգներէ անցեր է :

Բացի ծնողաց , պարտինք պատուել ձերերը : Ծերուոնի Աթենացի մը թատրոնին մէջ նստելու տեղ չգտնելով ,

մէկ քանի պարուհիներ նշան ըրին որ իրենց քով երթայ . երբ ձերն իրենց մօտեցաւ ոչ թէ տեղ չտուին այլ ծաղրեցին զնա : Սպարտացւոց դեսպանք զայս տեսնելով բոլորը ոտք ելան եւ ձերը իրենց տեղը նստեցուցին : Բոլոր բազմութիւն ծափահարեց այս ագնիւ վարմունք տեսնելով : Ծերուոնին տխրագին ըսաւ . Աթենացիք լաւը զիսեւն , բայց Սպարտացիք զայն կ'սարեւն :

18. Զգայուն սիրտ ունեցողը այլոց թշուառութեան վրայ կը արամի ու կ'ուրախանայ զայն թեթեւցնելով եւ զայն ծանրացունել բնաւ չխորհիր : Երանի թէ գրել չգիտնայի ըսաւ Ներոն , երբ դատապարտուալի մը վճիռ պիտի վաւերացուներ : Նոյնպէս Կարալոս է , երբ պատժապարտի մը ո՛ւր ըլլալն իրեն իմաց տուին , ըսաւ , լաւ էր անոր իմաց տալիք իմ ուր ըլլալս , քան թէ ինձ՝ անոր ո՛ւր ըլլալը :

19. Յուլիոս Կեսար ճամբան փոթորիկի պատահելով աղքատ տնակ մ'ա-

պատճանեցաւ . բայց երբ տեսաւ որ հոն
գտնուած միակ սենեակը հիւանդ մ'է
գրաւած , բոլոր գիշերը քարայրի մը մէջ
անցուց եւ հիւրընկալին ըսաւ . Եթէ
ամենապատուական տեղերը մեծա-
մեծներուն կը վայելէ , ամենահանգիստ
տեղն ալ հիւանդներուն կը վայելէ :

20. Երեկոյ մը աղնւական մը ծա-
ռային հետ փողոցէն կ'անցնէր . մարդ մը
յարձակեցաւ վրան եւ ատրճանակ ցոյց
տալով քսակը պահանջեց : Սխալ ընտրու-
թիւն ես բրեր , ըսաւ աղնուականը ,
երեք ոսկի ունիմ ան ալ քեզի կուտամ :
Մարդը առաւ քսակն ու հեռացաւ :
Աղնուականը հրամայեց ծառային գաղտնի
հետեւիլ աւազակին : Վերագարձին ծա-
ռան պատմեց թէ մարդը քանի մը հաց
գնելով տուն մը մտաւ եւ հացերն կնոջն
առջին նետելով ըսաւ . Ահա հաց , կե-
րէք . սակայն գիտցէք որ ինծի շատ
սուղի նստաւ , ծանր պատիժ պիտի կրեմ :
Կինը հացը բաժնեց իր չորս զաւակաց ,
որք սովամահ ըլլալու վրայ էին : Հե-
տեւեալ օր աղնուականը ծառային հետ

այն տունը գնաց եւ նախ ստուգեց թէ
աւազակը պարկեշտ կօշկակար մ'էր ,
եւ սակայն խիստ չքաւոր : Ներս մտնե-
լուն անուելի թշուառութիւն աչաց առ-
ջին պարզուեցաւ . աւազակը ճանչ-
ցաւ իր նախորդ գիշեր կողոպտած մարդը
եւ ռաքը ինկաւ ու աղերսեց : Մի վախ-
նար ըսաւ նա , չեմ եկած քեզ կործա-
նել , այլ օգնել քեզ . գիտեմ որ կօշկա-
կար ես , առ սա 30 լիրան , դրամազուխ
բրէ եւ աշխատէ ընտանիքդ կերակրել .
եթէ խնամով գործիդ հետեւիս , գիացիր
որ քեզ նորէն պիտի յիշեմ : — Այս է
բարեգործութեան աղնիւ օրինակ :

21. Առատաձեռն եղիր . սա մարդս
կ'առաջնորդէ այլոց օգուտը իրենէն նա-
խատափել համարելով : Շատ տալը չէ
առաքինութիւն , այլ ժամանակին տալն :
Հովիւի մը խրճիթը այրեցաւ եւ հազիւ
թէ կրցաւ որդին ազատել բոցերէն .
բոլոր ունեցածն հրոյ ճարակ եղաւ : Նա
գիմեց աղնիւ անձի մը որոյ պարտք ու-
նէր եւ խնդրեց որ տարի մը պայման
տայ իրեն պարտքերը վճարելու : Նա

ոչ թէ կարեկցութեամբ լացաւ հովիւին հեա, այլ թողուց պարտքերն եւ 2000 Փրանք ալ նուէր ըրաւ իրեն :

22. Տալը սիրէ . աւելի երանելի է տալը քան առնելը, կ'ըսէ Սուրբ Գիրքս Վեհանձն հոգին, կ'ըսէր Պարսից Շահ մը, մէկ ձեռք փոքրիկ նուէրներ կ'ընդունի, իսկ միւսով մեծամեծ պարգեւներ կ'ընէ : Չեմ հասկնար, կ'ըսէր Տիւրէն, թէ մարդ մը իր սակին եւ արծաթը սնտուկին մէջ բանտարկելով ի՞նչ զուարճութիւն կրնայ զգալ . տարւոյն վախճանին երբ մեծ զուարթ մը եկամուտէս աւելցած գտնեմ անհանգիստ կ'ըլլամ, ճիշդ իբրեւ թէ լաւ մը կ'շատանալէս ետեւ նորէն կերակուր բերէին առջեւս :

23. Առատաձեւն եղիր, սակայն առանց մէկուն վրաս հասցնելու : Ֆրէտէրիք թագաւորը գահը չելած գերասան կ'նոջ մը շատ նուէրներ կ'ընէր, գահ ելլելէն ետեւ սակայն դադրեցուց : Կինը գանգատ ըրաւ . թագաւորը պատասխանեց . թագաւոր չեղած իմ անձնականէս կու-

տայի, իսկ հիմա հպատակացս ստացուածքէն կը գոցեմ ծախքերս :

24. Ով որ շատ կուտայ երկու անգամ տուած կը համարուի, կ'ըսէ առածը . սակայն շնորհալի կերպով օգնելը հարիւր անգամ օգնելու հաւասար է : Մի յանդիմաներ բարերարեալ անձը, պարգեւատուին խոժոռ դէմքը կը վիրաւորէ զպարգեւառուն : Լուսավիչոս ԺԳ. երբ Նէմի եպիսկոպոսութիւնը շնորհեց Ֆլէշիէի, ըսաւ . Մի գործմանար որ այսքան ուշ վարձատրեցի արժանիքդ, քանզի կը խորհէի որ ուրիշ թէ՛մ մը փոխադրելով պիտի զրկուէի քարոզներէդ :

25. Եթէ հնար չէ մէկու մը խնդիրքը կատարել, գոնէ ցոյց տուր թէ քեզ ցաւ կը պատճառէ այս անկարողութիւնդ : Երեւելի անձ մը Հէնրիկոս Ը. թագաւորէն իր մարդասպան բարեկամին ազատութիւնը խնդրեց : Մեծ ցաւ է ինձ, ըսաւ թագաւորը, որ հնար չէ կատարել խնդիրքդ . քեզ կը վալլէ բա-

րեկամիդ համար այդպէս գտնուիլ : Ես քեզ կը ներեմ որ այսպիսի խնդիր մը ինձ մատուցիր , դու ալ ինձ ներէ որ այս խնդիրքդ մերժեցի :

26. Քարերարութիւն թէեւ գաղտնի ըլլալու է , եւ ըստ Յիսուսի , աջ ձեռք ձախ ձեռքին դորձածը գիտնալու չէ , սակայն զայս ի բարեգործութիւն գրգռելու համար կրնանք հրատարակել զայն : Տ.ք. Մուլէն բժիշկը հիւանդ օրիորդի մը կ'այցելէր . ծնողք կը խոստովանին թէ անկարող են վարձք տալ , եւ կը խնդրեն որ այլ եւս չգայ : Բժիշկը 10 ոսկի կը ձգէ անոնց եւ կ'ըսէ որ ամէն գալուն իրեն վարձքը այդ գրամէն վճարեն , որպէս զի անոնց աղքատութիւն այլոց յայտնի չըլլայ :

27. Պարգեւատուութիւն արդար եւ մարդուն արժանեաց ու մատուցած ծառայութեան համեմատ պէտք է ըլլայ : Զինուոր մը պատերազմին մէջ երկու ձեռքերը կորսնցունելով զօրսպետի մը կը ներկայանայ . սա քիչ մը զրամ տա-

լով զանի ճամբել կ'ուզէ : Զինուոր կ'ըսէ . Աս ի՞նչ է , Տէր զօրսպետ , կարծէք թէ զոյգ մը ձեռնո՞ց է կորուսածս :

28. Խոհեմ եւ հաւատարիմ եզիր եւ ուրիշին մանաւանդ ընտանեացդ դաղտնիքը ուրիշին բնաւ մի յայաներ . հաւատարիմ եզիր անոնց որ գքեզ հաւատարիմ կը սեպեն . միտք բեր որ գաղտնիք ըստե՛ս ամէնէն նուիրական բաներէն մին է , եւ թէ ընկերութեան սկզբնական օրինաց մէկն ալ չյայտնուելու բանին վրայ լուծութիւն պահելն է . քանզի իրաւունք չունինք ըստ հաճոյս գործածել ինչ որ իբր աւանդ պահելու համար մեզ յանձնուած է :

41 ՀՐԱՀԱՆԳ ՕՐԻՈՐԴԱՅ ՀԱՄԱՐ

1. Կինը մեծագոյն աղքեցութիւնը ունի մարդուս վրայ թէ դէպ ի չարն ու թէ դէպ ի բարին :

2. Իւրաքանչիւր կին մարդուս անկման եւ կամ բարձրացման պատճառ կրնայ ըլլալ իր մոլութեամբ եւ յիմարութեամբ, կամ իր առաքինութեամբ եւ իմաստութեամբ :

3. Կինը կարող է աւերեալ եւ կործանեալ տունը վերականգնել, ընդհակառակն կրնայ նաեւ փառաւոր ու հոյակապ պարանքը աւերակաց կոյտի մը վերածել :

4. Մեծանուն զօրավար մը ա՛յն աստիճան ստորնացած էր վարքով ու բարքով որ ամէն բարի մարդիկ զարչելով կը խորչէին իրմէ, Նա կը վկայէ թէ իր կինը ազատեց զինքը այս անկեալ եւ կորուսեալ վիճակէն, ներչնչելով, առաջնորդելով եւ օգնելով իր ամուսնոյն եւ այսպէս ազատելով զնա իր վատ ու դարչելի ունակութեանց գիրութեան վիճակէն :

5. Անգլիացի մատենագիր մը կ'ըսէ. անբարոյականութեան անձնապառ էի

եղած, կինս էր որ իր քաղցրութեամբ ու զղութեան բերաւ զիս :

6. Երախտագիտութիւն կը ստիպէ զիս, թէ անցեալս, ներկաս ու ապագաս մօրս խրատներուն ու մանաւանդ օրինակին կը պարտիմ :

7. Հոովմայեցի մատենագիր մը կ'ըսէ : Աշխարհ կառավարողներն Հոովմայեցիք են, իսկ Հոովմայեցիները կառավարողները կանայք են :

8. Անցեալ ու ներկայ մարդասիրական ու բարեգործական ձեռնարկներու հեղինակները կիներն են եղած :

9. Եթէ կինը բարձր լարոյականի տէր է, պիտի բարձրանայ այն ընկերութիւն որոյ մէջ նա կ'ապրի. իսկ եթէ կնոջ բարոյականութիւն աւրուած է, իրեն հետ նաեւ աւրուած է բոլոր այն խումբ որոյ նա կը պատկանի :

10. Աստուծոյ բնական են, քանզի

կի՛նն է որ կեանք կուտայ մարդուն , նա ծնի մանուկը , գրկէ , փայփայէ , սնուցանէ զնա իր կաթով , մանկան աճող ուղեղը իր ուզած եօին կը վերածէ , նորա մասց , եւ խորհուրդներուն ուզած ուղղութիւնը կուտայ , մէկ խօսքով մանկական նաւակին ղէկը՝ մօրը ձեռքն է :

11. Վերի ըսուածներէն յայտնի կը տեսնուի թէ իգական սեռին դաստիարակութիւնը ո՛րքան կարուոր է . զայն զարգացնելով ու կրթելով , անոր ճշմարիտ դաստիարակութիւն տալով հնար կ'ըլլայ վերականգնել մարդկութիւն , լուսաւորել ու կենդանացունել . իսկ զանց առնելով կին մարդուն ճշմարիտ դաստիարակութիւն՝ ազգ մը իր ամենաբարձր զիրքէն իսկ ամենաստորին վիճակի կրնայ վերածուիլ :

12. Այս գիտնալով հանդերձ կը թողունք որ մեր աղջիկներ առանց նպատակի ապրին աշխարհիս մէջ , անհոգ եւ անտարբեր ենք անոնց ճշմարիտ

կրթութիւն եւ դաստիարակութիւն պարգեւելու : Այսպէս կը մեծնան մեր աղջիկներ եւ կ'ամուսնանան , առանց իրենց վեհ կոչման համար ո՛ր եւ է պատրաստութիւն ըրած ըլլալու :

13. Ուսալ: Թշուառ ընտանիքներ որ օրի կ'աւելնան թշուառ ընտանիքներու վրայ , քանզի տիկին եղող անձը ոչ եփել գիտէ , ոչ լուալ , ոչ կարել , զաւակաց խնամ տանել բնաւ չհասկնար : Նաեւ առանց ղեկավարութիւն գիտցող ղեկավարի , ծովուն ալիքներուն եւ հովին նշաւակ եղած :

14. Այրը յուսախափ կըլլայ , քանզի ամուսնութիւն կնքուելէ ետեւ կը տեսնուի թէ կինը բնաւ չէ ըմբռնած կնոջական պարտաւորութիւններ , ուստի սէրն ալ կսկսի պաղիլ , անհամաձայնութիւնք զիրար թշուառ կ'ընեն , ի վերջոյ այր եւ կին՝ կ'ըլլան ապերջանիկ ու կը կազմեն մի թշուառ ընտանիք :

15. Եւ ինչո՞ւ այսպէս ըլլար ,

քանզի կինը , դեռ աղջիկ եղած ատեն , կենաց նպատակ մ'ունենալն բնաւ չէր հասկցած , բոլոր գիտցածն այս էր , տիկին ըլլալու համար կը բաւէ որդեգրել քանի մը հրապուրիչ ձեւեր , գիտնալ դաշնակ ածել , քիչ մը օտար լեզուի տեղեակ ըլլալ ու փոքր ինչ ձեռագործ . այս միայն , եւ ասկէ աւելին աւելորդ էր համարած : Ահա ընտանեկան թշուառութեան պատճառն . ուստի զայս վերցունելու համար յաջորդ հրահանգներն լաւ միտք ստանել պէտք է :

16. Կինը սիրոյ արեգակ մ'է , ուր որ երթանք աշխարհիս մէջ կինը սէր կը ցոլացունէ իր շուրջ : Աշխարհաշրջիկ մը կը վկայէ , ո՛ւր որ դացի , անօթի կամ ծարաւ եղած ատենս , մասձ կամ թրջած , յոգնած ու հիւանդ վիճակի մէջ , շարունակ ու միշտ կնոջ սիրալիր խրնամքն վայելած եմ , կինը գթութեան ու սիրոյ հրեշտակ մ'է՝ ամէն տեղ :

17. Տիկին Սարա Հօֆման նուիրեց իր կեանք աղքատ ու թշուառ դասին

բարւոքման . Օր. Տիքս նուիրեց իր ամբողջ կեանք ու ստացուածք որբանոցներու , անկեղանոցներու , յիմարանոցներու ու բանտերու այցելութեան . Տիկին Ֆրայ նուիրեց իր կեանք ու ստացուածք՝ առնապոզ մարդկութեան , Եւրոպայի բանտերն այցելելով , որոյ միակ նպատակն էր մեղմել ցաւ ու վիշտ , եւ նիւթապէս ու բարոյապէս բարւոքել թշուառին կեանքը , Հնտինկթընի կումսուհին գործածեց իր ժառանգած միլիոններն աղքատին ու չքաւորին բարձրացման համար , նոյն նպատակին համար իր գոհարներ իսկ ծախելով :

18. Օր. Նարթինկէյլ հիւանդապահութիւն սորվեցաւ եւ անդուգական անձնուերութեամբ Խրիմի պատերազմին վիրաւորեալները դարմանեց : Օր. Մարգարն Սիպերիոյ բորոտներուն նուիրեց իր կեանք : Անթիւ եւս այն կիներ ու օրիորդներ որք զոհեցին ընտանեկան երջանկութիւն եւ հարստութիւն եւ նուիրեցին մտային եւ մարմնական ձիրք եւ կարողութիւն , առողջութիւն եւ

կեանք իսկ՝ տառապող մարդկութեան
օգնելու համար :

19. Ասոնք կ'ապացուցանեն թէ
կին մարդը ի բնէ տրամադիր է սիրոյ
եւ զթուլթեան գործերու , ուստի աղ-
ջկան մը վեհագոյն կոչումն է նուիրել
զանձն բարեսիրական գործերու : Քանի՞
կին եւ օրիորդ կրնանք գտնել ազգիս
մէջ որ իրենց այս վեհ կոչում եւ կե-
նաց նպատակ հասկցած ըլլան եւ այն-
պէս ալ ապրին :

20. Աստուած ա'յնպէս կարգադրեր
է որ մանկան առջին դաստիարակին
ըլլայ կինն . ամէն աղջիկ հարկաւ չի
կրնար ըլլալ ուսուցիչ , սակայն իւրա-
քանչիւր աղջիկ պէտք է այնպէս պատ-
րաստուի որ կարող ըլլայ օր մը դաս-
տիարակի դեր կատարել :

21. Տունն է կնոջ ամենակարեւոր
ասպարէզ , ուստի տուն կառավարելու
համար պէտք է ամէն աղջիկ պատ-
րաստուի , որպէս զի իր կազմելի ըն-

տանիք ըլլայ երջանիկ , ներդաշնակ եւ
օգտակար :

22. Ընտանեաց տէր ըլլալ խաղա-
լիկ չէ , այս ծանրակշիռ խնդիր բախ-
տին յանձնելով գոհ ըլլալու չեն մեր
աղջիկներ , ո՛րքան հազուադէպ են
ճշմարտապէս երջանիկ ընտանիք . ի՛նչ-
չու , քանզի անհրաժեշտ եղած կրթու-
թիւն տրուած չէ մեր աղջկանց :

23. Աղջիկ մը գիտնալու է թէ ի՛նչ
որ ալ սորվի ապագայ ընտանեկան կե-
նաց համար , մեծ արժէք ունի . Ուստի
իւրաքանչիւր աղջիկ խորհելու է որ
ճշմարիտ կին մ'ըլլալու համար պէտք է
զարգացունէ ու մշակէ մտական ու բա-
րոյական կարողութիւններն . այս նպա-
տակ պէտք է միշտ բռնէ իր աչաց առջին :

24. Չարաչար կը սխալին մեր աղ-
ջիկները կարծելով թէ երջանիկ կ'ըլլան
փայլուն գիրքի մը տիրանալով , չիտր-
հելով թէ արտաքին փայլուն ու շող-
շողուն բաները վաղանցիկ են ստուերի

նման ու անիրական երազի պէս :

25. Այս սխալ հաշուով է որ մեր աղջիկներ մեծ սեպուած գերդաստանի , ազնուականի զաւկի , երիտասարդներու ու խռֆածներու հետ ամուսնանալ փափաքին , հոգ չէ որ անոնք ըլլան դատարկապորտ , ցոփակեաց , սրիկայ , բաւ է որ անոնք ընկերութեան մէջ բարձր դիրք զրաւեն : Ուստի կը մերժեն խոնարհ ծագում ունեցող համեստ ու առաքինի երիտասարդներ : Ամուսնութեանց թշուառութեան ու քայքայման պատճառ այս ծուռ հաշիւն է :

26. Թող այսպիսի աղջիկներ յիշին թէ պատուաւոր ու բարոյականի տէր երիտասարդներ կը մերժեն բարոյապէս անկեալ եւ մարմիննին ուրիշի ծախած աղջիկները , թէեւ անոնք շատ հարուստ եւ գեղանի ըլլան . չունի՞ն աղջիկներն ա՛յնքան քաջութիւն եւ պատուոյ զգացում անարգանօք մերժել այն երիտասարդ որ աւերեալ նկարագիր ունի եւ վաւաշոտ ու ցոփ կեանք մը կ'անցունէ :

27. Աղջկան մը առաջին եւ վեհ պարտականութիւնն է՝ բարեպաշտ , կրօնասէր , աստուածասէր ըլլալէ ետեւ , ըլլալ ծնողասէր , շարունակ յիշելով Տասնաբանեային հինգերորդ պատուէրը . Պատուէ քու հայրդ ու մայրդ որ երկար ապրիս , որ երջանիկ ըլլաս :

28. Աղջիկ մը իր ատենէն վռնանց ծերունի ու տկարակալ մ'ընողքը . ուրիշ մը՝ փափուկ տիկին մ'ըլլալով , հիւրերու ներկայութեան իսկ իր մօր զըխտուն յանդիմանութիւններ կը տեղար , առանց յիշելու որ այս մայրն էր , որ իր այրի վիճակին մէջ բերնէն կտրելով սնուցած ու մեծցուցած էր « փափուկ » օրիորդը :

29. Որդիական սիրոյ օրինակ մը . Հռովմայ մէջ կին մը դատաւարտուցաւ կախուելու : Սա յոյժ գեղանի ըլլալով , դահիճն յուզուեցաւ ու սրոշեց փոխանակ կախուել անօթութեամբ մեռցունել : Միայն աղջկանը թոյլ կը տրուէր այցելել մօրը , ան ալ խիստ խու-

զարկութենէ ետեւ որ մի գուցէ մօրը կերակուր տանի : Անցան շաբաթներ ու կինը ոչ թէ չմեռաւ , այլ առողջ էր ու զօրաւոր . խնդիրը քննուելով գանձւեցաւ որ աղջիկը իր ստինքով կը սնուցանէր մայրը : Կառավարութիւնը կնոջ կեանքը շնորհեց ու երկուքին ալ թուական կապեց :

30. Այլ օրինակ ծնողական սիրոյ . Ծրանսացի Քաղոթի ձերբակալուեցաւ իր աղջկան հետ , աղջիկը յետոյ ազատ արձակուեցաւ , սակայն սա չուզեց հօրմէն զատուիլ . ուստի ի պատիւ ծնողասիրութեան , հայրն ալ ազատ թողուցին : Քիչ յետոյ հայրը նորէն ձերբակալուելով մահուան դատապարտուեցաւ : Երբ կը տանէին որ գլխատեն , աղջիկն առաջ վազեց ու գլուխը կոճղին վրայ դնելով գոչեց . « Նախ իմ վիզս ու ապա հօրս » : Բազմութիւնը յուզուեցաւ ու բարձրաձայն գոչեց . « Ներո՛ւմ , ներո՛ւմ » . աղջիկը յաղթանակաւ առնն տարաւ հայրը :

31. Այլ օրինակ . Նիւ-Եօրքի մէջ դեռատի աղջիկ մը կը սնուցանէր իր ծերունի ու հիւանդոտ հայր ու մայր . սաստիկ ձմեռ էր , տան մէջ ծախուելիք բան չէր մնացած , գործ ալ չկար , մութալ նուաստութիւն էր օրիորդին համար : Ի՛նչ ընէ , քանի մ'օր առաջ պատերուն վրայ փակցուած ծանուցում մը միտքը եկաւ . առամնաբոյժ մը երեք ոսկի կը խոստանար իւրաքանչիւր առջեւի ակռայի համար , եթէ մէկը յօժարէր զայնս քաչել տալ : Իսկոյն կը դիմէ առամնաբոյժին , ու կը խնդրէ հանել իր առջեւի չորս մարգարտի նման ակռաներն : Առամնաբոյժը երբ պատճառն ու նպատակն իմացաւ , այնպէս յուզուեցաւ որ աղջկան 10 ոսկի նուիրեց , առանց ակռաներուն դպչելու :

32. Ծնողասիրութեան կը յաջորդէ եղբայրսիրութեան պարտականութիւն : Երբ աղջիկ մը անտարբեր է իր երիտասարդ եղբօր , սա ոչ թէ միայն իր հաճոյք տունէն դուրս տեղեր կը փնտռէ , այլ կարծելով թէ ամէն կիներ իր քրոջ

պէս կ'ըլլայ, ատելութեամբ կը նայի իգական սեռին վրայ եւ վատթար փորձութեանց ու մոլութեանց անձնատուր կ'ըլլայ :

33. Այն աղջիկ որ պատճառ կ'ըլլայ իր եղբօր ուրիշ ընկերութեանց մէջ փնտռել իր հաճոյք, օր մ'ալ, երբ կին ըլլայ, պատճառ պիտի ըլլայ որ իր ամուսին տանը դռներէն դուրս փնտռէ իր հանգիստ, մխիթարութիւն, հաճոյք ու երջանկութիւն : Ուստի մեր աղջկանց ապագայ շահերը կը պահանջեն որ ըլլան եղբայրասէր :

34. Աղջկանց կէս նպատակին է օր մ'ըլլալ տիկին, տիրուհի, եւ կը կարծեն թէ ճշմարիտ տիկին մ'ըլլալու համար պարտին միմիայն կարեւորութիւն տալ հագուստի, նորաձեւ արդուզարդի, զեղխ կեանքի, զարդերու, գոհարներու ու տեսակ տեսակ հրապուրիչ ձեւերու : Չարաչար կը սխալին այսպէս կարծող աղջիկներ :

35. Աւելի ծանրակշիռ սխալ մ'է կարծել թէ կարգ մ'ընտանեկան գործեր զիրենք անարժան կ'ընեն տիկին ու տիրուհի կոչուելու, կերակուր եփել, լաթ լուալ, դուլպայ շինել, կարկուտել . ամօթ է տիկինի մը համար ու շատ անպատշաճ . ուստի երբ այդպիսի գործով զբաղեալ եղած ատեննին անակընկալ հիւր մը գայ, կամաչեն եւ կէս ժամ սպասցնել կուտան որ արդուզարգ ընելով զայն ընդունին : Շատ սխալ է այս :

36. Ընտանեկան գործերու հմուտ ըլլալ անհրաժեշտ է ամէն տիկինի ու տիրուհիի, առանց ասոր անհնար է տիկին եւ տիրուհի ըլլալ : Տիկին մը թէեւ այն գործերն անձամբ կատարելու ստիպեալ չըլլայ ալ, ինք ընտանեկան վարչութեան գլուխն, առաջնորդն ու ղեկավարն ըլլալով պարտի ամէն ընտանեկան գործերու հմուտ, տեղեակ ու վարժ ըլլալ . տիկինը պէտք է գիտնայ կերակուր եփել, լաթ լուալ, կար կարել, կարկուտք ընել, եւլն., եւլն. :

37. Կօղատրանոս պարծենցաւ սե-
զանակից իշխաններու թէ իր իշխանու-
հի կիներն , Լուքրէտիա , վարժ է ծառա-
յական գործերու , ու զրաւ զրաւ թէ
եթէ յանկարծ իր տունն երթան , ծառա-
յից հետ գործի գլուխս սլիտի գանեն .
գիշեր էր , երբ տունն եկան ու ահա
Լուքրէտիա սպասունիներուն հետ նըս-
տած բուրդ կը մանէր :

38. Զօրավար Ռօշինկթընի մայրը
չէր ամաչեր մեծանունն հիւրեր ընդունիլ
առանին գործերով զբաղած պահուն .
Լաֆայէթ մարքիզն այցելած ատեն նա
սպասունիի հանդերձով պարտէզին մէջ
կ'աշխատէր :

39. Գէորգ Ուաշինկթընի կինը ճար-
տար զերձակունհի , ընտիր խոհարարու-
հի եւ կատարեալ մայր մ'էր , բարձ-
րաստիճան տիկիներ ճոխ արդուզար-
դով անոր այցելած ատեննին գտան որ
նա տպածոյ գոգնոց մը կապած իրեն
եւ ամուսնոյն համար գուլպայ կը հիւսէր :

40. Անգլիոյ ձէյմս Ա. թագաւորին
ներկայացուցին օրիորդ մը որ հրաշա-
լիք կը համարուէր գիտական ու լեզուա-
բանական հմտութեան մասին : Ըսէք ,
հարցուց թագաւորը , օրիորդը բուրդ
մանել զիտէ՞ :

41. Ոչ ոք կը պախարակէ լաւ հա-
գուստը , գիտութիւն , լեզուներ , զաշ-
նակահարութիւն , քաղաքավար եւ հը-
րապուրիչ եսեր . քաւ լիցի , ընդհակա-
ռակն ամէն աղջիկ պարտի անոնց կա-
րեւորութիւն տալ : Սակայն անոնցմէ
աւելի գերակշիռ ու կարեւորագոյն բան
մը կայ , որոյ իւրաքանչիւր աղջիկ
պարտի հմուտ ըլլալ , այս է ընտանե-
կան անտեսութիւն կոչուածը , տեսա-
կան ու գործնական : Նա որ ընտանե-
կան գործերու անտեղեակ է , հնար չէ
որ ԸԼԼԱՅ տիկինն ու տիրուհի , թէեւ
այսպէս ԿՈՉՈՒԻ :

Կը յանձնարարենք մեր աղջկանց
բանալ Սուրբ Գիրք ու կարգալ Սոզո-
մոն իմաստունին Առակաց գրքին 31րդ

գլուխ 10րդ համարէն մինչեւ վերջ . հոն է տիպար տիկինն նկարագրեալ կենդանի գիծերով :

ԻՆՉՈՒ ԱՄՈՒՍԻՆԸ ՏՈՒՆԷՆ ՉՍ.ԽՈՐԺԻՐ

Ի՞նչ կարծեցիք , Տիկին , միթէ ամուսնութիւնը , տանտիկնութիւնը , ամոնչափ պիւրին բան էր որ առանց կանխաւ պատրաստուելու , տիպար ընտանիք մը կազմելու կարող ըլլայիք . կը գանգատիք թէ « ամուսիննիդ՝ հակառակ իր ստացած քիչ շատ կրթութեան եւ ուրիշ առաւելութիւններուն՝ ամենեւին չը յօժարիր տունը նստիլ , ընտանիքը գլուխը ժողվել , ու զաւակներովը զբօսնուլ , թէ գիշերուան մինչեւ ժամը երեքները դուրսը կը դեգերի եւ թէ վերջապէս ձեր աղջիկնութեան ժամանակ երազած ամուսինը չէ » : Յաւալի է , Տիկին , մանաւանդ անոր համար , որ մեր հարս եղող օրիորդներուն մեծագոյն մասը այս գանգաար ունին իրենց ամուսնոյն նկատմամբ . սակայն

որո՞ւնն է յանցանքը : Մեր նազելածեմ օրիորդներէ շատեր , կարծեցին թէ տունը հրապուրիչ ըլլալու համար բաւական է որ մէջը ճոխ կարասիներ ունենայ , յատակը պարսկական օթոցներով ծածկուի , մետաքսեայ վարագոյնները շողան պատուհաններուն լուսանցքէն , սպասաւորներու խումբ մը անընդհատ երթեւեկութեան մէջ ըլլայ . ուտեն , խմեն , ծախսեն , հիւր երթան , հիւր ընդունին եւ ահա կատարեալ երջանկութիւնն ու նախանձելի տունը :

Խեղճ օրիորդներ , այս խաբուսիկ երազներով լաւ մը զինուելէ վերջ , անոնց իրականանալուն հասնելու համար սկսաք ոռման կարգալ , պատուհաններուն առջեւը սպասել , քիչ մը կոտորուիլ , մէջքերնիդ բարակցնելով , դաշնակի վրայ քանի մը կտոր ածել . « մայրիկ , այսօր շատ կը նեղուիմ կոր » բսել , եւ փառք յաւիտեանս ամէն : Հիմայ տանտիկնութեան վիճակնուդ մէջ քաշեցէք որ հասկնաք թէ « առեալ զձեռն Եւայի » սլ , էրիկնուդ քիթէն չէք կրցեր բռնել . անիկա , տունէն համ

չառնել սկսելուն պէս , մինակ գիշերները տուն կուգայ , առտուանց կանուխ ալ կը հալածի կ'երթայ . դուք ձեզի մեղքըցէք որ ինչ ընելիքնիդ չէք գիտեր , պարապ տեղը կը տանջուիք , մինչդեռ եթէ չափահաս եղած ատեննիդ խորհէիք որ « ամէն օր մօրերնուդ քով չը պիտի մնաք , դուք ալ օր մը տուն տեղ պիտի ըլլաք , զաւակներ պիտի ունենաք , տուն պիտի դարձնէք եւլն . եւլն . » հիմայ այսպէս չպիտի շուարէիք :

Չէ , դուք այնպէս չըրիք . օր մը խոհանոց մտնել չհաճեցաք , եւ թէ մըտաք իսկ , տակերնիդ աթոռ մ'առիք նստաք , թողլով որ մայրերնիդ ջարգէ միտը . եւ եթէ խեղճ կինը քիչ մը օգնել առաջարկեց « ո՛ւշ մայրիկ , ես կը դանիմ հում միսէն » ըսիք , ու ամենեւին ձեռքերնիդ չը դպցուցիք . եթէ իրօք հում միսէն կը գանէիք , գոնէ սոխը ստըկէիք . չէ՛ , ան ալ չըրիք , եւ իրաւունք ունէիք , ջրովհետեւ սոխ ստըկած ձեռքովնիդ ի՞նչպէս պիտի մըտնայիք պարոնին թեւն ու բիացան պըտրտէիք :

Մայրերնուդ չէր յանցանքը սակայն , խեղճ կինը արիւն արցունք թափեց . գաղտուկ խօսեցաւ , չառիք , հիւրերու առջեւ խայտառակեց , բանի տեղ չը դրիք , վերջապէս ի՞նչ կրնար ընել մայր մը , հրք դուք ամենեւին ձեր օգուտը խորհելու վիճակին մէջ չէիք , խոհարանի գործերէն չէիք փորձեր . ձեռագործի՞ն յանցանքը ինչ էր , քանի՛ քանի անգամներ քրօջէներու , պրօսուրիններու եւլն . եւլն . ի սկսաք , ու կէս ճամբան տանը մէկ ծակը թխմեցիք . կը կարծէիք որ յանցանքը առաջուան տեսակին վրան էր , ուրիշ տեսակի մը կ'սկսէիք . երկու օր վերջ ան ալ առաջուանին քով , ու այսպէս պիտի շարունակէիք , եթէ Եւրոպայի գործարաններուն մանածները կարենայիք հատընել :

Մարդ մը իր եղբայրը չը՞ սիրեր , մինի մինի հրեշտակները , Աստուծոյ գառնուկները . դուք անոնցմէ ալ երես դարձուցած էիք , ու կուղէիք որ մայրերնիդ թէ ձեզի կերակուր եփէր թէ տան ձերմակեղէնները լուանար , վրա-

նիդ գլուխնիդ կարկտէր , եւ թէ պէ-
պէկը օրրան դնէր հանէր : Գործերնին
գիտցող աղջիկները անանկ չեն ըներ
սակայն . իրաւ է թէ , որչափ բնական
օրէնք մ'ըլլայ , աղջիկը մօրը չը կրնար
ըսել թէ « մայրիկ ինձի տղայ մեծցնել
սովբեցուր . ազնիւ աղջիկները մասնա-
ւոր սէր մը կը կապեն իրենց եղբայր-
ներուն — ինչ որ բնական է — մօրեր-
նուն կ'աղաչեն որ Գիրգորիկը իրենք հա-
նեն օրրանէն . կ'երթան կը գգուեն ,
կը համբուրեն , կը լացնեն , կը խնդա-
ցընեն , վերջապէս երեսը խաչակնքե-
լով տղան օրրանէն կը հանեն : Ո՛ւյ ան
տղուն լաթ հագցնելը , ի՞նչ գժուար
գործ . խեղճ աղջիկը կը վախնայ որ ար-
ղուն մէկ տեղը կը հանէ . տղան ըսես
հօփուր հօփուր կը խաղայ , քրոջը մա-
զերը կը քաշէ , ձեռքը անոր օղին կը
տանի . եղունգներն ալ ի՞նչ սուր են ,
հապա յամառութիւնը . վերջապէս մայ-
րը կը հասնի « քա Աստուծոյ շնորհքին
գաս , ասանկ չեն հագուեցնէր տղան .
Քա Հօռօք հանր'մ , եկու Ֆիլօմէնին
տղայ հագուեցնելուն նայէ » . Հօռօք

հանըմն ալ կուգայ , երկուքը մէկանց
քահ քահ մը կը ձգեն , վերջը իրենց
դիտողութիւններովը կը սովբեցնեն Ֆի-
լօմէնին թէ ի՞նչպէս կը հագուեցընեն
տղան :

Դուք ան չէք գիտեր , աս չէք գի-
տեր , ի՞նչ երեսով ամուսին աննել կը
համարձակիք , չեմ գիտեր . ձեզի պէս
տանտիկիներուն աղէկ թող ըլլայ , եթէ
հարուստ էք , մէկ կողմէն խոհարարը
թող գողնայ , երէ , եփէ , թափէ , անըն-
դարար կտորը ինք ուտէ , անհամները
ձեր առջեւ դնէ , միւս կողմէ լուացա-
րարը ձերմակեղէնին աղար վրան թո-
ղու , սօտայով փաեցնէ , չիվիտով ներ-
կէ , արդուկին տակ դեղնեցնէ , ստակ-
ները առնէ , անդին սանտուն աղաներ-
նուդ երեք չորս տարուան կաթը ձծցնէ
ըրսխայ ընէ , սպասաւորն ու սպասու-
հին աղտօտ խօսքերով լեցնեն խեղճ
անմեղներուն ականջները . ամուսիննիդ
գլուխն առնէ տունէն հեռանայ . նեղու-
թիւն , վիշա , ցաւ , ի՞նչ է պատճառը :

— Աղջիկնութեան ատեննիդ քիչ մը
նեղուելով տանտիկնութիւն չը սորվե-

ցաք, որպէս թէ այդչափ զժուար գործ մը ըլլար:

Աղքատ եղողներուդ աւելի ո՛րս տունը նստած, կերակուրները ոտքը առած, բան մը կը փնտռէ չը գտներ. տղաք զիրար կը բզբտեն. ձայն, ձուն, իրարանցում, եւ մեր համեստափայլ տիկիկները կը գանգատին թէ «ամուսիննիս տունը չը նստիր», ասանկ տունը կը նստուի՞, մանաւանդ երբ մարդ առտուանց մինչեւ իրիկուն շուկան վազած, վազվառած, հազարին խօսք հասկցուցած, աղաչած, պաղատած, իրիկունը քիչ մը հանգիստ առնել ուզէ:

Սովրեցէք տիկիկներ, ամօթ չէ, տանտիկնութեան արհեստը սովրեցէք, եթէ ոչ հարս մի՛ ըլլաք, որ երիտասարդներն ալ ամուսնանալով աունէ տեղէ չը պաղին:

ՔԱՍԻՄ



Հ Ա Ի Ա Բ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն



Հաւարուծութեան առարկան միայն հաւը չէ, այլ նաեւ հնդկահաւ, բաղ, սագ, աղաւնի, եւլն. պահել եւ անոնցմէ օգտուիլ:

Հաւն՝ հաւնոցին առաջին ընտանի կենդանին է, ունի իր զանազան տեսակները. մեր երկրին սովորական տեսակը՝ լաւագոյններէն է:

Հաւը կը պահենք իր հաւկիթին, միսին եւ կամ իր տեսակին արտադրութեան համար:

Հաւ մը՝ կամ շատ հաւկիթ ածող կամ պարսաւաւաշոր տրամադիր եւ կամ իր տեսակն արտադրելու եւ լաւ պահպանելու այսինքն՝ շար թխսող ըլլալու է: Այս երեք յատկութիւններ միանգամայն մէկ հաւի վրայ չեն կրնար գտնուիլ ամեն ատեն:

Հաւնոցը՝ գեանի վրայ շինուած փոքրիկ շէնք մ'է, որուն գեանի մասը՝

բաղերուն եւ սագերուն համար է եւ վերեւ մասնաւոր ձողեր կը զեակողուն որոնց վրայ հաւերն եւ իր տեսակները կը քառիս :

Հաւնոցը պէտք է որ շինուի չոր գետնի վրայ , որովհետեւ խոնաւութիւն ոչ միայն հաւին առողջութեան կը մնասէ , այլ նաեւ անոր լաւ արտադրութեան պայմաններուն հակառակ է , քանզի մէկ կողմանէ կը յապաղին անելու գործողութիւնը , միւս կողմանէ ալ արգասաւորութեան կը մնասին :

Պէտք է ջանալ որ հաւնոցին ճակատը դէպի արեւելք կամ հարաւ նայի . պատուհանները կամ օդամուտներն այնպէս շինուին որ դիւրին ըլլայ ամառը զով օդ ներս մտցունել եւ ձմեռը՝ ջերմութիւն , այսինքն արեւու ճառագայթներ : Այս նախազգուշութիւններն ա՛լ աւելի հարկաւոր են այն տեղերուն հա համար՝ ուր ձիւնն աւելի երկար ատեն կը մնայ : Երբ ձիւնը պատած է ամեն կողմ , հաւերը կը ստիպուին հաւնոցին մէջ մնալ . եթէ պատահմամբ դուրս ելլեն , կը մոլորին եւ կը կորսուին :

Պէտք է հաւերուն բազմութեան համեմատ ձողեր դնել հաւնոցին մէջ , որպէս զի կարենան ամենքը դիւրաւ եւ հանգիստ թառիլ , առանց վիրար ան հանգիստ ընելու :

Հաւնոցին մէկ անկիւնը պէտք է տեղ մ'որոշել ուր կարենան ազատութեամբ եւ հանգիստ անել իրենց հակիթք . ուրիշ անկիւն մ'ալ պէտք է վերապահել թխտողներուն համար , որպէս զի կարենան հանգիստ շարունակել իրենց թխտելու գործողութիւնն եւ երբ ձագ ունենան՝ պահպանել ու խնամել զանոնք :

Պէտք է միշտ եւ խստիւ հոգ տանիլ հաւնոցին մաքրութեան : Անմաքրութիւնը՝ վատառողջութիւն , ու ապականեալ նիւթերէ եւ աղբերէ յառաջ եկած ժահահատութիւններն՝ այնպիսի հիւանդութիւններու ծնունդ կուտան , որոնց առջեւը չառնուիր եւ կամ բոլորովին արգելք կ'ըլլան հաւերուն արտադրութեան :

Եթէ կարելի է , հաւնոցին քով բակ մ'ունենալ պէտք է , վրան գոց , մէջն

ալ կանաչեղէն եւ թանձրախիտ մա-
ցառներ սնկուած ըլլան, որպէս զի՝
ի պահանջել հարկին՝ հաւը կարենայ
զով շուք մը գտնել տաքին զէմ : Ան-
հրաժեշտ է որ այդ բակին մէջ գտնուի
ջուր, քիչ մը աւազ՝ որ հարկաւոր է
մարսողութեան եւ ուրիշ անկիւն մ'ալ
մոխիր :

Գիւղերուն մէջ, հաւնոցը սովորա-
բար փարախին կամ ախոռին մէկ ան-
կիւնը կը շինեն : Ասիկա մէկ օգուտ,
բայց շատ մլատներ ունի : Նախ, հաւը՝
չկրնար մաքուր օգ գտնել ախոռին մէջ,
երկրորդ, չկրնար հանգիստ մնալ հոն՝
ներս մտնող մարդոց կամ հոն բնակող
միւս կենդանիներուն ներկայութենէն,
թէ՛ ներս մտած եւ թէ՛ դուրս ելած
ատեննին :

Երբ անկարելի է ուրիշ տեղ գտնել,
այն ատեն պէտք է մասնաւոր ծակ մը
բանալ, բուն դռնէն տարբեր եւ հեռի,
որպէս զի հաւը կարենայ հանգիստ եւ
անվտանգ մտնել ու ելլել :

Հաւնոցը ախոռին մէջ շինուելով՝
հաւերէն յառաջ նկած ոջիւնները միւս

կենդանիներուն ալ կը փոխանցուին եւ
այսպէս անոնց հիւանդութեան պատ-
ճառ կ'ըլլան :

Այս ամեն անպատեհութիւններուն
զէմ սա օգտակարութիւնը կայ հաւնո-
ցը ախոռին մէջ շինուելուն մէջ, մա-
նաւանդ աղքատ գիւղացիներուն հա-
մար, որ՝ ձմեռ ատեն՝ հաւերն հարկ
եղած ջերմութիւնը գտնելով հոն, չեն
դադրիր ածելէ : Այսպէս, գիւղացին՝
հաւկիթին խիստ հազուագիւտ եղած
ատեն՝ միշտ պատրաստ հաւկիթ կ'ու-
նենայ սուղ ծախելու :

Հաւկիթը երկու նպատակի համար
կը գործածուի, ուտելու եւ արտադ-
րելու համար : Այս երկու պարագանե-
րուն մէջ ալ նկատելու է որ առատ եւ
թարմ ըլլայ. բայց առաջին պարագային
համար աւելի նայելու է որ հաւը շատ
հաւկիթ ածէ, եւ երկրորդին համար
աւելի՛ ջանալու է որ հաւկիթն արգա-
սաւորեալ ըլլայ :

Հաւն ու աքաղաղն՝ իրենց առաջին
տարին բոլորելու ատենն է որ կ'սկսին
արդիւնք տալ, մինչեւ 4 տարի : Թէեւ

անկէ վերջն ալ արդիւնք կուտան , բայց բաղբատմամբ իրենց համար եղած ծախքին , շահը նուազ կ'ըլլայ . ուստի այն թուականէն՝ այսինքն 5 տարին բոլորելնէն վերջ պէտք է պարարելու միջոցները գործադրել , որովհետեւ լաւ տրամադիր են այն ատեն :

Աքաղաղը պէտք է որ ըլլայ խոշոր եւ ծանր , նայուածքը՝ կրակոտ , քալուածքը՝ սէգ , շարժումներն՝ հաստատուն եւ վեհ , փետուրն՝ առատ ու փայլուն , կտուցը՝ կարճ ու զօրաւոր , կատարը՝ թանձր ու խիստ կարմիր , թաթերը՝ զօրաւոր բիտերով (ճահճուզ) զինուած , բարկացոտ ու կռուասէր , շարունակ խօսող եւ անդուսպ , շարունակ հաւերուն շուրջը դարձող ու կրուկացող :

Ասանկ աքաղաղ մը՝ առաջին կարգի արտադրիչ ու պահապան մ'է : Սովորաբար մէկ աքաղաղ կը բաւէ 40—50 հաւերու , բայց արգասաւորեալ ու արտադրող հաւկիթ ունենալու համար՝ 10—12 հաւերու համար մէկ աքաղաղ անհրաժեշտ է :

Հաւը՝ պէտք է որ ըլլայ հանդարտաբարոյ ու ընտանի , փետրոտ , լայն դաշտով , յետոյքը՝ խոշոր եւ կախուած : Այն հաւն սրուն սրունքները ճերմակ են՝ իրենք ճերմակ չըլլալով , քիչ ածող կ'ըլլան :

Պէտք է որ հաւը շարունակ ամեն անկիւն պրպտող եւ որդ փնտռող ըլլայ եւ աքաղաղին հնազանդ եւ անոր հետամուտ , թուխտի աւելի յարմարութիւն ունին անոնք որ աքաղաղին ընտրեալ սիրականներն են :

Անոնք որ նուազ ածող են եւ հետեւաբար նուազ յարմարութիւն ունին թուխս նստելու եւ մայր ըլլալու , պէտք է զատել զանոնք՝ պարարելու եւ ծախելու համար :

Ընդհանրապէս , նուազ ածող եւ հետեւաբար պարարտանալու աւելի յարմարութիւն ունեցող են այն հաւերն՝ որ իրենց գլխուն վրայ մագերու առատ փունջ ունին , կատարնին խոշոր եւ սրունքնին սեւ , թուխ կամ վարդագոյն կ'ըլլան , կմախքնին թիթեւ ու մորթերնին բարակ ու սպիտակ :

Թուխտի յարմար հաւկիթներն առ առաւելն 3-4 օրուան ըլլալու են , խոշոր եւ 3-4 տարուան հաւերու ածած :

Հաւերն , ընդհանրապէս , դարնան առաջին երկու ամիսներուն մէջ թխսելու փափաք կը յայտնեն , իրենց սովորականէն դուրս եւ երկար ատեն բոյնին մէջ նստելով՝ առանց դուրս ելլելու , ո՛չ կեր կը փնտռեն , ո՛չ կը վազվրուտեն , փետուրնին կը ցցուի եւ շարունակ կը կրկնան : Սյս պարագային մէջ՝ բոլորովին վստահ ըլլալու համար իր վրայ , կրնանք քանի մ'օրուան համար՝ քանի մը բնական հաւկիթ եւ կամ շինծու հաւկիթ դնել իր տակը :

Սյս փորձը կատարուելէն վերջ՝ ամենայն վստահութեամբ կրնաք բուն իսկ որոշուած հաւկիթներն իրեն յանձնել : Պարզ հաւու մը համար՝ 12-15 հաւկիթ բաւական են . բայց երբ թըխսողն հնդկահաւ մ'է եւ կ'ուզենք հաւունենալ , կրնանք 20-30 հաւկիթ միանգամայն վստահիլ իրեն :

Հաւկիթն՝ հաւուն կամ հնդկահաւուն յանձնուելէն վերջ՝ պէտք չէ այլեւս

ձեռք դպցունել անոր , նա իր ուզածին պէս կը կարգադրէ , կը տեղափոխէ զանոնք :

Հաւեր կան՝ որ խիստ շատ կը խառնչակեն հաւկիթները , կը ձանձրանան ու կը կտարեն զանոնք , ուստի պէտք է այն հաւերն ընտրել՝ որ հանդարտաբարոյ , ընտանի եւ քիչ շատ աներկիւղ են :

Պէտք է որ թխսարանն հաւնոցին մէկ անմատչելի անկիւնն ըլլայ եւ եթէ կարելի է՝ առանձին վայր մը , յարգալից սակաոտի մը մէջ եւ գետնի վրայ : Սովորաբար 20-21 օրէն ձագերը կ'ելլեն հաւկիթէն :

Երբ , միանգամ , ձագերն հաւկիթէն կ'ելլեն , մեծ խնամքի կարօտ են : Լաւ է՝ առաջին քսանուչարս ժամերուն մէջ անօթի թողուլ զանոնք՝ իրենց մօր թեւերուն տակ , որպէս զի անոր ջերմութեամբ չորնան :

Յաջորդ երեք օրերը պէտք է տալ կաթով թրջած օթեկ (պայաթ) հացի միջուկ՝ մանրած , յետոյ խառնուրդ մը հացի միջուկի , փշրուած կարծր հաւկիթի եւ խիստ մանր ջարդուած կանաչեղենի , այս կեր պէտք չէ խմորուած ըլլայ :

Չուր խմելու ինքնին կը վարժուին անոնք , բաւական է որ ջրամանն իրենց հասակին ներածին չափ բարձր ըլլայ : Պէտք է որ ջրամանն՝ օդասուն եւ չոր տեղ մը դրուի , եւ ո՛չ թէ արեւի տակ , խոտեղէններու մէջ , որպէս զի ձագերը կարենան անոր շուրջը պարտկիլ եւ խոտերուն մէջ գտնուած ճճիներն ու միջատներն ուտել՝ որոնց չափազանց սիրահար են :

Պէտք չէ շարունակ միեւնոյն կերը տալ ձագերուն : Ութ կամ տասն օր վերջ պէտք է վարժեցնել զանոնք զանազան կերերու , օրինակի համար , կորեկի , բրինձի , կորկոսի , թեփի , խաչած գետնախնձորի : Մէկ ամիս վերջ կրնաք տալ ցորենի մազմուր , գարի , խաչած եգիպտացորեն , նոյն իսկ՝ վարսակ , բաւական է որ ասոնցմէ դուրս կարենան կանաչեղէն , որոք կամ միջատ գտնել եւ ուտել : Ձագերուն բնակարանը պէտք է ըլլայ չոր , օդաւետ , չափաւոր եւ հաւասար ջերմութեամբ , կատարելապէս մաքուր : Հաւասարապէս պէտք է զգուշանալ կէս օրուան ա-

րեւուն ջերմութենէն եւ անճրեւատ օդէն : Թէ՛ մեծերուն եւ թէ՛ փոքրերուն հաւասարապէս օրուան միեւնոյն ժամուն պէտք է կեր տալ եւ միեւնոյն տեղին վրայ՝ օրը մէկ կամ երկու անգամ եւ ո՛չ այնչափ առատօրէն , որովհետեւ առատ կեր սեանելով՝ ծոյլ կ'ըլլան եւ այլեւս դուրսերը կեր փնտռելու չեն ելլեր , որով եւ իրենց պարարունքն , առողջութիւնն ու արդիւնարեւութիւնը կը վնասուին :

Ընդեղէնը շատ հաւկիթ ածել կուտայ , մինչդեռ կերակուրի եւ մսեղենի մնացորդներով կազմուած կերը՝ պարարտ ու մսեղ կ'ընէ , բայց անոնցմով կազմուած միսն ու հաւկիթն ալ անախորժ հոտ ու համ մը կ'ունենան եւ չեն ուտուիր : Պէտք չէ մոռնալ նաեւ թեփին եւ ուրիշ կերի մէջ՝ հաւկիթի կեղեւի կտորուանքները խառնել եւ ձրմեռ ատեն ալ քիչ մը սեւ պղպեղ , որ օգտակար են ածելու :

Հաւկիթը պահպանելու ընդհանուր կանոնն է՝ զով եւ չոր տեղ դնել զանոնք եւ օղէ զրկել : Չ'արգասաւորուած

հաւկիթներն աւելի լաւ եւ դիւրին կը պահուին՝ քան արգասաւորուածները :

Հողէ ամանի կամ արկղիկի մը տակը կը ծածկէք մաս մը մոխիրով կամ թեփով եւ կամ փայտի սղոցուկով , վրան կը շարէք հաւկիթներ , հոգ տանելով որ՝ ո՛չ իրարու դպչին եւ ո՛չ ամանին , եւ յետոյ միեւնոյն փոշիով դարձեալ կը ծածկէք : Այնպէս քանի մը կարգ կը դնէք եւ ամենուն վրայ թանձր խաւ մը փոշի եւ ասոր վրայէն ալ թուղթով կը ծածկէք :

Պէտք է դնել հաւկիթները՝ մետաղեայ թելերով շինուած սակառի մը մէջ եւ մեկ վայրկեան միայն եռացեալ ջրով կաթսայի մը մէջ միւրճել ու հանել . այս կերպով՝ հաւկիթին ձերմկուցին արտաքին մէկ բարակ խաւը թանձրանալով՝ չթողուր որ ներսն օդ մանէ ու կը պահպանէ մնացեալն աւրուելէ :

Վառեակները պարարելու համար պէտք է չափահասութեան սխաժ ատեննին , իրենց պոչին արմատէն բաւական զօրաւոր կերպով կապել՝ մինչեւ որ չորնայ եւ մեռնի կապուած մասը : 4-5 օր

վերջ՝ երբ բոլորովին չորցած է , մկրատի հարուածով մը խզել՝ ինչպէս նաեւ ողնայարին վերջին ծայրը : Ընդհանրապէս արիւն չվազեր . սակայն , հակառակ պարագային , կրնաք անմիջապէս քիչ մը ձէթ (ձիթապտղի իւղ) քսել եւ վրայէն ալ քիչ մը մոխիր ցանել :

Այս գործողութեան ենթարկող վառեակը առանց պոչի կ'ըլլայ եւ մայրութեան ամեն զգացումէ զուրկ բոլորովին . բաւական առատ հաւկիթ կրնայ ածել , բայց բնաւ չ'թխսեր . դիւրաւ եւ շուտ կը պարարտանայ . միսն ալ փափուկ եւ խիստ համեղ կ'ըլլայ քիչ ժամանակէն :

Պարարելու գործողութիւնը սովորաբար կը սկսի սեպտ . եւ հոկտ . ամիսներուն եւ կը տեւէ զրեթէ ամբողջ ձմեռը :

Պարարելու յատկացուած հաւեղէնները պէտք է մեկուսացնել , նոյն իսկ իրարմէ , մասնաւոր եւ առանձին նեղ արգելոցներու մէջ , մութ եւ անօդ . օրուան որոշ ժամերու մէջ իրենց ջուրն ու կերը տալ եւ ուրիշ ատեն հանգիստ

ու անվրդով պահել : Կերբ պէտք է ըլլայ աեսակ մը խմորեղէն՝ ձիթապտղի մեծութեամբ եւ ձեւով , բազադրուած կէս՝ ցորենի կամ եղիպտացորենի ալիւրով , մէկ երրորդ դարիի եւ մէկ վեցերորդ վարսակի ալիւրով : Եթէ հաւերը դժկամակին կամ զլուին ու ձանձրանան այս կերն ուտել , պէտք է աշխատիլ ձեռքով կերցնել իւրաքանչիւրին զատ զատ՝ իրենց պէտքին համեմատ , 8-15 հատ՝ ամեն անգամին , միայն թէ՛ այս պարագային մէջ պէտք է նախ պարզ ջրի մէջ մխրձել խմորեղէնն եւ ապա կլլեցնել , որով գործողութիւնը կը դիւրանայ :

Որոշ ժամանակամիջոց մը չ'կայ պարաման տեւողութեան . կան որ շատ շուտով կը պարարին , 20-25 օրուան մէջ , կան ալ որ մինչեւ 40-50 օր կ'ուզեն կատարելագէտ պարարուելու համար : Միւս հաւեղէններու վրայ պիտի խօսուի յաջորդ տարի :

ՅՈՒՍԻԿ Վ. ԷՍՄԷՐԵԱՆ

ՀԱՐՅԵՐՈՒ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

Կենդանեաց ճնուէնդն կրնա՞յ զիացուիլ .
 — Այո՛ , ինչպէս մարդկանցն մօտաւորապէս .

Ձին	ծնի	330	օրէն	կամ	340	եւ կամ	419
Կովը	»	240	»	»	285	»	321
Ոչխար	»	146	»	»	154	»	158
Խոզ	»	109	»	»	120	»	133
Շուն	»	63	»	»	64	»	65
Կատու	»	56	»	»	58	»	60
Հաւը	կը թխէ	19-24	օրուան	մէջ			
Հնդկահաւը	»	26-29	»	»			
Սագը	»	28-32	»	»			
Բաղը	»	28-32	»	»			
Աղաւնին	»	17-19	»	»			

Կը ցանեմ եւ թռչունները կը հաւաքեն սերմերը . շուարեցայ մնացի . ի՞նչ ընեմ .

— Անգլիացի երկրագործք սերմերը

ցանկէ առաջ քարիւղի մէջ կը ձգեն .
դուն ալ փորձէ :

Յօրենի պարկերը դիմացկուն ընելու
ճար մը կ'ա՞յ :

— Այո՛, առ քաջ մը կաղնիի (Բէշէ)
տաշեղ (Բաւաշ) եւ դիր 1¼ քաջ ջրոյ
մէջ եւ եփէ . պարկերն օր մը այս հե-
ղուկին մէջ ձգէ , չորցուր ու ապա գոր-
ծածէ :

Ոսպ ցանեցի , բայց ոմանք կը հա-
տուննան եւ կը թափին քանի որ միւս-
ները դեռ շատ ետ են . միօրինակ հունձք
ի՞նչպէս կ'առնուի .

— Ոսպերն երբ ծլիլ սկսին, ծայրերէն
փրցուր , ասով ծաղիկները ի միասին կը
բացուին , հետեւաբար նաեւ ոսպերը ի
միասին կը հասուննան :

Մուշտակներս ցէցերէն ի՞նչպէս ա-
պահովեմ .

— Ան 50 տրամ ալքօլ (սֆէրթօ), նոյն-
չափ ալ բէւէկնիի իւղ (Բէրէ-Էն-Բէն Ե-դէ),
եւ 30 տրամ քամփուր (+Ե-Ֆէրէ) , բո-

լորը շիշի մը մէջ լից , ցնցէ , գոցէ ,
պահէ : Մուշտակը լաւ մը թոթուէ ու
կտաւի մէջ փաթթելով սնտուկդ դիր .
ապա շիշին հեղուկէն լաթի կտորներու
վրայ քանի մը կաթիլ լից եւ չորս ան-
կիւնները դիր . ցէցերը կը փախչին :
Կրկնէ ասենը հեղ մը :

Մեղուի խայթուածքն ի՞նչպէս բու-
ժեմ .

— Խայթը հանէ , թուքովդ շփէ
վէրքը , ետքը բարակ աղով շփէ վէրքը ,
իսկոյն կ'անցընէ . մէկը ութը մեղուի
խայթ ստացաւ մէկ անդամին եւ այս-
պէս բժշկեց :

Մլուկ ջնջելու համար պարզ միջոց
մը յանձնարարեցէք .

— Հարիւր տրամ պաղլեղ (շապ) հա-
լեցուր կէս քաջ ջրոյ մէջ եռացնելով ,
ու վրձինով քսէ ասկից մլուկին պահ-
ուած ճեղքերուն մէջ :

Արծաթէ ամանները ի՞նչպէս կը մաք-
րուին .

— Գեամախնձորը կ'եղևէ եւ խաչէ ,
ասոր ջրով արծաթեղէնները լաւ կը
մաքրուին . եթէ սոյն ջուրը մնայ եւ
թթուի , պղնձեղէնները լաւ կը մաքրուին
անով :

Խցանը (ճանճաբ) ի՞նչպէս ընեմ որ
անթափանցելի ըլլայ .

— Երկու մաս չհալած մեղրամոմ եւ
մաս մը կովու ճարպ հալեցնելով լաւ մը
միմեանց հետ խառնէ . խցաններն այս
խառնուրդին մէջ ձգէ երկու անգամ ,
յետոյ փուռին մէջ չորցուր :

Թաւիշը (գապիճէ) կրնա՞յ մաքրուիլ .

— Անշուշտ եւ շատ պարզ կերպով .
Թաւիշին հակառակ կողմը թեթեւ մը
թրջէ , եւ տաք արդուկ (բ-լի-ս) մը
շարժէ երեսին վրայէն , սակայն առանց
թաւիշին դպցնելու . ջուրին շոգին
պառկած թելերը նորէն կը կանգնեցնէ ,
որով թաւիշը կը նորոգուի :

Մուկերը ջնջելու պարզ միջոց մը
ունի՞ք .

— Անանուխի (նանէ Էադի) հօտէն
մուկերը շատ կը գարշին . քանի մը
կաթիլ քուրջի կտորներու վրայ հօս ու
հոն դնելով կը հեռանան մուկերը :

Տախտակները լաւ մաքրելու համար
ի՞նչ գործածեմ .

— Քաշ մը ջուրի մէջ դիր 2 դգալ
կիր եւ 4 դգալ սոտա . սրբէ տախտակը
նախ ասով ու ետքը պարզ ջրով 1-2
անգամ .

Ծաղիկները ո՞րքան ատեն կրնան
թարմ պահուիլ .

— Մինչեւ տարի մը՝ այսպէս ընե-
լով . ծաղիկին կոկոնները 10 սանթի-
մէթր երկայն կոթերով կտրէ , կտրած
տեղդ կնքամոմով գոցէ , ասպ քիչ մը
ճզմէ եւ չոր թուղթի մէջ փաթթելով
պահէ . երբ կ'ուզես որ կոկոնը բացուի ,
հանէ կոկոնը թուղթէն , կնքամոմէն
քիչ մը վերօք կտրէ եւ երեկոյին ջուրը
դիր . առաւօտուն կը տեսնես որ ծաղիկը
բացուեր է եւ անուշ հոտ կը բուրէ :

Սօտայի տեղ ուրիշ նիւթ մը չկա՞յ որ կարող ըլլանք լուացքի գործածել .

— Այո՛, պօրաքսը, սա աւելի լաւ է քան սօտա, թէ՛ լաւ կը մաքրէ եւ թէ՛ սօտայի նման չմաշեցունէր լաթերը :

Գեռահաս տունկերը սառելէ ի՞նչպէս կրնանք ապահովել .

— Գետինը սառելէ ետեւ ծառին բունին բոլորաիքը թիզ մը բարձր աղբ դիր ու վրան յարդով ծածկէ :

Ապակիին վրայ կրնա՞ք պատկեր տպել .

— Այո՛, ապակին մաքրէ եւ բեւեկ-նիի իւզով օժէ, եւ տպեալ պատկեր մը վրան փակցուր, թաց սպունդով մը ետին մեղմիւ թրջէ եւ պատկերը ապակիին վրայ կելլէ :

Դեղձանիկս (շահարիւ) ոչլոտեր է, ի՞նչ ընեմ որ սիրուն թռչնիկս այդ զա-զիր անասնիկներէն ազատեմ .

— Դիչերը վանդակին վրայ մաքուր սպիտակ կտաւ մը տարածէ, առաւօ-

տուն ոջիլները կտաւին վրայ հաւաքուած պիտի տեսնես . կրկնէ քանի մը դիչեր :

Գետնախնձորները խաչած ատեն երբեմն մէկ կողմը հում կը մնայ . ի՞նչ ընելու է .

— Գետնախնձորը հաւասարապէս կը խաշի եթէ մէջտեղէն շուրջանակի կեղե-ուենք եւ ապա խաշենք :

Ծերացած ու անպտուղ ծառերը կորե՞մ եւ վառելանիւթ ընեմ, թէ՛ ճար մը կայ որ նորէն կենդանանան .

— Ձմրան չմարած կիրը ջուրի հետ խառնելով քսէ ասիկէց կեղեւներուն . կրկնէ մինչեւ որ հին կեղեւը թափի եւ նոր կեղեւ գայ տեղը . այս կ'երիտա-սարդացունէ ծերացեալ ծառը

Թրթուրները շատ վնաս կուտան ծառերուն, ի՞նչ կրնամ ընել .

— Ձկան իւզ քսէ ծառին ճիւղերուն եւ բունին . իսկ բանջարեղէններուն մէջ

կանէփ (+եթէն) ցանէ կամ քէրէք սրակէ վրանին :

Զաւակս , Գրիգոր , կարմիր մազերով ծնաւ . կրնա՞յ փոփոխութիւն մ'ըլլալ .

— Այո , յաճախ յաճախ կտրէ մազերն եւ գոյնը կը փոխուի :

Արդեօք ինչ՞ու համար , մինչ Սուրբ Գիրքին մէջ գինիին նկատմամբ այսքան գովեստներ կը գանուին , անոր վնասներուն վրայ բան մը խօսուած չէ .

— Սուրբ Գրոց մէջ գինի բառին համար Եբրայեցիներէն երկու բառ կը գրուուի . Մին կը ցուցնէ չխմորուած , խակ միւսը՝ խմորուած : Բուն հեշտացուցիչը եւ գինովցնողը խմորուած գինին է : Ինչպէս որ ներկայ դարուս մէջ նարինջը , լեմոնը ճմլելով օշարակ կը շինենք , հին Եբրայեցիներն ալ խաղողին ողկոյզը կը ճմլէին եւ ելած հիւթը կը խմէին անմիջապէս , եւ այս հիւթը գինի կը կոչուէր : Արդ , Սուրբ Գրոց շատ տեղերը յիշուած գինին յայտնի է թէ այս տեսակէն է : Իրաւ , խմորեալ գի-

նի խմողներ ալ եղան . եւ խմողներն իրենց պատիժն ընդունեցին : Սուրբ Գիրքին՝ այս պատիժներուն յիշատակութիւնն ընելը , այդ ըմպելիէն փախչելու համար բաւական պատճառ է : Սողմոն յայտնապէս կը գրէ . «Որո՞ւնն են վայր , որո՞ւնն են ոհր . որո՞ւնն են կոիւները . որո՞ւնն արտունջները . որո՞ւնն են առանց պատճառի վէրքերը Գինիին քովը մնացողներուն , խառնած գինին փնտռելու գացողներուն :» «Օձի պէս կը խածնէ , քարբի պէս կը խայթէ :» Սուրբ Գիրքն աւելի ի՞նչ ըսէր : Բժշկականութեան փորձառութիւնը եւ Սուրբ Գիրքին յայտնութեանը միա զննեք եւ ոգելից ըմպելիներէ խոյս տանք :

Օգին փոփոխութիւնները կրնա՞ն կանխատեսուիլ .

— Այո՛ . առ մաքուր , թափանցիկ շիշ մը մէջը լից 60 կրամ ալքօլ , 2 կրամ ամօնեաքի աղ , 8 կրամ քամփուր եւ լաւ մը ցնցելէ ետեւ խցէ : Երբ հեղուկը պարզ մնայ օդը պարզ կ'ըլլայ . երբ փոքրիկ փրփուրներ երեւին , անձրեւ պիտի

գայ . իսկ երբ հեղուկը բուլբուլին պղտոր երեւոյթ մտանէ , փոթորիկ պիտի ըլլայ :

Գլխու ցաւի պարզ դեղ մը յանձնարարեցէք .

— Տաք ջրոյ մէջ ֆանէլա մը թաթխէ , քամէ եւ դիր հատ մը վիզին եւ հատ մ'ալ ոտքին վրայ . գլխու ցաւն իսկոյն կ'անցնի :

Լուծում դադրեցունելու դեղ մը գիտէք :

— Այո՛ . տաք ջրոյ մէջ թաթխած ֆանէլան . քամելէ ետեւ դիր ստամոքսին վրայ եւ լուծումը կը դադրի . նոյնը կոկորդին վրայ դրուելով հարբուխի եւ կոկորգի բորբոքման դեղ կ'ըլլայ . յօդացաւը կը բուժէ ցաւած մասին վրայ դրուելով եւ ակռայի ցաւը՝ ծնոտին վրայ դրուելով :

Հազի լաւ դեղ մը գիտէ՞ք .

— Առ 100 կրամ կարմիր սոխ , սորուկէ եւ ջարդէ . եփէ 50 տրամ ջրոյ մէջ .

վրան աւելցուր 25 տրամ մեղր ու 50 տրամ շաքար աւելցունելով լից լայն բերնով շիշի մը մէջ եւ իցելով պահէ պաղ տեղ մը . տղայոց տուր օրը 3-4 անուշի դգալ , իսկ մեծերուն 3-4 մեծ դգալ :

Հնդկական օչարակի կանոնն ի՞նչ է .

— Մէկ ու կէս քաշ շաքար , 16 տրամ լէմոնի թթու (առիս անիսի) եւ երեք քաշ եռացող ջրոյ մէջ խառնէ . երբ պաղի վրան աւելցուր մէկ տրամ լէմոնի ոգի (էօանս) եւ նոյնչափ ալքօլ , լաւ խառնէ եւ շիշերու մէջ լից : Երկու մեծ դգալ կը բաւէ գաւաթ մը պաղ ջրոյ մէջ խառնելով սքանջելի ամրան ըմպելի մ'ունենալ :

Տպագրուելու ձեռագիրներու նկատմամբ ի՞նչ օրէնք կայ .

1. Սեւ մեղան եւ ձերմակ թուղթ դործածէ , որ լայն դիծեր ունենան :
2. Էջերը հարձ ըլլան :
3. Ամէն էջի ետին պարապ ձգէ :
4. Ամէն էջի բուրբաղք ըստ բա-

ւականին լուսանց թողու :

5. Էջերուն վրայ թիւ դիր ըստ կարգի :

6. Որոշ գրէ գեղազրութեան այնքան կարեւորութիւն չտալով :

7. Կրճատում մի՛ ընել , այլ բաներն ամբողջ գրէ :

8. Կէտազրութեանց զգուշութիւն ըրէ :

9. Նոսար տպուելու բառերուն սակ մէկ գիծ քաշէ , երկաթագիր տպուելիքներուն երկու գիծ , մասնաւոր խոշոր տպուելիք բառերուն սակ երեք գիծ քաշէ :

10. Առաջին էջին վրայ տպագրիչին ուղղեալ ծաօթութիւններդ գրէ :

Միլտիւ կոշուած ծառոց հիւանդութեան ի՞նչ դարման կայ .

Ամէն ծառ միլտիւէ զերծ պահելու համար թանթրվէնի (Թ-բՎէբ) տերեւները խաշելով ծառերն երբեմն երբեմն ներարկելու (շեբէնչ) է :

Վարդենիները թրթուրներէ ազատ

պահելու համար ի՞նչ միջոց գործածեմ .

— Ծծումբի ու ծխախոտի փոշի առ հաւասար չափով եւ տունկերուն վրայ ցանէ առաւօտուն երբ ցօղ իջած է . թրթուրներն եւ որդերը քանի մը օրէն կը ջնջուին , սպա թանթրվէնի տերեւներու եփած ջրով բոյսերը ներարկելու է :

Պարտէզէս գորտերը ի՞նչպէս ջնջեմ .

— Ի՞նչ կ'ըսես , գորտերը պարտիզպանին էն լաւ բարերարներն են , եւ ամէնէն աւերիչ ճիճիները կ'սպաննեն . եթէ պարտէզի մը մէջ գորտ չկայ , պէտք է ուրիշ տեղէ բերել եւ բնաւ չհալածել զանոնք :

Սի-Թ-+լէները ի՞նչպէս ջնջեմ պարտէզէս .

— Սի-Թ-+լէին հայերէնը լորտնուկ է , նախ այս սորվէ . ասոնք ալիւրին թեփը շատ կը սիրեն , ուստի գետինը ցանէ եւ ծածկէ կաղամբի տերեւներով կամ կղմինարներով . ասոնց սակ կը հաւաքուին , ժողուէ ու ջնջէ :

Պիճակի խայթի ի՞նչ դարման կայ .

— Պիճակէն խայթուածիդ պէս լուա-
ցարանդ վազէ ու լեզակի (շէշէ*) պար-
կիկն առ , որով լաթերուն դոյն կու-
տաս, եւ խայթը անով շիէ , բայց ժա-
մանակ չանցնելով :

Մեկանի բեծերը տախտակէն ի՞նչպէս
կրնամ հեռացնել .

— Ազի թութուին (Լու-լ Բու-հու) մէջ
լաթ մը թաթխէ (զգուշ եզիր որ մատ-
ներուդ չդպցնես) եւ շիէ բիծերը , ապա
պարզ ջրով մաքրէ :

Երկաթեղէնները ժանդոտելէ ի՞նչ-
պէս կը պահուին .

— Չմարած կիրի փոշին լաւ միջոց
մըն է . դանակները որ չես գործածեր ,
ծածկէ այս փոշիով (կոթէն զատ) , դա-
նակի թելերն ասով ժանդոտելէ ազատ
կը մնան շատ տարիներ :

Ճերմակեղէններէ գինիի բիծերը ի՞նչ
կերպով կրնամ ջնջել .

— Բժաւոր մասը կաթին մէջ բռնէ

քանի որ կ'եռայ , բիծը կ'անհետանայ :

Ի՞նչ միջոց գործածեմ որ սուսս
միշտ կարգի եւ կանոնի մէջ գտնուի .

— Տիկին Համիլթօն այս հարցմանց
մի միայն երեք — լոկ երեք — կարճ
կանոն կուտայ .

1. Ամէն բան ճիշդ իր ժամանակին
ըրէ :

2. Ամէն բան ճիշդ իր տեղը դիր :

3. Ամէն բան միայն իր նպատակին
գործածէ :

Բրդեղէն հանդերձները ի՞նչպէս լուա-
լու է .

— Շատ տաք ջրով , քանզի զաղջ
ջուրը բրդեղէնները կը կծկեցնէ :

Ծովով ծամբորդութեան համար ի՞նչ
նախագոյշութիւններ ընել հարկ է .

— Կարծեմ խեղդուելէ զերծ մնալ
կ'ուզէք : Ամէն շոգենաւի մէջ կենաց
գօտիներ կան , որոնցմով կրնայ մարդ
խեղդուելէ աստիճան մը ապահով ըլլալ .
սակայն զանոնք ձեռք անցնել դժուար

կ'ըլլայ իրարանցման մէջ . ուստի արկնայք հին վզնոց մը — պօս կոչեալ — թող ստենկի (Տանխար) շերտերով լեցնեն եւ միշտ քովերնին պահեն երբ ծովու վրայ գանուին : Այր մարդիկ ալ նոյնը կրնան ընել աւելորդ բաճկոնի (էէլէ) ներքին կողմը ստենկի շերտեր կարել տալով :

Թոքախտէ կրնա՞յ մէկը անձը ազատ պահել .

— Այո՛, շատ զգուշութիւններով , որոց մասին բժշկական գրեանք կը խօսին . երգելը սակայն էն կարեւոր միջոցն է թոքախտի դէմ : Գերմանացիք , կ'ըսէ Տոքթէօռ Պուշ , թոքախտէ չեն բռնուիր ընդհանրապէս , քանզի ամբողջ ազգը երգիչ է , որով թոքերն ոյժ եւ զօրութիւն կը ստանան : Չայնական երաժշտութեան ուսուցիչ մը կ'ըսէ թէ տեսած է շատերը որ մեծ վտանգի մէջ էին թոքախտաւոր ըլլալու , որոնք բժշկուեցան միայն ձայնական երաժըշտութեան հետեւելով :

Խոյլը փոխանցի՞կ է .

— Տորչափ գոց մնան այս արտին ուռոյցները , չվարցուիր թէ ուրիշները պիտի վարակուին : Վարակումը այն ատեն միայն տեղի կ'ունենայ երբ յիշեալ ուռոյցները բացուելով շարաւ հոսի : Ուրեմն արտացեսլը եւ դանիկա դարմանողները զգուշանալու են որ խոյլի վէրքերէն վազող թարախը չուրջ գրանուողներուն չգպչի : Եւ վէրքը պէտք է ծածկել զեղով տոգորուած քուրջով եւ կամ բամբակով : Եւ երբ փոխուի վէրքը , վերցուած քուրջերը եւ բամբակները անմիջապէս այրուելու են : Ասոր հետ մէկտեղ , երբեք յապաղելու չէ խոյլի վէրքերը վիրաբուժական գործողութիւններով մաքրելու գործը :



ԵՐԲ ՄՈՄԸ ՄԱՐԻ ՄԱՐԿՍ ԿԸ ՄԵՌՆԻ

Շատ տարիներ առաջ աղքատ ուտայնանկ մը կար որ վեց որդի ունէր : Երբ եօթներորդ մ'ալ ծնաւ , կը խորհէր թէ զո՞վ կնքահայր ընարէ : Պէտք է հարուստ մէկը գտնես , ըսաւ կինը , քանզի մեր թշուառ մանկիկին ո՞վ հոգ պիտի տանի : — Այո՛ , ըսաւ սյրը , բայց , շե՞ս գիտեր որ հարուստները քարսիրտ կ'ըլլան : Այսու հանգերձ նա կը դիմէ հարուստ անձի մը եւ կը յայտնէ իր բաղձանք : Սա բարկութեամբ կը պատասխանէ թէ , արդէն շատերու կնքահայր եղած է , եւ այլեւս ուրիշի մը չկրնար ըլլալ , եւ դուռը ցոյց կուտայ : Խեղճ ոստայնանկը կը դիմէ աղքատ մարդու մը եւ կը խնդրէ իր նորածինին կնքահայր ըլլալ , սա եւս կը պատասխանէ

թէ ինք իրեն զաւակներուն հոգը չէ կարող տանիլ , ո՞ւր մնաց օտարի մը , եւ կը խրատէ հարուստի մը դիմել :

* * *

Ոստայնանկը յուսահատած տուն կը վերադառնայ , ճամբան անտառէ մը անցած ատեն կ'սկսի արտասուել , մազերը փեթթել եւ հառաջել : Բաւ է այլեւս , կը գոչէ , բաւ է , ո՞վ Աստուած , այսպիսի չար աշխարհի մը մէջ չեմ ուզեր այլեւս ապրիլ , թող դայ մահ . եւ հեռագունէ զիս այս թշուառ կեանքէն : Հազիւ թէ այս խօսքեր բերնէն ելած էին , յանկարծ մարդ մը կը կանգնի զիմացը , երկայն եւ սեւ վերարկու մը հագած , կոխած տեղը խօտեր եւ ծաղիկները կը դեղնէին , եւ երկու կողմի ծառերուն տերեւները չորնայով կը թափէին : Մահն էր ասիկայ : Զիս կանչեցիր , կ'ըսէ մահը ոստայնանկին , ի՞նչ է փախաքդ : Ոստայնանկը կ'ահաբեկի , կը գողայ եւ կը սարսուայ , գլխարկը կը հանէ , խոնարհութիւն կ'ընէ եւ կ'ըսէ , կինս երէկ որդի մը ծնաւ , եւ ոչ ոք

կը կամի անոր կնքահայր ըլլալ, ոչ հա-
րուստը եւ ոչ աղքատը, ուստի ձեզ
կանչեցի, քանզի թշուառին միակ բա-
րեկամն դուք էք, եկէք, եւ զաւակիս
կնքահայր եղէք: Շատ լաւ, կ'ըսէ մա-
հը, վաղը, երեկոյեան ժամերգութե-
նէն հտեւ, տղան եկեղեցի բեր եւ ես
զանի գիրկս առած մկրտել կուտամ:

* * *

Ոստայնակն մահուան պատուիրածին
պէս կ'ընէ, տղան կը մկրտուի եւ մա-
հը Անաստասիոս անունը կուտայ ման-
կան: Արձանագրութեան ատեն մահը
քահանային կ'ըսէ թէ ինք չրժիկ
բժիշկ մ'է եւ մասնաւոր բարեկամու-
թեան շնորհիւ այս աղքատ մարդուն
զաւակին կնքահայր եղայ: Երբ եկեղե-
ցիէն տուն կը վերադառնան, մահը մէկ
կողմ կը կանչէ ոստայնակը եւ կ'ըսէ:
Անշուշտ իբր կնքահայր ինձմէ բան մը
կ'ակնկալէք, սակայն արծաթ եւ ոսկի
չունիմ ես, քանզի ամէն ինձի եկող մար-
դիկ զանոնք հտեւնին կը ձգեն եւ մերկ
ու աղքատ, ճիշտ ինչպէս մօր արգան-

դէն ելլեն, ինձի կը յանձնուին: Սա-
կայն ձեզի բան մը պիտի սորվեցունեմ,
որով դրամի տէր կրնաք ըլլալ: Քահա-
նան համոզուեցաւ թէ ես բժիշկ եմ,
ուստի մարդոց ըսէք թէ ես ձեզի իմ
արհեստս սորվեցուցի եւ ձեզի դեզ մը
յայանցի որ մեծ զօրութիւն ունի իր
մէջը: Լսեցէք ինչ կ'ըսեմ. երբ հիւան-
դի մը կանչուիք, աչքերնիդ չորս բա-
ցէք, զիս միշտ հիւանդին քով նստած
պիտի տեսնէք, կամ օտքին կողմը,
կամ գլխուն կողմը: Երբ զիս հիւանդին
գլխուն կողմը նստած տեսնէք, ըսէք,
այս հիւանդին համար բնաւ յոյս չկայ,
պիտի մեռնի. ըսէք եւ առէք քաղցեք,
քանզի ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ, որ
նա պիտի մեռնի: Երբ սակայն զիս հի-
ւանդին օտքին քով նստած կը տեսնէք,
ըսէք թէ հիւանդը պիտի բժշկէք. որ-
քան վտանգաւոր ալ ըլլայ անոր հիւան-
դութիւնը: Ըրէք այսպէս եւ մեծ ա-
նուն պիտի վաստակիք: Այս ըսաւ մար-
դը եւ աներեւութացաւ:

* * *

Ոստայնանկը շատ ուրախացաւ , եւ հետեւեալ օրն սկսաւ հրատարակել թէ ինք բժիշկ է , սակայն ոչ ոք կը հաւատար եւ ամէնը սկսան ծաղրել զնա : Պատահեցաւ սակայն որ օր մը քաղաքապետը ծառէն վար ինկաւ եւ գրեթէ մեռեալ տուն տարուեցաւ : Խեղճ մարդը անտանելի ցաւով կը տառապէր , եւ բժիկներն յայտարարեցին թէ յոյս չկայ , պիտի մեռնի : Քաղաքապետին տունը մեծ արտամութիւն , լաց ու կոծ կար : Ոստայնանկն ալ հիւանդին սենեակը կը մտնէ , եւ տեսնելով որ իւր կնքահայրը հիւանդին օտից քով նստած է , կը գոչէ . բժիշկներն աւանակ են , բան մը չեն գիտեր , գլուխս գրաւ կը զնեմ որ ես այս հիւանդը կ'առողջացունեմ : Քաղաքապետին կինը մեծ գումար մը կը խօստանայ եթէ այրը բժշկէ . Ոստայնանկն ալ գրպանէն շիշ մը կը հանէ որոյ մէջ պարզ ջուր կար , եւ հիւանդին կը խմցունէ : Քիչ ատենէն քաղաքապետը կը բժշկուի եւ Ոստայնանկն կ'ստանայ խօստացեալ գումար :

Օր մ'ալ այն հարուստ դրամատէրը , որ մերժած էր որդւոյն կնքահայր ըլլալ , կը հիւանդանայ . սա շատ կծծի ըլլալով բժիշկ չկանչեց , հապա ոստայնանկին լուր դրկեց որ դայ : Ոստայնանկն եկաւ . հարուստն ըսաւ թէ ինք ծանր հիւանդութիւն մը չունի , միայն քիչ մը շատ ուտելով ստամոքսն աւրուած է , եւ խնդրեց որ իրեն ջուր մը տայ : Ոստայնանկն դիտեց որ մահը պնոր գլխուն կողմ նստած էր , ուստի վստահաբար ըսաւ թէ իրեն ցաւոց դեղ եւ դարման չկայ , պէտք է գործերը կարգադրէ . քանզի պիտի մեռնի : Դրամատէրը ծիծաղելով բժիշկները կանչել տուաւ , որոնք ըսին թէ քանի մ'օրէն երիտասարդի նման առոյգ եւ կայտառ պիտի ըլլայ : Սակայն երեք օր ետքը արդէն թաղուած էր : Արդ ամէն կողմ այս զարմանալի բժիշկին համբաւը տարածուեցաւ եւ քանի մը տարիէն նա հարուստ մարդ մ'եղաւ , ճի մը գնեց եւ կնոջն ըսաւ , սիրելի կին , ես գեռ իշխանի մը նման հարուստ պիտի ըլլամ :

Պատահեցաւ որ մեր տօքթօրը որ մը հարուստ միլիոնատէրի մը կանչուեցաւ , որ շքեղ ապարանքի մը մէջ կը բնակէր շրջապատեալ ամէն ճոխութիւնով : Ներս մտածին պէս կը տեսնէ որ մահը հիւանդեան գլխուն կողմը բազմեր է : Տէր իմ, կ'ըսէ , պիտի վախճանիք , ձեռքէս բան մը չի գար որ ձեզի համար ընեմ : Միլիոնատէրը հրաման կ'ընէ եւ գանձապահը տոպրակ մը ոսկի եւ արծաթ բերելով տօքթօրին ոտից քով կը դնէ . սիրելի տօքթօր կ'ըսէ հիւանդը , եթէ զիս ազատէք , այս դրամը ձերն է : Չեմ կարող կ'ըսէ ոստայնանկը : Սակայն ոսկին եւ արծաթը կը յուզեն գինքը : Կնքահայրը ինչո՞ւ այս հարուստին աչք տնկեր է . անոր տեղ քսան աղքատ կրնայ տանիլ . կեցիր սըւոր խաղ մը խաղամ ան ատեն իշխանի նման պիտի հարստանամ եւ իմ Անասթասիօս ալ իշխանազուն պիտի ըլլալ : Գիտեմ ընեւ լիքս : Կ'ըսէ , եւ դուրս կ'ելլէ :

* * *

Դուրսը սրահը չորս զօրաւոր ծա-

ռաներ կը կանչէ եւ կ'ըսէ , ձեր տիրոջ սենեակը գացէք եւ անկողնին քով կանգնեցէք , երկուքը գլխուն կողմը եւ երկուքը ոտքին կողմը : Երբ ձեզի հրաման ընեմ, իսկոյն ձեր տիրոջ մահիճը դարձուցէք , այնպէս որ զլուխը ոտքերուն, ոտքերն ալ գլխուն եղած կողմը գան : Հրաման արուեցաւ եւ իսկոյն կատարուեցաւ , անանկ որ կնքահայրը հիւանդին ոտքին քով նստած գտնուեցաւ : Մահն երբոր կատարուած խաղը տեսաւ, դժոխային նայուածք մ'ուղղեց ոստայնանկին եւ բռունցը շարժելով հեռացաւ սենեակէն : Միլիոնատէրը այն ժամէն աղէկի դարձաւ , ոստայնանկն ալ առաւ ոսկին ու արծաթն եւ զեղխ ու շուայ խնձօյքէ մը յետոյ տուն վերադառնալու համար ձամբայ ելաւ :

* * *

Ձամբան անտառէ մը կ'անցնէր . օրը միգապատ էր եւ խաւար . գլուխը կը դառնայ , աչքերը կը մթննան , յանկարծ կնքահայրն առջին կը կանգնի : Ոստայնանկը կը բարեւէ զնա եւ կ'ուզէ անգի-

տանալով ճամբան շարունակել : Մահը սակայն առաջ կ'անցնի եւ ձիուն սանձէն բռնելով բարկութեամբ կը պօռայ , դու անիրաւ մարդ , դու այսօր շատ վտանգաւոր փորձ մ'ըրիր , ուստի հիմա գլուխդ պիտի փշրեմ : Ա՛հ , սիրուն կնքահայր , կ'աղերսէ ոստայնանկը , գթութիւն ըրէ ինձ , այլեւս այդպիսի փորձ մը չեմ ընել , արդէն կարծես թէ ձիէն վար պիտի իյնամ , այնքան կը դողամ , աւելի լաւ պիտի ըլլայ եթէ զիս ձեր տուն տանիք եւ ինձ կազդուրիչ ըմպելի մը տաք : Շատ լաւ , կը գոչէ մահը բարկութեամբ . ձիդ ետեւէս քշէ : Մահն առջեւէն եւ ոստայնանկն ետեւէն յառաջ կ'երթային անտառին մէջ , ի վերջոյ սեւ գրան մ'առջեւ կեցան , զրան վրայ աւազի ժամացոյց մը կար նկարեալ եւ վրան գրուած էր վախճան . այս էր մահուան տունը :

Ներս մտան , սրահը մանգաղ մ'էր կախուած , յետոյ ուրիշ երկայն սրահ մը մտան , ուր անթիւ մոմեր կը վառէին , ոմանք դեռ երկայն էին , ուրիշները մինչեւ կէսը վառած , եւ ուրիշներն ալ

մարելու վրայ էին : Ոստայնանկն զարմացմամբ ըսաւ . կը կարծէի թէ ձեր տունը բոլորովին մութ ու խաւար է , ի՞նչ կը նշանակեն այնքան մոմերն , ինչո՞ւ ոմանք երկայն են եւ այլք կարճ : Մահը պատասխանեց . երբ մարդ մը աշխարհ գայ , հոս անոր համար մոմ մը կը տնկուի . ամէն մէկ մոմ մէկ մարդու կեանք կը նշանակէ . ոմանց մոմը կամաց կամաց կը սպառի . ուրիշներունը շատ , եւ երբ մոմը մարի , մարդուն կեանքն ալ կը վախճանի . անոնց մոմն որ դեռ երկայն է տակաւին , երկար պիտի ապրին , իսկ այն մոմերն որ կարճըցած են՝ քիչ օրեր ունին ապրելի եւ լաւ կ'ընեն որ պատրաստուին . այսպիսիս են ուն վերեւը կը նստիմ ես :

* * *

Ոստայնանկն պահ մը լռեց եւ ապա ըսաւ . կնքահայր , կ'ուզեմ գիտնալ թէ ի՞նչ մոմս ո՞րն է , որպէս զի գիտնամ թէ դեռ ո՞րքան պիտի ապրիմ , կը հաճի՞ք ցոյց տալ : Բայց վերջը չզղջաս ըսաւ մահը հեզնութեամբ եւ զսնդիկա առաջ-

նորդեց մոմերուն շարքին մէջէն . յանկարծ կեցան եւ մոմ մը ցոյց տալով ըսաւ . այս է քու մոմդ , այս քու կնոջդ մոմն է , այս Անասթասիօսինը , ասոնք ալ միւս զաւակացդ : Հասկցա՞ր հիմայ : Ոստայնանկը գունաթափ եղաւ . — միւս մոմերը բոլորն ալ փայլուն լոյս մը կ'արձակէին եւ շատ երկայն էին . էն երկայնը Անասթասիօսինն էր , իսկ իրեն մոմը վառած , գրեթէ հատած էր , հազիւ կը պլպլար , եւ հով մ'եղածին պէս խկոյն պիտի մարէր :

Ոստայնանկը ձեռքերն մահուան երկնցուց եւ պաղատելով ըսաւ . Ա՛խ ազնիւ կնքահայր իմ , քու շնորհիւդ հարստացայ եւ երջանիկ եղայ , եւ այժմ որ հազիւ թէ կեանքս վայելել սկսայ , պէտք է ձգեմ ամէն բան եւ հեռանամ աշխարհէ : Ո՛հ , զթա կնոջս եւ զաւակացս : Խեղճ այրի մը , հայրագուրկ որբեր ի՞նչ պիտի ըլլան , եւ իմ Անասթասիօսս ինչ պիտի ընէ երբ իր խնամատարն հեռանայ իրմէ : Գթա՛ , ո՛վ մահ , գթա՛ ինձ :

Մահուան սիրտը յուզուեցաւ , աչ-

քերն արտասուքով լեցուեցան , ա՛յնքան ազդուեցաւ նա այս խօսքերէն , եւ ըսաւ ողբաձայն , չէ հնար , չեմ կարող , քանզի ես Հօգրին ծառան եմ եւ պէտք է իմ պաշտօնս կատարեմ :

Ոչ , ըսաւ ոստայնանկը մահուան ծոնկերուն փաթթուելով , կրնաք նոր մոմ մ'առնել եւ իմ սպառելու վրայ եղող սոմիս տեղը դնել : Ո՛հ , կը պաղատիմ , կատարեցէք խնդիրքս , մի մերժէք աղաչանքս , ո՛վ զթածդ իմ կնքահայր , բայց շուտ , շուտ ըրէք , ահա մարելու վրայ է մոմս : Սրտորայցէք , դեռ չմարած : Քու ուզածիդ պէս ըլլայ , ըսաւ մահը , ի սէր Անասթասիօսին պիտի կատարեմ խնդիրքդ : Մահը ուրիշ մոմ մ'առաւ , եւ երբ սպառելու վրայ եղող մոմը երկու մատովը տեղէն կը վերցուներ նորը հոն դնելու համար , նա ճգմուեցաւ մահուան կոշտ մատներուն մէջ եւ լոյսը մարեցաւ . խկոյն խոր հառաչ մ'արձակեց ոստայնանկն եւ յերկիր տապալեցաւ անկենդան , անշունչ :

* * *

Իւրաքանչիւր ընթերցող թող յիշէ թէ կենաց մում սպառելու վրայ է, սա ուշ կամ կանուխ պիտի մարի, մինչեւ իսկ եթէ մահուան հրեշտակ իրեն կընքահայր ըլլայ, անհնար է խուսափիլ մահուանէ, ուստի միշտ մահուան պատրաստ գտնուելու ամենամեծ խմաստութիւնն է :



ԱԳԱՀՈՒԹԻՒՆ՝ ԱՐՄՍՏ ԱՄԷՆ ՉՍՐԵԱՑ

Գիւղի մը մէջ աղքատ ընտանիք մը կը բնակէր, ունէին մէկ հատիկ որդի մը, որ դպրոցն աւարտելէ յետոյ օտար երկիր գնաց : Տասներկու տարի անցաւ եւ ծնողք բնաւ լուր մը չունէին իրենց զաւակէն, եւ չէին գիտեր թէ նա ո՞ղջ է թէ մեռած : Նա կ'ապրէր սակայն եւ յօտարութեան ստակ կը զիգէր :

* * *

Տասներկու տարիէն ետեւ երիտասարդը դէպի հայրենիք ուղևորեցաւ, բոստան զի իր շահած զրամ իր ծնողաց

հետ վայելէ, ինչպէս վայել է ընել եւրախտագէտ որդւոյ մը : Հետը ընկեր մը ունէր երբ իր գիւղը հասաւ . ասոր ըսաւ երիտասարդը . ծնողացս անակնկալ ուրախութիւն կ'ուզեմ պատճառել . այս երեկոյ անոնց տունը պիտի երթամ առանց զիս ճանչցնելու : Սաւաւոտուն կանուխ, երբ ես զեռ անկողինս եմ, մեր տունը եկուր եւ հարցուր ծնողացս թէ արդեօք իրենց որդին հոն չէ՞ . եւ երբ ոչ ըսեն, պնդէ թէ նա հոն պէտք է ըլլայ, քանզի երէկ երեկոյ եկաւ : Յայնժամ սիրելի ծնողքս անկողնոյս քով պիտի վազկն, իրենց սիրեցեալ որդին կրկին տեսնելու, ո՛հ, ի՛նչ մեծ պիտի ըլլայ անոնց ուրախութիւն : Այս համաձայնութեան գալով երկու ընկերք մէկզմէկէ բաժնուեցան :

* * *

Երիտասարդը նոյն լերիկուն իր ծնողաց տունը եկաւ . ըսաւ թէ օտարական մ'է եւ չուզելով պանդօկը անցընել գիշերը, կ'ուզէ իրենց տունը գիշերել, փոխարէնը վճարելով . գրպանէն լեցուն

քսակ մը հանելով ի հաստատութիւն իւր դիտաւորութեան, ոսկի մը զրաւ հօրը ձեռքը : Ուրախութեամբ ընդունեցին երիտասարդը եւ սենեակ մը ցոյց տուին, առանց խորհելու թէ նա իրենց կորսուած որդին է :

* * *

Գիշերն եկաւ . իրենց ցոյց արուած քսակը քունը փախցուց երկուց ամուսնոց աչքէն : Միաբանեցան սպաննել իրենց հիւրն եւ գրամն իւրացնել . խորհեցան թէ ըստ որում նա օտարական է եւ ոչ ոք զնա ճանաչէ, եւ երեկոյին ուշ ատեն իրենց եկած է, իրենց արարք չկրնար յայտնուիլ :

Երիտասարդը յօգնած ըլլալով շուտով խոր քնոյ մէջ ինկաւ, ուստի բնաւ չիմացաւ երբ իր հայր ու մայր սենեակին դուռը բանալով ներս մտան : Կացինը վերցուց հայրը եւ մէկ հարուածով իր որդւոյն գլուխը զատեց մարմինէն : Ապա առին անոր քսակը եւ ուրիշ ինչ որ ունէր եւ այր ու կին տարին իրենց

որդւոյն անկենդան մարմինը եւ պարտէզը թաղեցին :

* * *

Հետեւեալ առաւօտ տան դուռը կանուխ զարնուեցաւ . երիտասարդին ընկերը ներս մտնելով հարցուց թէ երէկ երեկոյ իրենց որդին չեկա՞ւ արդեօք : Հարկաւ ժխտական պատասխան տուին : Նա սակայն պնդեց թէ անշուշտ իրենց որդին հոն պէտք է ըլլայ, քանզի երէկ երեկոյին իրենց տունը եկող օտարականը բուն իրենց որդին էր :

Հնար չէ նկարագրել ծնողաց աղաղակը, լացն ու ողբը, իրենց զաւակ բուն իրենց ձեռք սպաննած ըլլալուն համար :

* * *

Կառավարութիւնը իմացաւ եղելութիւնը, եւ երկուքն ալ այր ու կին, սպանեալին հայրն ու մայրը, յետ կարճատեւ քատառտանի հրապարակաւ գլխատուեցան : Այո՛, ամէն չարեաց արմատը արծաթսիրութիւնն է :

ԶՈՅԳ ՄԸ ԿՕՇԻԿ ՕՂԻԻ ՇԻՇԻՆ ՄԷՋ

Մայրիկ , կ'ըսէ Յակոբ , արբեցող Արթիւնին փոքրիկ մանչը . մայրիկ , աե՛ս կօշիկներս որքան հինցեր են . ա՛լ զոյգ մը նոր կօշիկ պիտի առնես ինծի , այնպէս չէ՞ :

Զաւակս , կ'ըսէ մայրիկը տխրազին , նոր կօշիկներդ հայրիկին օղիին շիշին մէջն են :

Իսկոյն Յակոբ հայրիկին սենեակը կը վազէ , ուր նա սովոր է իրիկուներն օղիին շիշն առջին առնել ու ժամերով ֆէյժ ընել , ու օղիին շիշն առնելով մէջը կը նայի : Կը քննէ աջ աչքով , բան մը չտեսներ , ձախ աչքով կը գննէ , նորէն ոչ կօշիկ կը տեսնէ եւ ոչ ուրիշ բան : Բայց մայրիկը չը ստէր , կ'ըսէ Յակոբ ինքնիրեն եւ գաւազանն առնելով հաս մը կ'իջեցունէ շիշին որ հազար ու մէկ կտոր կ'ըլլայ : Սակայն բաղձացեալ կօշիկներն երեւան չեն ելլեր :

Երեկոյին կը վերադառնայ հայրը ու ըստ սովորութեան սենեակը կ'երթայ ,

ուր իր սիրեցեալ մտերիմը — օղիին շիշն — դիմացն առած սովորական ֆէյժը կատարէ . բայց ի՛նչ տեսնէ , շիշը կտոր կտոր եղած ու թանկագի՛ն պարունակութիւնը գետինը թափած է :

Բարկութեամբ կը գոչէ եւ կ'ուզէ դիտնալ թէ ո՛վ է այս չարիքին հեղինակը :

Ահով , գողով կը մտանայ Յակոբ հօրը ու կ'ըսէ , հայրիկ , աե՛ս սա կօշիկներս , պատառ պատառ են եղած . երբ մայրիկէս խնդրեցի որ զոյգ մը նոր կօշիկ գնէ ինծի , պատասխանեց թէ նոր կօշիկներն հայրիկին օղիին սրուակին մէջ են : Նայեցայ շիշին մէջ , բայց չտեսայ կօշիկները , զիտեմ որ մայրիկս զիս չը խաբեր , ուստի կտորեցի շիշը , բայց նորէն չգտայ կօշիկները :

Հայրը յոյժ զգածուելով անմեղ Յակորին մանկական պատմութենէն , այն նոյն պահուն որոշեց հրաժարիլ օղիէն , ոչ թէ սակայն որոշեց այլ նաեւ հասաւա կեցաւ անոր մէջ . քիչ ատենէն ոչ թէ Յակոբ նոր կօշիկ ու Զատիկին ալ ձեռք մը նոր հանդերձ ունեցաւ ,

հապա տունը դրախախ փոխուեցաւ :
Եթէ այս տողերն արբեցող մը կար-
դալու ըլլայ, մեր կողմանէ միայն սա
կ'ըսենք իրեն .

Գնա՛ , դու սլ անանկ ըրէ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԱՆՐԱՎԷՊԵՐ

Բամբասող կնոջ մը պատուիրեց քա-
հանան հաւ մը գնել շուկայէն եւ մին-
չեւ տուն եկած ատեն փետտել փետուր-
ները : Կինը այնպէս ըրաւ , ու քահա-
նային ներկայացաւ : Գնա՛ , ըսաւ քա-
հանան ու հաւաքէ փետուրներն : Ատի
անհնար է ըսաւ կինը , քանզի հովը
դայնս ցրուեց : Հա՛ , ըսաւ քահանան ,
ծիշդ ա՛յդպէս են այն դառն ու զազիր
խօսքերն , դորս դու այլոց վրայ շարու-
նակ կը տարածես . եթէ փափաքիս իսկ
դայնս յետս կոչել , ատի անհնար է .
ուստի դադարէ բամբասանքէ :

Քանի մը երիտասարդք կը պատ-
րաստուէին կիրակի օր զուարճութեան

երթալ , սակայն մի քանին չէին հա-
մարձակեր Աստուծոյ սեպհական օրն ի-
րենց հաճոյից գործածել . այս անհամա-
ձայնութիւնը լուծելու համար գիւղին
երէցլին դիմեցին : Խնդիրը լսելէ ետեւ
երէցը պատմեց թէ հարուստ մի անձ
ձի հեծած եւ ետեւէն ուրիշ 6 ձիով
կ'անցնէր , ճամբան իր 6 ձիերն ըն-
ծայեց քանի մը երիտասարդաց , եւ
ինք իր ճամբան շարունակեց : Երիտա-
սարդք սակայն գո՛հ չըլլալով իրենց
նուիրեալ 6 ձիով , յարձակեցան հա-
րուստ , բարի անձին վրայ ու առին
անոր հեծած ձին եւս ու հեռացան :
— Խնդիրը լուծուեցաւ . երիտասարդք շեկ-
նեցան , եւ ետ կեցան կիրակին՝ Աս-
տուծոյ սեպհական օրն իրենց զուար-
ճութեանց համար գործածելէ :

Ծովեզրին վրայ քանի մը նաւա-
տիք կոճակի մը համար կը կռուէին .
ինչիրը ծանրակշիռ կերպարանք առաւ
ու բռունցքի հարուածներ տեղալ սկսան
միմեանց զլխուն վրայ : Յանկարծ ծո-
վէն օգնութեան աղեկտուր ազազակներ

հասան ազանչնուն , իսկոյն դադարեցան հարուածք , կռիւ վախճանեցաւ , բոլորն նետուեցան նաւակն ու հասան օգնութեան նաւաբեկելոց : — Յարանուանական ու կրօնի վարդապետական վէճերն ու կռիւներն իսկոյն պիտի դադարէին երբ լսէինք կորուսելոց ձայն որ օգնութիւն կը խնդրեն :

Գաղիացի ծերակուտական մը պանդոկ մ'իջաւ ու 150 Քրանդ վճարեց պանդոկապետին մէկ ամսուան համար : Ընկալազիր չէ՞ք ուղեր , հարցուց պանդոկապետը : Ոչ , ըսաւ , ծերակուտականը , բաւ է որ Աստուած տեսաւ վճարելս եւ դուք ալ դայն ընդունեցիք : Դու Աստուծոյ կը հաւատա՞ս , հարցուց պանդոկապետը ծերակուտականին : Անշուշտ , ըսաւ սա , եւ յոյս յայտնեց թէ պանդոկապետն ալ Աստուծոյ գոյութեան կը հաւատար : Ոչ , ոչ , ըսաւ , պանդոկապետը , կենացս մէջ Աստուծոյ գոյութեան հաւատք ընծայած չեմ : — Ուրեմն , ըսաւ ծերակուտականը , քանի որ բանը այդպէս է , պէտք է որ ինձ

ընկալազիր մը տաք . զոր նաեւ իսկոյն ստորագրել տալով գրպանը դրաւ :

Պարզ հաւատացեալ մը ըսաւ իր քարոզչին , որ փիլիսոփայօրէն քարոզել կը ջանար . — Չէ՞ որ Յիսուս պատուիրեց արածել զոչխարներն ու գառնուկներն , սակայն դուք ասոնց յատկացեալ կերը ա՛յնքան բարձր աւել մը կը դնէք , ուր հազիւ ուղտերը կրնան հասնիլ :

Նարինջ կերած ատեն կուտը տղուն կոկորդը մնաց . ամէն ջանք անհնար եղաւ դայն հանելու եւ բփռչկը վնաս չի կայ ըսելով ձգեց տղան իր բախտին : Քանի մը օր յետոյ սակայն տղան սկսաւ խեղդուիլ . եկան բփռչկներ , ձեղքեցին կոկորդը եւ հանեցին կուտը , որ ջերմութենէն ծլիլ սկսած էր եւ թոքին անցքերը կը գոցէր : — Տղայոց վատ ունակութիւնները պէտք է արմատէն բուժել եւ ոչ թէ վնաս չունի ըսելով անհոգ կենալ :

Գիւղացիին այժը կը գողցուի . նա

կը դիմէ քահանային որ գտնէ գողը : Յաջորդ կիրակի օր քարոզէն ետք երէցը կը հրամայէ ժողովուրդին որ թողորն ալ նստին : Ամէնքն ալ կը հնազանդին բաց ի մէկէ մը : Երէցը սակայն բարկանալով կը գոչէ . — Բայց ինչո՞ւ թողորդ ալ չէք նստեր : — Բողորս ալ նստած ենք , Տէր Հայր , կը գոչեն ամէնքը : — Ո՛չ , կը պօռայ քահանան , Գէորդ աղբարին այծը գողցողը զեռ չէ նստած : — Այո՛ , Տէր Հայր , ես ալ նստեր եմ , կը պատասխանէ այծը դողցողը : — Շո՛ւտ, ետ տուր այծը , գոչեց քահանան , եթէ ոչ ծանր պատժոյ կ'ենթարկեմ զքեզ :

Գերմանիոյ եօթնամեայ պատերազմին զօրապետ մը մահուան պատիժ սպառնաց քնացողին . հեծելազօրաց մին քնացաւ ու ընկերներն ինչ որ ըրին չկրցին զայն արթուն պահել , այսպէս իր ձին փախաւ ու թշնամին հոն պահուած զինուորները գտնուելն իմացաւ : Հետեւեալ առտու տարին զինք առաջին ծառին տակ որ կախեն . բանակին քարոզիչն եկաւ ու ըսաւ . Ո՛րդեակ , քանի

մը վայրկեանէն Աստուծոյ ատեանը պիտի ներկայանաս , ուստի խոստովանէ եթէ խղճիդ վրայ գաղտնի մի յանցանք ու մեղք կայ : Զինուորն ապշութեամբ դէպ ի ծառը նայելով ու ձեռքերը լալով միմիանց զարնելով գոչեց . — Ո՛վ դու անաւոր Աստուած , քանի՞ արդար ենք ու դատաստաններդ , հոս , ճիշդ հոս , մի տարի առաջ մարդ մը սպաննեցի , եւ այս ծառին տակ թաղեցի ու հիմա այս նոյն ծառէն պիտի կախուիմ : — Փորեցին ու իրօք սպաննուածի մը նեխեալ մարմինը գտան ու ապա զինուորը կախաղան հանեցին :

« Այլ եւս ժամէ որ ձիերն հեծնենք ու հեռանանք » գոչեցին Անդլիացի զօրականք Նարոլէօն իշխանին , մինչ Զուլուի վայրի ցեղին հետ պատերազմ կը մղէին : « Դեռ տասն ըրպէ կենանք » ըսաւ իշխանը : Մինչ զօրականք ձիերն հեծեալ կեցած էին ու իշխանին կսպասէին , հասան Զուլուի պատերազմիկներն նիզակներով , տէգէրով ու լախտերով . հեծեալ զօրականք մտրակեցին

ծիերն ու սրարչաւ հեռացան, մինչ Նարոյէօն իշխան 28 տեղէ վիրաւորուելով չարաչար սպաննուեցաւ: Մայրը, Էօժէնի կայսրուհին, երբ առաւ այս լուր, նուազելով գետինը ինկաւ. երբ սակայն մահուան պարագաներն մանրամասնօրէն պատմուեցան գոչեց. — Աւա՛ղ, այս էր իմ իշխանազուն որդւոյս սովորութիւն ի մանկութեան. ի՛նչ որ ալ հրամայէի « տասն բոպէ ալ, մայրիկ, կըսէր. այս եղաւ նաեւ նորա մահուան պատճառ »: Զաւակացդ անմիջական հնազանդութիւն սորվեցուր:

Ճօն Ֆլէշըր Անգլիոյ բանակը մտաւ ու տոմսակ մը գնեց որ հարաւային Ամերիկայ երթայ: Այն օր որ նաւը պիտի մտնէր, վրան եռացած ջուր թափելով պարաւորեցաւ ետ մնալ, որոյ վրայ մեծ ցաւ զգաց: Նաւն ընկղմեցաւ ու բոլորն ալ կորան. Ֆլէշըր այնպէս ազդուեցաւ որ բոլորովին նոր կեանք սկսելով՝ անուանի քարոզիչ մ'եղաւ:

Ճօրճ Ուաշինկթընի քարտուղարը

սովորութիւն էր ըրած միշտ ժամանակէն ուշ անցնիլ պաշտօնին գլուխը, աւարկելով թէ իր ժամացոյցը միշտ ետ կը մնայ: Օր մը երբ Ուաշինկթըն մեկնոյն պատասխանն ընդունեց, ըսաւ. — Բարեկամ, կա՛մ զու պէտք է փոխես ժամացոյցդ եւ կա՛մ թէ ես պիտի պարտաւորիմ փոխել քարտուղարս: Քարտուղարն այնուհետէ ժամանակին գործին գլուխը կը գանուէր:

Քարոզիչ մը երկնից վրայ ազդու մի քարոզ խօսեցաւ: Ունկնդիրներէն հարուստ մարդ մը յաջորդ օր ըսաւ քարոզչին. — Երէկ երկնից վրայ լաւ քարոզեցիք, սակայն չըսիք թէ ո՛ւր է երկինք:

— Իբ՛աւ, ըսաւ քարոզիչը, հիմակ պիտի ըսեմ երկնից ո՛ւր ըլլալը: Փողոցին ծայրը կը բնակի մի այրի, երկու որբերով. բոլորն ալ հիւանդ են. չունին վառարանին մէջ կրակ, չունին ուտելիք, նոցա թշուառութիւն յետին յայր է հասած. հինգ կամ տասը ոսկի դիր զրպանդ, գնա՛ եւ անոնց համար

ամէն պէտք եղածն զնէ՛ , խրկէ զանոնք այրիին եւ դուք ալ դացէք եւ ըսէք , յանուն Յիսուսի ասոնք ես ձեզի կը բերեմ . քանի մը մխիթարական ու խրատ-խուսական խօսքեր ալ ըսէք ու դուրս ելէք : Այս ընելէ ետեւ եթէ երկնից ո՛ւր ըլլայն չհասկնաք , բոլոր ծախքերնիդ կը վճարեմ :

Հարկ չեղաւ սակայն որ քարոզիչը ծախքերն վճարէ , քանզի քանի մ'օրէն հարուստը քարոզչին հանդիպելով ըսաւ . — Յիրաւի այն քառորդ ժամն զոր անցուցի այրիին խրճիթին մէջ , ինձ երկինք ըլլալ թուեցաւ :



Հորանտացի հարուստի մը որդին ամէն տեսակ անառակութիւն գործելէ ետեւ Հնդկաստան փախաւ եւ հոն զինուորս գրուեցաւ , ուր երթալով թաղուեցաւ ամէն տեսակ չարութեանց մէջ : Հօրը նամակ մը գրելով դրամ խնդրեց . նամակին պատասխանը եկաւ , սակայն երիտասարդը երբ մէջը փոխանակագիր չգտաւ , ձմեռն նամակը ու սոռանց կարգալու պայուսակին մէջ նետեց : Քիչ

յետոյ զինուորը հիւանդացաւ եւ հիւանդանոց փոխադրուեցաւ . վիճակը ծանրացաւ . որ մը հօր նամակը միտք բերելով՝ խնդրեց որ պայուսակէն հանեն ու կարդան . խնդիրը կատարուեցաւ . հայրը հրաման էր ըրած զօրագետին որ ազատ արձակէ որդին եւ առաջին կարգի ճանապարհորդի նման իրեն վերադարձունէ , խոստանալով մեծ ագարակ մը տալ որդւոյն արամադրութեան տակ եւ այսպէս երջանիկ ապագայ մը պատրաստել անոր : — Աւա՛ղ , գուցեց մահամերձ երիտասարդը , չկարողով հօրս նամակը , փառաւոր ապագայէ մը չարաչար զրկուեցայ : Սակայն ա՛լ ժամանակ չկար , անցած ու կորած էր պատեհ առիթ . հառաչելով աւանդեց իւր հօզին թշուառ զինուորը : Աւետարանը , մեր երկնաւոր Հօր նամակ , անարգողներն , թող սթափին , որ մի գուցէ այս զինուորին բախտին հասնեն :



Սատանային փորձութեանց վրայ քարոզող մի քահանայ լաւ կերպով ստորագրեց սատանան : Ունկնդիրներէն վատ

անձ մը կծու եւ ծաղրական նամակով մը խնդրեց քահանայէն թէ ինչ տեսակ զիմակ գործածելու է յառաջիկայ պարահանդէսի մը մէջ, ուր ինք սասանան պիտի ներկայացունէր : Քահանան գրեց թէ հարկ չկայ ո եւ է զիմակ գործածել, պէտք է ներկայանայ ինչպէս որ է ու իսկ եւ իսկ նման պիտի ըլլայ սատանային :

Անհաւատ մը բարի մարդու մը տուն գիշերուան ճաշի էր հրաւիրուած . վիճաբանութիւն մ'սկսաւ . ինձ ուրիշ լոյս պէտք չէ : գոչեց անհաւատն, ընտանական լոյս բաւ է ինձ : Վիճաբանութիւն տաքցաւ ու անհաւատն բարկանալով առաւ քաղեց : Հիւրընկալը ճրագ մ'առաւ որ ճամբան ցոյց տայ, բայց անհաւատը գոչեց, պէտք չէ ինձ ուրիշ լոյս, բնական լոյս կը բաւէ ինձ : Յանկարծ սանդուխէն զլորելով վար ինկողի մը ազազակ բոլոր հրաւիրեալներն ոտքի հանեց . վազեցին եւ տեսան որ մեր անհաւատը սանդուխէն զլորելով դրան առջեւ պառկած էր : Բնական լոյս

քեզ կը բաւէ, գոչեց հիւրընկալն : Անհաւատն առանց պատասխանելու դուռը բացաւ ու փախաւ ամօթահար, առանց ընդունած վէրքերուն կարեւորութիւն տալու :

Կոյր տղու մը աչքերը բժշկական գործողութեամբ բացուեցան : Երբ տղան շուրջի գեղեցկութիւն առաջին անգամ ըլլալով տեսաւ, գոչեց. — Ո՛հ, մայրիկ, ո՛րքան գեղեցիկ բաներ կան եղեր շուրջս եւ դու բնաւ չէիր ըսեր ինձ : — Կըսէի զաւակս, գոչեց մայրը, բայց դու չէիր ըմբռնէր :

Հոգևով կոյրերն ալ այսպէս չե՞ն :



Չ Ո Ի Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Հայրը .— Հիւսիսային բեւեռը 6 ա-
միս գիշեր կ'ըլլայ , զաւակս :

Տղան .— Վա՛յ . խեղճ գիշերապահ-
ները :

Տղան .— Սա մեծ շէնքը ի՛նչ է , հայ-
րիկ :

Հայրը .— Կոյրերու վարժարան է ,
տղաս :

Տղան .— Է՛ր ինչո՞ւ պատուհան ունի :

Ոստոցեղը .— Եթէ 19 խնձորէն 9
ուտես ի՛նչ կ'ուենենաս :

Աշակերտ .— Փորի ցաւ :

Դասաւորը .— Չէ՞ք ամաչէր , դուք
Յակոբին զլիտուն ջուրի գաւաթ մ'էք
նետեր :

Յանցաւորը .— Այս , բայց գաւաթը
արդէն ճաթած էր :

Մայրը .— (Երբ հիւրերը սեղան կ'ա-
ռաջնորդէր) տղաս , որո՞ւ քով , կուզես
նստիլ :

Տղան .— Կարկանդակին քով , մայրիկ :

Ա. — Ծօ՛ , այսօր լուղակ մը տեսայ
որ ամբողջ կէս ժամ ջուրէն դուրս չելաւ :
Բ. — Սա ալ բա՛ն մըն է , ես հատ
մը տեսայ որ բնաւ ջուրէն դուրս չելաւ :

Տեսէք եանքի մը ի՛նչ ըրաւ :

Լրագրաց մէջ ծանոց թէ մեծ սրահ
մ'է վարձած ուր ցոյց պիտի տայ զար-
մանալի կառք մը որ մէկ անիւ ունի եւ
առանց ձիու կամ շոգիի՝ զօրութեամբ
կ'երթայ :

Սրահը լեցաւ բաղմունքիւնով , եան-
քին լեցուց գրպանը մուտքին դրամնե-
րովը , ու երբ ներկայացման վայրկեանն
հասաւ , թատերաբեմը բերաւ լաթով
ծածկուած բան մը ու ինք վարագոյրին
ետեւէն հեռացաւ : Հանդիսականք եր-

կար սպասեցին որ հրաշալի կառքը իրենց ցոյց տրուի, բայց եկող գացող չկար. ի վերջոյ հանդիսականաց մին վերցնուց սեւ լաթը ու ահա երեւան ելաւ հող կրելու միանիւ հին սայլակ մը :

Ընկերական ակումբի մը մէջ կին մը կը պատմէր թէ ամուսնոյն հետ կըռիւ մ'է ունեցեր, եւ ապա հաշտուելով այրը ի յիշատակ սորա ծառ մ'է անկեր : — Տեսա՞ր, ըսաւ կամացուկ մը, մի ուրիշ կին իր ամուսնոյն, եթէ մենք ալ ասանկ ըրած ըլլայինք, հիմա գեղեցիկ անտառ մ'ունեցած կ'ըլլայինք :

Գործարանագիր. — (ծառային). տեսուչը ձեզի չըսա՞ւ թէ ի՞նչ պիտի ըլլայ գործերնիդ :

Մտառն. — Այո, պատուիրեց որ ամէն անգամ երբ ձեր գալը տեսնեմ, զինքը արթնցնեմ :

Կենաց սպանողութեան գործակա-
գարը. — Տեսէ՞ք, սիրելիս, կնիթադ-
րենք թէ սրունքնիդ կտարեցիք, իսկոյն

500 լիրա կ'ստանաք, եթէ 4 շաբաթ ետքը թեւերնիդ ալ կտարէք, 1000 լիրա եւս կ'ստանաք, յայնժամ աշխարհիս էն երջանիկ մարդը կ'ըլլաք :

Ուսուցիչը. — Կրնա՞ս առօրեայ կեանքէն օրինակով մ'ապացուցանել սա ծանօթ օրէնքը թէ՛ տաքը կը մեծցնէ ու ցուրտը կը պղտիկցնէ :

Աշակերտը. — (Պահ մը խորհելէ ետեւ). Այո՛, ամառը օրերը երկայն կ'ըլլան, իսկ ձմեռը կարճ :

Գիւղացին. — (Գարոցին պատին վըրայի աշխարհացոյցը տեսնելով). վարպետ, ի՞նչ է սա :

Ուսուցիչը. — Ձե՞ս գիտեր, ասոր աշխարհացոյց կըսեն. եւ բոլոր քաղաքները, գէտերը, ծովերը կը ցուցնէ :

Գիւղացին. — Մեր քաղաքն ալ կա՞յ հսն :

Ուսուցիչը. — Հապա՛ :

Գիւղացի. — Ես՛, անանկ է նէ՛, որ քահն ալ ձանձրութիւն կ'ըլլայ, նայէ տես թէ հօրեղբայրս զեռ ո՞ղջ է :

Ուսուցիչ.— Երբ Յիսուս յարեալ
նախ որո՞ւ երեւցաւ :

Աշակէրար.— Կնիկներուն :

Ուսուցիչ.— Ի՞նչ պատճառաւ , կըր-
նա՞ս ըսել :

Աշակէրար.— (Ի՞նչ մը խորհելէ ետեւ).
քանզի լուր տարածելու է՛ն լաւ միջոցը
կնիկները գիտեն :

Ո՞րն է էն լաւ պարտատէրը :

Ջրհորը , քաշէ ու քաշէ , ծայր չունի :

Բժիշկը.— (Հիւանդանոցին հիւազա-
պահին) է՛ , երէկուան մեր Յ հիւանդ-
ներն ի՞նչպէս են :

Հիւանդապահ.— Ձեզի օրեր , սօք-
թէօր , հինգը մեռան :

Բժիշկ.— Բայց ես վեց հոգիի հա-
մար զեղ տուի , ի՞նչ եղաւ վեցերորդը :

Հիւանդապահ.— Շատ լաւ է , կը
պտըտի , բայց ինչ որ ըրի չկրցի անօր
ալ տալ ձեր զեղը :

Վարժապետ.— Ըսէ նայիմ , Գրիգօր ,
Փարաւոնին հետ քանի՞ Եզրիպտացի-

ներ Կարճիր ծախուն մէջ խեղդուեցան :
Գրիգօր.— (Ի՞նչ ընկերին կամաց
մը) . Ամմա հա խենդ հարցում է ծօ՛ :

Վարժապետ.— Ամուր ըսէ , տղաս ,
ըսածդ շիտակ ըլլալ կ'երեւի :

Յաճախորդ.— (Ժամագործին խանու-
թին տիրոջ) . — Ո՞ւր է վարպետը :

Տէրը.— Ուրիշ քաղաք փոխադրուե-
ցաւ :

Յաճախորդ.— Է՞ , մեր ժամացօցը :
Տէրը.— Ի՞նչ ժամացօյց :

Յաճախորդ.— Պատի մեծ ժամացօյց
մը , դեռ երէկ յանձնեցի իրեն :

Տէրը.— Է՛ն , ան ալ հետը փո-
խադրուեցաւ :

Բրօֆէսօր.— Կրնա՞ս յիշել երկիր մը
որ մասնաւորապէս օրհնեալ ըլլայ :

Ուսանող.— Այո , Սքանիա ու Փոր-
թուկալ , ո՞ւր ոչ թէ միայն էն լաւ գի-
նին կը գտնուի , այլ նաեւ խցանի ծառն
ալ կը բուսնի , որ զինին անմիջապէս
չիշերուն մէջ կը գոցուի :

Խոսարժանողը . — (Քահանային առջին) .
չատ անգամ կինս ալ ձեռեցի :

Քահանայ . — Բարի գործերն մի պատ-
մէր ինծի , միայն չար գործերդ . մեղ-
քերդ լսել կ'ուզեմ :

Ժողովէ մը վերջ երեսփոխան մը իր
ընկերին կ'ըսէ . — Բոլոր նիստին մին-
չեւ վերջը բերանդ չբացիր :

Կը սխալիք, մինչեւ վերջը յօրանչեցի :

Հայրը . — Յակո՛ւբ , տես այս ձեռքս
տասնոց մը կայ ու միւսը թուղթ մը
(պանքնօթ) , ո՞րը կ'ուզես :

Տղան . — Տասնոցը թուղթին մէջ
փաթթէ ու այնպէս սուր :

Սյրը . — Ահաւասիկ , սիրելի կին ,
Ծննդեան տարեդարձին համար ազնիւ-
կտաւ գնեցի :

Կին . — Ո՛հ , ինչ սքանչելի կտաւ է
այս : Ի՞նչ կ'ուզես որ ինծի շինեմ անով :

Սյր . — Թաշկինակներս հինցեր են ,
քանի մը փուզինա եթէ շինես, գէշ չըլլար :

Դրամաբէր . — (Մուրացկանին) ահա
տասնոց մը , սակայն պատրաստ եմ
անցեալ տարի տասը դրշ . գնած մէկ
բանս քեզի տալ . ո՞րը կը խնդրես :

Մարայիկան . — Անցած տարի գնածդ
սուր :

Դրամատէրը կուտայ մուրացկանին
անցեալ աարի գնած երկաթուղեայ եր-
թեւեկութեան թանցր հատորը :

Մայր . — Օննիկ , վաղը հօրեղբայրը
մեզի ճաշի պիտի գայ , չըլլայ որ անոր
մազերուն նկատմամբ բան մըսես :

Օննիկ . — (Հետեւեալ օր ճաշի ատեն) .
մայրիկ երէկ պատուիրեցիր որ հօրեղ-
բոր մազերուն նկատմամբ բան մը չըսեմ .
բայց հօրեղբայրը բնաւ մազ չունի :

Դատարար . — (Ամբաստանելին) . իրա՞ւ
է ինչ որ այս ամբաստանողդ կ'ըսէ ,
թէ դու զինքը գող , աւազակ , ծոյլ ,
անճարակ ես կոչեր :

Աճառարանեալ . — Սյո՛ւ , իրաւ է , սա-
կայն ես իրեն անանկ բան չըսի :

Հաւկուր մարդ մը 60 ոսկի պա-
րունակող քսակ մը կը գտնէ ճամբան
եւ տէրը գտնելով կը յանձնէ. սա հրէայ
սեղանաւոր մ'էր որ այսպէս կ'ըսէ .
չատ անկեղծ ու հաւատարիմ ես , ուս-
տի ես ալ շատ վեհանձն պիտի ըլլամ
ու ստակս քովդ մնացած ժամանակին
համար տոկոս չպիտի պահանջեմ քեզմէ :

Յակոբ . — Քանի՞ եղբայր ունիք Յա-
րութիւն :

Յարութիւն . — Միայն մէկ եղբայր մը :

Յակոբ . — Զարմանալի բան . չեմ
զիտեր թէ քոյրդ ինչո՞ւ զիս կը խափէ .
դեռ երէկ ըսաւ թէ երկու եղբայր
ունի :

Օրիորդ մը ծովն ինկաւ . խեղդուե-
լու վրայ էր , երբ Նիւֆառուալէնտի
հսկայ շուն մը ազատեց զանի : Զգայա-
զիրկ տուն տարուեցաւ եւ երբ սթա-
փեցաւ , ըսաւ թէ որոշած է ամուսնա-
նալ իր ազատարարին հետ : Հայրը կ'ը-
սէ թէ ատիկա անկարելի է : Ամուս-
նացած է կը հարցունէ աղջիկը : Ոչ ,

կըսէ հայրը , բայց ազատարարը շուն
մ'էր :

Փոքրիկ Մարիամ պաշտօն ունի հօ-
րը սպիտակ մաշկերը փեթթել : Պահ մը
այս պաշտօնը կատարելէ ետեւ կ'ըսէ .
— Հայրիկ , աւելի լաւ չէ՞ սեւերը փեթ-
թել , անոնք շատ քիչ են ու գործս
շուտով կը կատարուի :

Դասաւոր . — Ո՞ւր կը բնակիք :

Աճապարանէալ . — Եղբօրս քով :

Դասաւոր . — Իսկ եղբայրդ :

Աճապարանէալ . — Իմ քով :

Դասաւոր . — Բայց երկո՞ւքդ :

Աճապարանէալ . — Ի միասին :

Դասաւոր . — Շունշանողի՞ . . . :

ՄԻԻԷՍՍԻՐ ՊԻՐ ԻԼԱՃ

— Պօնժուր , մատամ :

— Օ՛ , պօնժուր , սէֆա կէլտինիդ .
պու յէ՞ ըրեզկեար էստի պագալըմ :

— Սիդի ունութմագ գապի՞լ մի արբ,
մատամ, հալիմի պիլսէնիզ :

— Նէ՞ օ . երնէ նէյիներ՞զ վար :

— Հէր կիւն խասթայրմ, մատամ,
հէքիմ գալմատը քէնտիմի կէօսթէրտիմ,
իլաճ գալմատը վէրտիլէր, իշ նէրէտէ
խսէ երնէ օրատա, զէրրէ գատար Փաի-
տէ կէօրմէտիմ :

— Բէք էյի ամմա, նէյիներ՞զ վար,
նէ՞ օլուլօրսընըզ :

— Մատամ, նա՞սըլ անլաթայրմ,
իշթահրմ եօզ, աէրմանըմ եօզ, ճանըմ
սըգըլըր, երւրէյիմ չարբար, միյտէմ է-
ղիլըր, տիղլէրիմ քէսիլըր, եէրիմտէն
գալգմագ իսթէմէմ :

— Բէք ալէա, հէքիմ էֆէնտիլէր
նէ՞ էֆքեար պէեան իթտիլէր, նէ՞
պուլարըլար :

— Հէրսի պիրէր շէյ աէտիլէր, քի-
մի գան գայրֆըլըր աէտի, քիմի սընըր
ղայրֆըլըր պուլտու, քիմի միյտէմի
պէօյիլք պուլտու, քիմի աէ տալագ
ուֆալմըլ աէտի, քիմի աէ միտէ մա-
յասըլը պուլտու : Սի, մատամ, հալիմ
ֆէնա, էօլէճէյիմ աէյի գօրգուեօրըմ,

սիղ ագըլըր պիր գատընսընըզ, իւմիտիմ
սիգտէ :

— Պէնիմ էլիմտէն նէ՞ կէլիբ, մա-
տամ, լաքին էվճէ, եանի գարը գօճա
մուհապպէթլի՞միտիներ :

— Մատամ, մուհապէթ աէ սէօզ
մի՞, գօճամ իւղէրիմէ տէլի տիվանէ օ-
լուր, պէնիմ պու հալիմի կէօրտիլքճէ
ատէթա աղլար, ուչագլար, երլըգճը-
լար գարշըմտա, պիր սէօզիւմ իքի օլ-
մագ, հէր իսթէտիյիմ սանիյէսինտէ իճ-
րա օլոււնուր, էլիմի սույա սօգտամ՝
գըլյամէթ գօրարըր պաշըմա, իղնի եօզ
քի պիր շէյի շուրատան ալըպ պուրա-
յա գօյայըմ, գօրգար քի եօրուլուպ ին-
ճինիրիմ աէյի, եէմէյիմի օտամտա եէ-
րիմ, նէրտիվէնլէրի էնիպ շըգըպտա եօ-
րուլմամագ իչին :

— էյ, նագլ իտինիզ պագալըմ,
մատամ :

— Էվվէթ, եէմէյիմիղի եէյիպ, պիր
աղ գանարէլէրին իւղէրինտէ եան կէ-
լիպ, գահվէլէրիմիղի իչիպ եաթարըզ,
պէն եաղըն սապահ, սաաթ Յտէ ույա-
նըրըմ, իքի սաաթ գատար եաթարը-

մըն իշխնատէ եան կէլիպ օթուրուրմ , սիւտիւ գահվէմի իշտիքտէն սօնրա , սաաթ 5է սօղրու եալաչճաճըգ եաթա- զըմասն չըզըպ գանաքէնին իւզերինէ եան կէլիրիմ , սաաթ 6տա պէսլէմէ կիւնտիւղ հէմէյիմի կէթիրիւ եէրիմ , գահվէմի իշիպ , վէ շահնիշինտէ պիր ազ կէչէն տէօնէնլէրի սէյր իթտիքտէն սօն- րա , կիւզէլ պիր կիւնտիւղ ույգուսու չէքէրիմ , սօնրա կիլինիպ սալօնա էնիպ գօճամըն կէլմէսինէ պէքլէրիմ :

— Հէքսի պու մօ՞ւ , վէ հէր կիւն պէօյլէ՞ մի , մատամ :

— Էվվէթ մատամ , հէքսի պու վէ հէր կիւն պէօյլէ :

— Մատամ , սիղի ախնէտիմ , վէ շիմտի հալի իւէ էֆքեալըմը ալմագ իս- թէրսինիզ , աէյի՞ւ մի :

— Շիւպհէ՞ մի վար , մատամ :

— Մատամ , էվվէլ էմիրտէ սիղին գօճանըզ սօն աէրէճէ ճէրրա պիր ա- տամ ըմըշ , էվվէթ մատամ ճէրրա հէմտէ զայէթ սուլու սօյունտան ճիտտա . սի- զին խասթալըզա կէլինճէ , մատամ , սիղ ասլա խասթա օլմատըգապն սօնրա ա-

աէթա ինկիլիզ չէլիլինաէն եարլմըշ պիր գատընսընըզ , չիւնքի սիղին կիպի ամէլիմանտա վէ թէնպէլ էօսիւրիւ հէր հանկը գաարն 10 կիւն կէչիրսէ , տտէ- թա եաթագտա եաթաճագ խասթա օ- ւուր :

— Տէտիքլէրինիզաէ հիշ պիր շէյ անլամայօրմ , մատամ :

— Մատամ , ուզուն լաֆըն գըսասը , սիղին խասթալըզընըզ աաէթա Բէնպէ- ւէ Խասթալը , էզլիլիպ պիւզիւլմէք իս- թէմէզ , սօղրուսը պու , իսթէր զէնկին օլ , իսթէր էսնաֆ , իսթէր ֆաղիր , գա- տըն , էրքէք , վսեմուհի , վսեմաշուք նէ օլուրսան օլ , ինսանըն չալըշպ եօ- րուլմայա , հարաքէթաէ պուլունմայա մատտի վէ մանէվի իղթիզասը վար աըր , մուղայիրը հալտէ խասթա օլուր . նա- սըլքի սէն վէ սէնին կիպի բէք չօզ գըզ- լար վէ գատընլար . ճիւմրիւնէ , պու- լընաըզըն մէվզըյա մուվաֆըզ պիրէր իշ պուլուսպ չալըշմալը , չալըշմագ , եօրուլ- մագ հայաթ աըր : Պաղէն օգուլմալը , պաղէն եաղմալը , պաղէն հայա օլարագ պիր գաչ սաաթ կէզմէլի , էվին իշինտէ

էնիպ չըզըպ պիրէր իչ պուլուպ չալը-
մալը , սիրմէլի , սիւքիւրմէլի , տիքիպ
պիչմէլի , հէլէ պիր աչ գատար պու տէ-
տիքլէրիմէ մուվաֆըզ հաչա , պազընըզ
պիր շէյիսիզ գալըր մը :

— Լաքին , մատամ , շու հալիմտէ
նա՞սըլ չալըչապիլիբիմ , պիր տէ ուչադ-
լար , երլըգծըլար տուրուր իքէն պա-
նա չալըչըպ վէ խըտմէթ էթմէք հա-
զըչըր մը . զէնկինլիկէ , աղնուաշուգ-
լուզա հազըչըր մը :

— Էզիլիպ պիւզիւլմէքլէր իսթէմէմ .
պօշ լաֆլար հիչ իսթէմէզ . քէնտինի
հավաշ հավաշ ալըչտըր :

— Պաշ իւսթիւնէ , մատամ , սիզին
սէօղիւնիւզիւ տիյնէյիպ էմրինիզ վէճնլէ
հարընտան թէզի հօգ պաշլայըպ չալը-
չաճաղըմ , վէ պէօլէ պիր միււտտէթ
տէվամ էթտիքաէն սօնրա , նէթիճէսինի
կէլիպ սիզէ պիլտիրէճէյիմ :

— Հա՛ շէօլէ . պիր տէ սապահլա-
րը էրքէն գալգմալը , զիֆթ սազըզ օ-
լուպ հաթաղա հարըչմամալը :

— Պաշ իւսթիւնէ , մատամ , էօլէ
օլսուն , թէչէքքիւր իտէրիմ . էկէր շի-


Փայապ օլուպ վէ շու հէքիւղէրին էլին-
տէն գուրթուլուրսամ , սօնունա գա-
տար սիզէ միննէթտար օլաճաղըմ :

— Հիչ շիւպնէն օլմատըն մատամ ,
հէմ չալըչ , հէմ տէ սէնին կիպի թէն-
պէլէ՛ Խասխալըչնա տիւչար օլան գա-
տընլարը տախի չալըչմաղա թէչվիզ էթ :

— Ատիէօ , մատամ , պէնտէնիզէ ի-
զին :

— Իզին սիզին , մատամ , ատիէօ :

ՏՕԲԹ. ՃԷԼԱԼԵԱՆ



ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ԽԱՇՆԱՏԷՐԸ

Աշխարհի ամենահարուստ խաշնա-
տէրն Ամերիկայի Թէքսաս նահանգին
մէջ է . ունի 225,000 արջառ , որոնց
համար 33,000 քառահոսի քիլօմէթրօ
արօտավայր ունի եւ 400 հովիւ . տա-
րին 60,000 հորթ կ'ունենայ : Այս մեծ
հօար կառավարելու համար ունի 3 000 ձի :

ԽՆՁՈՐ ԿԵՐԷ՛Ք

Խնձորը առատ ֆօսֆօր կը պարու-
նակէ , ուստի կը նպաստէ երիկամունք-
ներու եւ լեարդի դործողութեանց , մար-
սողութեան եւ կազդուրիչ քուն կը
պատճառէ , կ'անցունէ նաեւ ծարաւը :

ՉԻՆԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

Չինացիք մտաքօր առնելէ ետեւ

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԴԻԻՐԱՅԱԾ

Պուրմայի ամուսնալուծութիւն սա-
պէս կը կատարուի . այր եւ կին մէյմէկ
մոմ կը վառեն եւ կը կանգնին , որո՛յ
մոմն որ առաջ մարելու ըլլայ , նա է որ
կը հեռանայ տունէն առանց հետը բան
մ'առնելու , բացի հազած հանդերձներէն :

ԵՐԿՈՒ ԿԵՐՊ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Աւստրալիոյ բնակիչներն ամուսնա-
նալու երկու կերպ ունին . այն օրիոր-
դին որ հաւնած են , գլխուն հարուած
մը տալով զգայաղիրկ կ'ընեն եւ հետեր-
նին կը տանին . եւ կամ զիչերն օրիոր-
դին խրճիթը մանելով , նիզակը անոր մա-
զերուն մէջ կ'անցունեն եւ քանի մ'ան-
գամ ոլորելէ ետեւ զուրս կը քաշեն մահ
սպառնալով եթէ աղաղակէ :

մնացած որդերը կ'ուտեն . մտավաճառ-
ներուն խանութը 12 գեր մուկ 5 զրշ.ի
կը ծախուի . հոն ոչխարներուն քով
մորթուած կատուներ ալ կախուած կան,
եւ ասոնց զինը ոչխարի միտին զինէն
աւելի է : Հոն , ի Չինաստան , թռչնոց
բոյնը շատ յարգի կերակուր մ'է , որոց
100 արամը վեց սակի կ'արժէ : Հիւսի-
սային Ամերիկայի հնդիկները մարախը
ժողուելով կը չորցնեն , կ'աղեն եւ կը
պահեն իբր համադամ կերակուր :

Ի՞՞՞՞՞ Է ԽՆԴԱՅՆՈՂ ԿՈՉՈՒԱԾ ԲՈՅՍԸ

Խնդացնող բոյսը Արաբիոյ բնիկ տունկ
է , եւ իր անունը կ'առնէ սերմերուն
ուտելէն յառաջ եկող ազդեցութենէն :
Տունկը չափաւոր մեծութիւն ունի , եւ
պայծառ դեղին ծաղիկներ եւ կակուղ
թաւշանման սերմի պատիճներ , որոնց
իւրաքանչիւրը կը պարունակէ երկու կամ
երեք սերմ մանր սեւ լուբիայի նման :
Ինիկները կը չորցնեն այս սերմերը , եւ

յետոյ կը փշրեն փոշի կ'ընեն : Այս փո-
շին է որ այնպիսի զարմանալի արդիւնք-
ներ յառաջ կը բերէ : Անկէ փոքրիկ մաս
մը ուտուելով՝ պարել , ազաղակել եւ
ծիծաղել կու տայ ամենէն զգաստ մար-
դուն՝ խելագարի մը սաստիկ գրգռում-
ներով , եւ վաղվառել , ցատկրտել կու
տայ ամենէն ծաղրելի կերպերով , զրեթէ
մէկ ժամ : Այս ժամանակին լրանալէն
ետքը պարտասու մը կը յաջորդէ , եւ
գրգռուած անձը կ'իյնայ կը քնանայ :
Երբ քանի մը ժամէն կ'արթննայ , եր-
բեք չյիշեր իր ըրած խենդութիւնները :

ՓԵՏՐՈՒԱՐ ԱՄԻՍԸ

Սիրուն աւանդովէպ ը , որ Թէմիզի
մշակպատ փերուն վրայ ծնունդ առած
է , հետեւեալը կը պատմէ .

Փետրուարը , իրերիտասարգութեանը ,
այսինքն աշխարհի սկզբնաւորութեանը ,
մոլեգին խաղամու մ'էր : Թէեւ միշտ կը
կորսնցունէր , բայց շարունակ կը շար-
ժէր թուղթերը :

Օր մը , երեք չորրորդ մասամբ կործանած , վերջին խաղ մը եւս սկսաւ իր սովորական խաղակիցներուն հետ , որոնք բնականաբար իր յունուար եւ մարտ դրացիներն էին :

Այս վերջինները շահեցան :

Ա՛լ զրամ չունենալով խաղի մէջ դնելու համար , խեղճ փետրուարը անոնց իւրաքանչիւրին մէջ մէկ օր սուսաւ : Եւ ահա թէ ինչու յունուար եւ մարտ երեսունըմէկ օր ունի , մինչ փետրուարը քսանըինը կամ քսանըութը , տարիներուն համեմատ :



ՁԱԽ ԿԱՄ ԱԶ ԱԶՔՈՎ ԱՆՁԻՆԻՔ

Դուք կա՛մ ձախ աչքով էք , կա՛մ աջ աչքով , կը գրէ Տր. Քզէքի : Տասնըհինգ անձերէն հազիւ մէկը հաւասար զօրութեամբ աչքեր ունի . Տասը անձերէն հազիւ մէկուն ձախ աչքը աջէն աւելի զօրաւոր է : Ընդհանրապէս զօրաւոր աջ ձեռք ունեցողները զօրաւոր աչք կ'ունենան : Ասոր պատճառը հա-

ւանօրէն այն է որ մարմնոյն աջ կողմի գործարանները աւելի շատ կը գործածուին : Օրինակի համար , որսորդը որ իր աջ բազուկը եւ աջ ուսը կը գործածէ իր հրացանը նետելու համար , եւ ուստի այս կերպով զանիկա կը զօրացնէ իր որսորդութեան գործին մէջ : Մերունի նաւապետները հեռադէան երկար ատեն գործածելէ ետքը կը զգան թէ իրենց աջ աչքը ձախէն շատ աւելի զօրաւոր է : Այս օրէնքը կը հաստատուի ականջարոյժներուն կատարած փորձերովն ալ : Եթէ հաւասար լսող ականջներ ունեցող անձ մը , երկար ատեն մէկ ականջը միւսէն աւելի գործածելու պատճառ ունի , այդ գործածուած ականջը շատ կը զօրանայ , եւ չգործածուած ականջը կը տկարանայ նոյն համեմատութեամբ :



Ձ Ի Ն

Կ'երեւայ թէ ձին դեռ անձանօթ կենդանի մ'է Պելժիական Քօնկօի մէկ

քանի գաւառներուն մէջ : Միսիօնար մը հետեւեալ կերպով կը պատմէ առաջին ձիուն ժամանումը Միւզիի բնիկներուն մէջ .

« Մեր տուրեւաւներու միջոցին , բնիկները միջնահամուրջին վրայ տեսած էին քննիչին ձին : Այս մարդիկ , շուարած , միւսները կանչեցին , էն վախկոտներուն թեւերէն բռնելով : Այն ատեն զարմացման աղաղակներ , ձեռքի բաղխումներ , շուրթերու շաջլււններ բարձրացան ի ականայդ խոշոր կենդանիին որ հանդարտօրէն խոտ կ'ուտէր : Ոմանք Եւրոպոյ փիղ կը կարծեն զայն : Ոչ , մեծ այծ մ'է , կ'ըսէ ուրիշ մը , եւ Եւրոպացիները պիտի ուտեն զայն : Ոչ ոք միտքէն կ'անցունէ թէ անոր վրայ կարելի է հեծնալ :

« Բայց ամենէն աւելի իրենց զարմանք պատճառող բանն էր ձիուն պոչը . կեղծ կը կարծէին զայն : Անոնց տարակոյսը փարատելու համար երկու ձեռքով բռնեցի պոչը եւ բոլոր ուժովս քաշեցի : Այն ատեն այդ վժվժացող ամբոխին մէջ մարելու չափ խնդուք մը

սկսաւ . բայց հակառակ իմ հրաւերիս ոչ ոք սիրտ ըրաւ իմ օրինակիս հետեւիլ : Սակայն ցեղապետ մը առաջարկեց գնել կենդանին՝ չորս այծի փոխարէն »

Արդարեւ այժը փոխանակութեան միակ դրամն է այդ կողմերը : Տեղապետ մը շատ հաւնած ըլլալով փոքր շոգենաւին որով Պելժերը եկած էին , ըլջօրէն հարցուց նաւապետին թէ քանի՞ այծ կ'ուզէր զայն իրեն ծախելու համար :

ԱՂԱՒԻՆԵՆԵՐԸ ԸՆՏԵՆԱՑՆԵՆ

Աղաւնիներն իրենց աղաւնոցը վարժեցնելու համար , պէտք է ասոնց թեւերուն ծայրերն իրարու կապել : Արտաքին ծայրէն զրեթէ երեք սանդի մէթր , քանի մը անգամ պիտի փաթթուին մէջ ընդ մէջ , եւ դերձանով իրարու լաւ պիտի կցուին , այնպէս որ դերձանը վար չկարենայ սահիլ : Ասիկայ աղաւնիներուն ամենեւին ցաւ չի պատ-

ձառեր , այլ միայն բարձր թռչելուն տրգելք կ'ըլլայ : Երկու օր կտքը կարելի է այս եղանակով կապուած աղաւնիները փակարանէն դուրս հանել , թռանց հետու թռչելու եւ կորսուելու վտանգի : Տասնըչորս օրէն զերձանը քակելու է . բայց ամենէն ապահովէ է սպասել որ աղաւնիները հաւկիթ ածեն կամ ձագ ունենան :



ԼԱՒԱԳՈՅՆ ԳՒՐԲԵՐԸ

Ասկից քանի մը տարի առաջ Փարիզեան օրագրող մը նորրնտիր Ակադեմական Պ. Ժիւլ Լըմէթր ուղղեց հետեւեալ հարցումը .

«Որո՞նք են այն 20 հատորները զորս պիտի ընտրէիք եթէ ստիպուած ըլլայիք ձեր կեանքին մնացեալ մասը անցունել մատենադարանի մը հետ որ միայն այդ 20 հատորները պարունակէր :»

Աւասիկ յոյժ հետաքրքրաշարժ այդ ցուցակը զոր պատրաստեց Պ. Լըմէթր .

1. Աստուածաշունչ . —
2. Հոմերոս . —

3. Էսքիլէս . —
4. Վիրգիլիոս . —
5. Տակիտոս . —
6. Նմանութիւն Յիսուսի . —
7. Տօն Քիչօդ . —
8. Ռապրլէ . —
9. Մոնթէնը . —
10. Հատոր մը Մոլիէպէն . —
- 11-12. Երկու հատոր Ռասինէն . —
13. Աբինօգաի բարոյագիտութիւնը . —
14. Վոլթէրի վէպերը . —
15. Լամաութինի բանաստեղծութեանց մէկ հատորը . —
- 16-17. Երկու հատոր Վիքթոր Հիւկօի բանաստեղծութիւններէն . —
18. Սլֆրէտտ սը Միւսէի թատերախաղները . —
- 19-20. Երկու հատոր Միլլէէն :



Բ Ե Կ Ո Ր Ն Ե Ր

Բրուտութիւնը ծանօթ էր Եգիպտացւոց Քրիստոսէ 2000 տարի առաջ :

Նորվէկիացիք 10րդ դարուն այցելած էին Ամբրիկա , 1492ին Գոլոմպոս գտաւ զայն :

Գետնախնձորն Սպանիացիք բերին Եւրոպա 16րդ դարուն :

Հոյսը վայրկեանի մը մէջ 300,000 քիլօմէթր ճամբայ կ'ընէ :

Առաջին հանրակառքը 1602ին Բարիզի մէջ գործածուեցաւ :

Երգեհոնը ծանօթ էր Քրիստոսէ 65 տարի առաջ :

Հեռաձայնը գտաւ Էտիսըն 1887ին :

Չայնը օդին մէջ 312 մէթր ճամբայ կ'ընէ մէկ վայրկեանի մէջ :

Աշխարհիս մէջ 2750 լեզու ու գաւառաբարբառ կը գանուին :

Օրը 4 միլիոն պողպատ գրիչ կ'ըսպառի աշխարհիս մէջ :

Աշխարհիս վրայ ամէն 2 վայրկեանին 3 մարդիկ կը մեռնին :

Փոթորիկը ժամը 60 քիլօմէթր կ'երթայ :

Միացեալ Նահանգներ ունէին 2 1/2 միլիոն բնակիչ 1776ին, այժմ 70 միլիոն :

Անգլիական լեզուն կը խօսին 100 միլիոն մարդիկ, Գերմաներէնը 70, Ռուսերէնը 67, Գաղղիերէնը 41, Սպաներէնը 40, Իտալերէնը 30 ու Բորթուկալերէնը 13 միլիոն մարդիկ :

Ամուսնական օրէնքն Աւստրիոյ մէջ կը թոյլատրէ որ 14 տարեկան պատանին 14 տարեկան աղջկան հետ ամուսնանայ, Գերմանիոյ մէջ այր 18 կին 14, Պէլճիգայի մէջ 18-15, Սպանիոյ մէջ 14-12, Բողոքականք 18-15, Բորթուկալ 14-12, Ռուսիա 18-16, Չուիցէրիկ 14-12 :

Կանանց ամուսնութիւնք կը կատարուին .

15—20	Տարեկան	100ին	14
20—25	»	»	52
25—30	»	»	18
30—35	»	»	15
35—40	»	»	3

40—45 Տարեկան 100ին 2
 45—50 » » $1\frac{1}{2}$
 50—55 » » $1\frac{1}{4}$
 60էն ետև 1000էն մէկ կին կ'ա-
 մուսնանայ :

Սողոմոնեան տաճարը կառուցուեցաւ
 1014 Ն. Ք. , $32\frac{1}{2}$ մէթրո երկայն էր ,
 11 լայն , 16 բարձր :

Եգիպտոսի մեծ բուրգը 162 մէթրո
 բարձր է. իւրաքանչիւր կողմի խարխիւր
 219 մէթրո լայն . քարերէն ոմանք 9
 մէթրո երկայն , 1 լայն եւ իրր 1 թանձր :

Պաալպէքի արեւի չաստուածուհւոյն
 տաճարը 18 մէթրո մեծ քարերով շին-
 սուած է . 5 մէթրո լայն եւ 7 թանձր .
 վեց սիւն ունի 22 մէթրո բարձր :

Բաբելոնի աշտարակը ութ յարկ ու-
 նէր եւ 204 մէթրո բարձր էր . խարխի-
 խի իւրաքանչիւր կողմ նոյնպէս 204
 մէթրո լայն էր :

Ամնահերկայն կամուրջն է Պրուքլինի
 եւ Նիւ-Եօրքի մէջի կախեալ կամուրջը,
 1675 մէթրո երկայն ծայր ի ծայր :

Աշխարհիս 451 միլիոն քրիստոնէից
 227 միլիոնը հոովմէադաւան են , 137
 միլիոնը աւետարանական եւ 87 միլիոնը
 յունադաւան եւ այլ արեւելեան քրիս-
 տոնեայք :

Մեծ-մարդերու ձեռագրերն հաւա-
 քողներ՝ Մ. Կլատտոյոնի գրած ոչ-անձ-
 նական նամակներէն իւրաքանչիւրը 25
 շիլլինի գնած են :

Սպանիա $17\frac{1}{2}$ միլիոն ժողովուրդ
 ունի , ասոնցմէ 11 միլիոնը կարգալ-
 գրել չի գիտեր : Մնացածին ալ կէսէն
 աւելին գրել չի գիտեր :

Ժողովրդին թիւին հետ բաղդատե-
 լով , Բրիտանական կղզիներու մէջ ա-
 ւելի գործաւորուհիներ կան , քան ուրիշ
 երկրի մէջ . Ճարտարուեստ դասակար-
 գին հարիւրին 15ը կ'իներ են :

Անգլիոյ ժողովուրդը տարին 152 միլիոն սթէրլինէ աւելի ոգելից ըմպելիքի կուտայ :

Դէպ ի Հիւսիւսային Բեւեռ արշաւող Նորվեկիացի Տոքթ. Նանգէն , իր վերջին ճամբորդութեան անդլ. նկարագրութեանն համար 10,000 անգլ. ոսկի ընդունած է :

Միպերիական երկաթուղին եթէ լրանայ , աշխարհիս շուրջը 40 օրէն պիտի ճամբորդուի :

Անգլիացի մականուէններուն մեծամասնութիւնը Սմիթ՝, Ճօնզ , Ուրլ-երմզ , Թէյլըր եւ Պրատն բառերէ կը բաղկանայ :

Ճարմնի մէջ 40,000ի մօտ դպրոցներ կան . շէնքերը կանոնաւոր են . երկրին օրէնքով կրթութիւնն ստիպողական է : Այս տեսակէտով Ճարմն նոյն իսկ Եւրոպեան քանի մը երկիրներէն աւելի յառաջացած է :

Աշխարհիս ամենէն մեծ գործարանը՝ Գերմանիոյ հանրածանօթ Քրուբը՝ 25 հազարի չափ գործաւորներ կ'աշխատցնէ :

Աշխարհիս վրայ 11 միլիոն Հրեայ կայ , որոց գրէթէ կէսը Ռուսիոյ մէջ է :

Սանտուիչ կղզիներու երիտասարդը կը փափաքի որ իր «հարսնցու» օրիորդը մարմնով ծանր կ'ընէ : Չինացին կ'ուզէ որ պղտիկ ոտք մը ունենայ եւ սեւ ներկուած ակռաներ : Ափրիկեցի վայրենի-ցեղապեան ալ կը սիրէ որ իր կնոջ առջևի ակռաները սղոցի բերնի մը պէս խարտոցուած ըլլան : (Մեր մէջ ալ կ'ուզուի որ հարսնցուն փարալը ըլլայ : Ճաշակի խնդիր) :

Մոնթէ-Քարլօի մէջ անձնասպանութիւնք տարին 50ի կը հասնին :

Լոնտոնի մէջ 14,000ի չափ Իտալացի կան , որոց 2000ը պաղպաղակ չինող են , 1000ը փողոցի-նուագարան (լանթէրնա) զարնողներ , մնացած 11,000ը

գլխաւորաբար են գտնուել արձանիկներ շինող-ծախող արուեստագէտներու «մօ-
տէլ»ցու, նկարիչ, քանդակագործ,
դասատու, խոհարար, սպասաւոր, պան-
դոկապետ, ճաշարանապետ, եւ այլն :

Սուզակները (տալիրճ) հիմակ հեռա-
խօս (թէլէֆօն) կը գործածեն, ջրէն վեր
զանուող մարդոց հետ խորհրդակցելու
համար :

Դանուբ գետին մէջ անցած երկիր-
ներուն մէջ 52 լեզուներ եւ գաւառա-
բարբառներ կը խօսուին :

Պելժերն եւ Իրլանտացիք ամենէն
չատ գետնախնձոր կ'ուտեն :

Ամուսնացողն ամուրիէն, աշխատա-
ւորը յոյլէն աւելի երկարակեաց է :

Եւրոպայի մէջ 4200 տեսակ ծաղիկ
կը մշակուի . կ'ըսուի թէ ասոնց 100ին
10 միայն հոտաւէտ է :

Ժողովրդին թիւին հետ համեմատե-
լով, Իտալիա ամէնէն շատ թատրոն
ուէրի, (եւ ամէնէն շատ խաղամոլ, որք
վիճակահանութենէ բախտ կ'սպասեն
օրն ի բուն) :

Սպանիոյ վրայ, մէկ տարուան մէջ
3000 ժամ արեւ կ'ընէ, Անգլիոյ վրայ
միայն 1400 ժամ, այն ալ շատ անդամ
աղօտ, տկար լոյս մը :

Եանքիներն եւ Ալպիոնի զաւակներն
ուրիշ ազգերէ աւելի բարձրահասակ են :

Չինաստանի մէջ 11 հատ օրաթերթ
կայ ընդ ամենայն . մին Փրանսերէն,
մին անգլիերէն, ինն չինարէն :

Գահնակներու մեծ մասը Գերմանիոյ
մէջ կը շինուի :

Գերմանիայէ տարին զրեթէ 100,000
գեղձանիկ (զանարեա գուշը) Մ. Նա-
հանգները կը զրկուին :

Ամէնէն շատ սուրճ արտադրող եւ արտածող երկիրն է Պրագիլիա :

Ֆրանսայի մէկ միլիոնաւէրին զէմ չորս միլիոնաւէր կը գանուի Անգլիոյ մէջ :

Աշխարհի վրայ հինգ միլիոն հին նամակադրոշմ հաւաքողներ կան :

Ամբողջ Ռուս Տէրութեան մէջ 60 տեսակ լեզու կը խօսուի :

Ժողովրդին թիւին հետ համեմատելով, Ռուսիոյ, Սպանիոյ եւ Եգիպտոսի մէջ աւելի շատ կոյրեր կան :

Մէկ տարուան մէջ 40 միլիոնի մօտ գեղեցիկ փետրաւոր թռչուններ կ'սպաննուին, կ'իներու գլխարկները վարդաբելու համար :

Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ Ն Ե Ր



Դիւաէ', լսէ', լռէ' . շատ հարցո՛ւր , քիչ գատողութիւն ըրէ :

Երբ գրգռուած ես , սուսնձնացիր :

Այլոց քով հնար եղածին չափ ուրախ , զուարթ եղիր , թէ զուարթութիւն ի՛նչպէս ուրիշները զէպի քեզի քաշէ , հնար չէ բացատրել :

Խոսամունքներդ չափաւորէ , սակայն հակառակ ամէն արդելքի, կատարէ խոսամունքդ :

Չճանչցած մարդոցդ խոստումներուն վրայ բնաւ արժէք մի գներ :

Սէնաքա կ'ըսէ . Ջանտ' որ ձիրքերովդ զքեզ նշանաւոր ընես , կամ , ըստ Աւետարանի , գործածէ տաղանդդ :

Այլոց զքեզ դատապարտելը թող
անձնաքննութեան մէջ զքեզ , բայց ոչ
յուսահատութեան :

Նա որ ինքզինք առանց ո՛ր եւ է
թերութեանց կը նկատէ , կամ ապուշ
է , եւ կամ կեղծաւոր , բնաւ վստահե-
լու չէ անոր :

Զուարճամտութիւնը կը զտէ միտ-
քը , ձանձրոյթը կը խանդարէ զայն ,
յոգնութիւնը կը մաշեցունէ , վսեմը զայն
վարվռուն կ'ընէ :

Բարեկամութիւնը բոյս մ'է , որ
չոր եղանակին իսկ կանանչ կը մնայ :

Հազիւ թէ մարդս թշուառ կ'ըլ-
լայ , եթէ շարունակ թշուառութեան
վրայ չիտրնի :

Ան որ բարեկամութեան մէջ
բնաւ չահնկալեր խափուիլ , չէ կարող
երբէք բարեկամ ըլլալ :

Մի վստահիր լաւատեսին , ոչ ալ
յուրեստիւն , մանաւանդ անոր համար որ
ամէն բանի համար անտարբեր է :

Ծոյլերը օգտակար կ'ըլլան միայն
երբ մեռնին , քանզի ժիրերուն տեղ կը
բանան :

Աշխարհիս մէջ ի՛նչ ալ որ ընենք ,
լոկ յոգնութիւն է . երանի անոր որ
չյոգնիր :

Անզգոյշն է՛ն շատ յիմարութիւն-
տերը կը գործէ , երկչոտն՝ է՛ն ծանրա-
կշիռները :

Բարկութեամբ գործի սկսիլ , կը
նշանակէ ալեկոծեալ ծովը ելլել :

Թշուառութեան տուած դասը
շուտ կը մոռնանք երբ ուրիշ մը չյա-
ջորդէ անոր . ուստի թշուառութիւնք
կը կրկնուին միշտ :

Բարիին կը հետեւինք այլոց հետ

մրցելու համար , իսկ չարին , քանզի մեր բնութիւնն ապականեալ է . ամօթ-խածութիւնը սակայն մեզ կը կապէ , բայց օրինակը այս կապը կը քակէ :

Բարի խիղճ մը լաւագոյն է քան երկու վկայ : Նա աղբիւր է ծարուածին , գաւազան դողացողին , հովանի արեւին կիզիչ ճառագայթին տակ եւ կա-կուղ բարձ՝ մահուան ժամուան :

Ձիրքերնիս լուծեան մէջ կը կազմակերպուին , իսկ բնութիւննիս աշխարհի փոթորիկներուն մէջ :

Առանց ընդունելու կը փթանայ միտք , եւ սիրտ կը խստանայ . խորհուրդք եւ զգացմունք պէտք է սնունդ ստանան , եթէ ոչ կը խանգարին :

Աղջկան մը արգուղարդն իր սրբաին հայելին եւ իր անմեղութեան ջերմաչափն է :

Շատ մը ծուռ ու սխալ քայլեր

առնելէ ետեւ , ի վերջոյ կը հասնինք ճշմարտութեան :

Ծառան նախ կ'ըսէ . տեղափոխուելու , տեղափոխուելու , տեղափոխուելու , տեղափոխուելու . մեր տունը , մեր կառքը , մեր ձիերը . ի վերջոյ՝ տուն , կառք , ձիերս եւ յայնժամ կ'ըլլայ տան օրինակը եւ վստահալի մի անգամ :

Ջանա՛ որ տանդ մէջ ո՛ր եւ է բան պակասած ատեն յետին աստիճան չխռովիս ու չյուսահատիս . Ջանա՛ առանց անոր ալ գոհ եւ երջանիկ ըլլալ :

Ամէն տեսակ շռայլութիւն կ'ապականէ բարք ու ճաշակ :

Հաճոյքներու չափաւորութեան մէջ գերազանց վեհութիւն մը կայ :

Ժուժկալութիւնը՝ որ առաքինութեանէ յառաջ չի դար , անուանը չէ արժանի :

Ձքաւորութիւնը կիրքերուն մահ
կը պատճառէ , հարստութիւնը կը սնու-
ցանէ զանոնք :

Վախը աչքերը միշտ բաց պա-
հել կուտայ , սէրը գոցել կուտայ :

Ինչ որ մեր երջանկութեան հա-
մար մեզի արուած է , կրից յագեցման
գործածելով կը փճացունենք :

Գեղեցիկ զգացումներ զիմագը-
ծին գեղեցկութիւն կուտան . ինչ սի-
րուն կերպարանք կ'ստանայ զէմքը ա-
մօթխածութեամբ , անմեղութեամբ ,
ակնածութեամբ , զթասրտութեամբ եւ
այլն :

Հաճոյից ետեւէն այնքան մի
իյնար որ արժէքնին չկորսնցնեն : Հո-
լանտացիք կինամօնի տունկերն արմա-
տէն կը խլեն , որ կինամօնի զինը միշտ
բարձր մնայ :

Նա որ նախ ո՛չ եւ ապա այո՛

ըսաւ , չէ այնքան արժան չնորհակալու-
թեան :

Հանդերձին նայելով հիւրն ըն-
դունելութիւն կը գտնէ , բայց անոր ի-
մաստութեան համեմատ կ'ըլլայ հրա-
ժեշտը :

Անձնասէրը այն է որ զրացիին
տունը կրակի կուտայ , որպէս զի քանի
մը հաւկիթ եփէ իրեն համար :

Աղքատաց ձեռքով մեր ստաց-
ուածք երկինք կը փոխադրուին :

Աշխատէ՛ իբր թէ յաւիտեան
պիտի ապրիս , ապրէ՛ , իբր թէ ամէն
ժամ պիտի մեռնիս :

Շատերը իմաստուն պիտի ըլլային
եթէ չկարծէին թէ արդէն շատ իմաս-
տուն են :

Փոքրիկ նեղութիւն մը խելքերնիս
զլխունուս կը փախցունէ , իսկ մեծ նե-

զուժիւն մը խելքերնիս գլուխնիս կը բերէ :

Ոսկիդ եւ արծաթդ լաւ մը կը քննես ուրիշին տալէ առաջ , ինչո՞ւ խօսքերդ չես քններ խօսելէ առաջ :

Հաւագոյն է առիւծին բարկութիւնը քան բորենիին բարեկամութիւնը :

Զգուշացո՛ւր զաւակդ քաղցրահամ պտուղներէն, դառնահամներէն նա ինքնին կը զգուշանայ :

Յիմարը ուղտին վրայ է հեծած եւ միեւնոյն ատեն անոր սուպառը կը ծաղրէ :

Մի՛ ցաներ կանեփի հունտ եթէ նըպատակդ է բամպակ հնձել :

Ատուած վայրի պտուղ կը պարբեւէ մեզ երբ ընտանի պտուղներէ զրկէ զմեզ :

Գտնուած պայտի մը ուրախութեան

դէմ զայ կորսուած ձիւս մը տրամուծիւնը :

Հարուսաներուն իրենց հարստութիւնը չարաչար գործածելն ազքատաց մխիթարութիւն է :

Սորվինք ամէն բան սիրոյ կողմէն քննել, որով ատելութիւն ջնջուի սրտէն :

Նա որ այլոց թերութեամբ կը զբօսնու , շատ գէշ կ'անցունէ ժամանակը :

Եթէ սովոր ես շատ անգամ հայելին նայիլ , ջանա՛ որ հոն միշտ անկեղծ եւ համեստ դէմք մը տեսնես :

Ամէն բանի լաւ կողմը տեսնել լաւագոյն է քան 1000 սօկիի ժառանգութիւն մը :

Զարբ բարիով փոխարինէ , նման խեցեմորթին , որ զինք ջախջախողին մարգարիտ կուտայ , ինչպէս ծառը որ զինք քարկոծողին առջին քաղցրահամ

պտուղներ կը թափէ , ինչպէս սանդալի
ծառը որ զինք յերկիր տապալող կա-
ցինը անուշահոտ կ'ընէ :

Մարդկային աչք իրաց միշտ բարի
կողմը կը փնտռեն :

Այն առաքինութիւն , որ շարունակ
հսկողութեան տակ գտնուելէ յառաջ
կուգայ , արժանի իսկ չէ առաքինու-
թիւն կոչուելու :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոմարական գիտելիք	3
Խաւարմունք	7
Համառօտագրութիւն	8
Աղիւսակ շարժական մասանց աւուրց	9
Հին եւ նոր Տոմար	11
Ողջերթ առ ճին դար (Բանաստեղծ.)	17
Օրացոյց	19
Ժամանակագրութիւնք	87
Յիշատակարան	90

Յաւելում

Օսմանեան կայսրութիւն	99
Աւագանի Կայսերական Պալատան	102
Նախարարք Բ. Դրան	102
Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքիս	103

Հոգեւոր իշխանութիւնք

Հայրապետութիւն Հայոց	106
Պատրիարքութիւն Ս. Երուսաղէմի	106

Պատրիարքութիւն Կոստանդնուպոլսոյ	107
Հռովմէական Հայ հասարակութիւն	
Բողոքական ժողովուրդ Թուրքիոյ	
Վիճակագրութիւն Աւետարանականաց ի Թուրքիա	113
Արեւելեան Որբանոցի յօրեւանը	117
25րդ ամադարձ Արեւեան Որբանոցին (Բաւաստեղծութիւն)	135

Առողջապահական

Մաքուր օդին արժէքը	159
Մանուկները քանի՛ ժամ քնանալու են	131
Յրտառութեան պատճառները	133
Հիւժախտաւորք	135
Լուրբիա կերէք	138
Տաք ջրով եւ բոցով այրածներ	140
Պտուղ	142
Զգուշացէք հազակէ	143
Գարեակ այքին մէջ	145
Կոշտերու դարման	146
Մարմնի ճմրում	147
Կտրուածներ	148

Առողջաբանական Բերական

30 հրահանգ առողջ, երջանիկ եւ երկար

Կեանք անցունելու համար	149
30 հրահանգ երախայից համար	156

Ընթացական

28 հրահանգ ծնողաց եւ զաւակաց համար	172
41 հրահանգ օրիորդաց համար	187
Ինչո՞ւ ամուսինը տունէն չախրթիր	204

Հաւարութիւն

211

Հարցերու պատասխաններ

225

Պատմական

Երբ մտը մարի մարդս կը մեռնի	242
Ազահուծիւն՝ արմատ ամէն չարեաց	254
Զոյգ մը կօշիկ օղիի շիշին մէջ	258
Բարոյական մանրավէպեր	260

Զուարեակիք

272

Միւէստիր պիր իլամ	281
-----------------------------	-----

Զանգակ

Ամուսնալուծութիւն դիւրացած	288
Երկու կերպ ամուսնութիւն	288
Ամենահարուստ խաշնատէրը	289
Խնձոր կերէք	289

Զինական խոհանոց	289
Ի՞նչ է խնդացնող կոչուած բոյսը	290
Փետրուար ամիսը	291
Զախ կամ աչ աչքով անձինք	292
Զին	293
Աղաւնիները ընտելացնել	295
Լաւագոյն գիրքերը	256
Բեկորներ	297
Մարզախօցիք	307



①



6483

2013

« Ազգային գրադարան



Handwritten initials

NL0031979

ՆՈՒՆՐ

ԱՐԵՒԷ՛, ՆԱՆ

ՈՐԲԱՆՈՅԻՆ